«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան 2024

# ՆԱԽԱԲԱՆ

«Արարատի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԱՊԲՔ, քոլեջ, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմում-հայտի համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգվում և իրականացվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից, որոնցից մեկն՝ ուսանող է:

Հավատարմագրման գործընթացը ֆինանսավորել է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (այսուհետ՝ ԿԳՄՍ) նախարարությունը:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձնահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է ԱՊԲՔ–ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԱԽԱԲԱՆ ..... 2

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ ..... 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ..... 4

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ..... 12

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ ..... 12

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ..... 16

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ..... 16

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ..... 18

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ..... 22

III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ..... 32

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ..... 39

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ ..... 44

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ..... 50

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ ..... 53

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ..... 58

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ..... 61

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ..... 65

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ..... 70

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ..... 71

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ ..... 71

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ..... 73

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ ..... 75

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ..... 77

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ..... 77

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ..... 78

# ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

## ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ ԱՊԲՔ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնում է առաջին անգամ, ինչպես նաև գտնվում է որակի ապահովման մշակույթի ձևավորման փուլում: Քոլեջը բժշկական կրթության ոլորտում միջին մասնագիտական կրթական ծրագրեր է իրականացնում ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) 5-րդ մակարդակին համահունչ:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել նաև, որ քոլեջը տարածաշրջանում միակ միջին բժշկական մասնագետներ պատրաստող հաստատությունն է, այս հանգամանքը շեշտադրում է քոլեջի որդեգրած առաքելությունը և կարևոր դերակատարությունը տարածաշրջանում: ԱՊԲՔ-ի հիմնական առաքելությունն է ապահովել յուրաքանչյուր ուսանողի անհատական անձնային և մասնագիտական գիտելիքներով, կարողություններով և հմտություններով: Կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում, տարածաշրջանի կրթական, որակի ազգային շրջանակներին (ՈԱՇ), պետական կրթական չափորոշիչներին համապատասխանող, աշխատաշուկայի պահանջները բավարարող միջին մասնագիտական կրթությամբ, առողջապահության ոլորտի, որակյալ, մրցունակ մասնագետներ պատրաստել, ովքեր իրենց ստացած կրթությամբ կապահովեն բարեկեցիկ և արժանապատիվ ապագա:

Փորձագիտական խումբը դրական է համարում 2020-2023թթ. ՌԾ-ում քոլեջի առաքելության սահմանման հստակեցումը և համապատասխանեցումը իր գործունեության ոլորտին, միևնույն ժամանակ հարկ է ընդգծել, որ քոլեջը հստակ գիտակցում է տարածաշրջանի առողջապահական ոլորտում իր կարևոր դերակատարությունը՝ ստանձնելով պատասխանատվություն պատրաստելու որակյալ և մրցունակ կադրեր: Քոլեջն իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագրեր՝ «Քույրական գործ», «Մանկաբարձական գործ», «Ատամնատեխնիկական գործ», «Դեղագործություն», «Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտություններով, առաջնորդվելով պետական կրթական չափորոշիչներով: Քոլեջը կրթական ծրագրերի իրականացումը փոխկապակցում է տարածաշրջանի աշխատաշուկայի և շահակիցների կարիքների հետ, այսպիսով 2019թ-ից ներդրել է հեռակա ուսուցմամբ «Դեղագործություն», իսկ 2021թ.-ից առկա ուսուցմամբ «Բուժական կոսմետոլոգիա» կրթական ծրագրերը:

Հարկ է նշել, որ ՊԿՉ-ներով սահմանված ուսումնառության արդյունքները քոլեջը ապահովում է առավելապես գործընկերների հետ ռեսուրսների համատեղ կիրառությամբ, իսկ քոլեջ-գործատու ակտիվ համագործակցային միջավայրը նպաստում է ուսանողների մասնագիտական հմտությունների և փորձառության ձևավորմանը անմիջականորեն պրակտիկայում, որը քոլեջի ուժեղ կողմերից մեկն է: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ գործատուների և գործընկերների կողմից անհրաժեշտ ռեսուրսների տրամադրումը

քոլեջին լիովին արդարացնում է նրանց սպասումները, հանձինս բանիմաց մասնագետների պատրաստության, այս մասին է վկայում նաև քոլեջի շրջանավարտների պահանջվածությունը և մասնագիտությամբ աշխատանքի անցնելու բարձր ցուցանիշները:

Կրթական ծրագրերի իրականացման մեջ իրենց կարևոր դերակատարությունը ունեն պրակտիկ ոլորտից ներգրավված բարձր որակավորում ունեցող դասախոսական անձնակազմը, ովքեր փոխկապակցում են պրակտիկ ոլորտը ուսումնառության հետ, նպաստում են ուսանողների մասնագիտական կլինիկական մտածողության ձևավորմանը, իրավիճակային խնդիրների և վերլուծական հանձնարարականների միջոցով: Քոլեջը հետամուտ է դասավանդման և ուսումնառության մեթոդների մշտադիտարկմանը դասալսումների միջոցով, ուշադրություն հատկացնելով ակտիվ ուսուցման մեթոդների կիրառությանը դասավանդողների կողմից, սակայն այս քայլերը անհրաժեշտ է ամրապնդել դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության միասնական մոտեցումների և քաղաքականության ներդրմամբ: Փորձագիտական խումբը նաև ընդգծում է գնահատման չափանիշների մշակման և տեղայնացման անհրաժեշտությունը, յուրաքանչյուր մոդուլի շրջանակներում, որը թույլ կտա բարձրացնել գնահատման համակարգի արժանահավատությունը:

Բարձ գնահատելով քոլեջում ՄԿԾ-ների իրականացումը, փորձագիտական խումբը անհարժեշտ է համարում քոլեջի կողմից ՄԿԾ վերջնարդյունքների մշակումը, փոխկապակցելով ինչպես առարկայական/մոդուլային ուսումնառության արդյունքների հետ, այնպես էլ դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների հետ: Այս գործիքակազմի մշակումը թույլ կտա քոլեջին առավել արդյունավետ կառավարել և մշտադիտարկել կրթական ծրագրերի ընթացքը, նպաստելով աշխատաշուկայի փոփոխվող կարիքներին համապատասխան վերջիններիս շարունակական բարելավմանը: Այս համատեքստում կարևոր է նաև նմանատիպ կրթական ծրագրերի հետ համեմատական վերլուծությունների /բենչմարքինգի/ իրականացումը՝ դրական փորձի տեղայնացման և փորձի փոխանակման նպատակով:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը վերջին տարիներին որոշակիորեն բարելավել է ՄԿԾ իրականացման համար անհրաժեշտ կրթական միջավայրը, այնուամենայնիվ դեռևս առկա է որոշ ենթակառուցվածքների և ռեսուրսների համալրման անհրաժեշտություն: Փորձագիտական խումբը ընդգծում է նաև այն իրողությունը, որ քոլեջի ֆինանսական մուտքերը սահմանափակված են միայն ուսման վարձավճարներով, որը հնարավորություն չի ընձեռում քոլեջին մեծ խնայողություններ կատարել, այս տեսանկյունից ֆինանսական միջոցների դիվերսիֆիկացիան՝ այլընտրանքային աղբյուրների ներգրվմամբ, կարևոր ռազմավարական նշանակություն ունի քոլեջի նյութատեխնիկական բազայի համալրման, արդիականացման և կրթական ծրագրերի շարունակականության ապահովման համար: Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում ֆինանսական ռեսուրսների և ռազմավարական նպատակների փոխկապակցման մեխանիզմների բացակայությունը, որը կարող է հանգեցնել ոչ արդյունավետ ֆինանսատնտեսական գործունեության, այս համատեքստում ֆինանսների բաշխման քաղաքականության մշակումը և ներդնումը քոլեջին թույլ կտա համաչափ զարգացնել իր ռազմավարական ոլորտները:

Անդրադառնալով ռազմավարական ծրագրին, փորձագիտական խումբը ընդգծում է 2023-2028 ՌԾ-ում ռազմավարական պլանավորման գործիքակազմի առավել նպատակային կիրառությունը ի տարբերություն նախորդ 2018-2023 ՌԶԾ-ի, այնուամենայնիվ ՌԾ-ը, որպես երկարաժամկետ պլանավորման փաստաթուղթ դեռևս չի նպաստում քոլեջի կառավարման գործընթացների լավարկմանը, մասնավորպես մտահոգիչ է, որ ՌԾ-ում բացակայում են, ինչպես կառավարման, այնպես էլ որակի ապահովման համակարգերի բարելավմանը միտված նպատակները:

Փորձագիտական խումբը նաև շեշտադրում է կառավարման համակարգում տեղ գտած դրական փոփոխությունները, որը փոխկապակցված է ՈԱ մեխանիզմների ներդրման դրական ազդեցությունների հետ, սակայն քոլեջում ՈԱ մշակույթը դեռևս գտնվում է ձևավորման փուլում է: Մյուս կողմից կառավարման կառուցվածքային գծապատկերը ցույց է տալիս կենտրոնացված կառավարման համակարգ, գրեթե բոլոր ստորաբաժանումները (բաժինները) ուղիղ ենթակայություն ունեն տնօրենին, որը հանգեցնում է հորիզոնական կապերի թույլ արտահայտմանը և նվազեցնում է կառավարման արդյունավետությունը: Հարկ է նշել կառավարման ապակենտրոնացման և գործառույթների հստակեցման անհրաժեշտությունը, որը թույլ կտա քոլեջին արդյունավետ բաշխել իր մարդկային ռեսուրսները, բարձրացնել կառավարման արդյունավետությունը բոլոր գործընթացներում: Առանձնակի ուշադրության է արժանի Որակի ապահովման պատասխանատուի (ստորաբաժանման) աշխատանքների և դերակատարության հստակեցումը, որպես կառավարման արդյունավետությունը գնահատող օղակ, ապահովելով օբյեկտիվ և անաչառ ուսումնասիրություններ իրականացնելու համար անհրաժեշտ գործառնական կապեր և միջավայր:

Քոլեջում որակի ապահովումը հիմնականում փոխկապակցվում է կրթության որակի հետ, այս տեսանկյունից քոլեջին հաջողվել է արձանագրել դրական առաջընթաց, սակայն այս փորձը անհրաժեշտ է տարածել նաև մյուս գործընթացների վրա: Մասնավորապես ՈԱ գործընթացները չեն անդրադառնում կառավարման արդյունավետությանը, տեսանելի չէ ՊԻԳԲ շրջափուլի ապահովումը ինստիտուցիոնալ բոլոր գործընթացներում, այս բոլորը հանգեցնում է փաստաթղթային վարչարարության տարերային իրականացմանը, բազմաթիվ փաստաթղթեր կիրառական չեն կամ չեն համապատասխանում իրենց իրավանորմատիվային նշանակությանը, որը կարող է բացասական անդրադառնալ բոլոր գործընթացների կառավարման վրա: ՈԱ գործընթացներում ուշադրությունից դուրս են երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորման փաստաթղթերի, ինչպես նաև պլանավորման և հաշվետվողականության մեխանիզմների փոխկապակցման և հաշվետվությունների վերլուծական բաղադրիչի կիրառության մշտադիտարկումը և գնահատումը: Դրական է, որ քոլեջին հաջողվել է ապահովել ուսանողների և դասավանդողների շրջանում իրականացվող հարցումների պարբերականությունը, սակայն հարկ է ընդգծել, որ կիրառվող գնահատման գործիքակազմը դեռևս խիստ սահմանափակ է և չի տարածվում ինստիտուցիոնալ գործընթացների վրա, կիրառվող հարցարանները չեն նպաստում կարիքների վեր հանմանը, իսկ վերլուծական գործիքակազմը դեռևս թույլ է կիրառվում հանգեցնելով արդյունքների մասնակի վերլուծության: Ընդհանուր առմամբ բացակայում են գործընթացների մշտադիտարկման և

արդյունավետության գնահատման մեխանիզմները, այս բոլորը խոչընդոտում է որակի ապահովման սկզբունքով տվյալահենք որոշումների կայացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջի զարգացումը խթանող մի շարք քայլերի իրականացումը, ինչպիսիք են կառավարման կոլեգիալ մարմիններում ներքին և արտաքին շահակիցների ներգրավման կառուցակարգերի ներդնումը, դիմորդների հավաքագրման մեխանիզմների արդյունավետ կիրառությունը, սոցիալ-հասարակական նշանակության աշխատանքներում ուսանողների և դասախոսների ակտիվ մասնակցությունը, ուսանողների համար մասնագիտական լրացուցիչ գիտելիքների և խորհրդատվությունների ապահովումը, որտեղ ներգրավված են նաև գործատուները, այս բոլորը նպաստում է կրթության արդյունավետ կազմակերպմանը և ուսանողակենտրոն միջավայրի ձևավորմանը: Այդուհանդերձ, քոլեջում դեռևս լիարժեք ապահովված չէ ՈՒԽ-ի ինքնավարությունը, ինչը հանգեցնում է վերջինիս դերակատարության նվազեցմանը, որպես ուսանողների իրավունքների պաշտպանության մարմին: Քոլեջում նաև թույլ են կիրառվում հետազոտության և ուսումնառության փոխկապակցման մեխանիզմները, հետազոտական աշխատանքների իրականացումը հստակ կանոնակարգված չէ ընթացակարգերով: Կրթական ծրագրերի շարունակական զարգացման/բարելավման տեսանկյունից կարևոր է հետազոտության արժևորումը ՌԾ-ում, սահմանելով այն որպես նպատակ՝ հետազոտության և ուսումնառության փոխկապակցման գործուն մեխանիզմների ներդրմամբ: Քոլեջի հետազոտությանը միտված գործընթացները չեն խթանում և խրախուսում դասախոսների ներգրավումը ուսանողների հետ համատեղ հետազոտական աշխատանքներում, անհրաժեշտ է դեղագործություն ՄԿԾ-ում առկա դրական փորձը տարածել նաև մյուս կրթական ծրագրերում:

Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի հասարակական պատասխանատվության դրսևորումը, որը արտահայտվում է գիտելիքների և արժեքների փոխանցմամբ հասարակության տարբեր օղակներին, ուսանողական համակազմի ակտիվ ներգրավմամբ, այս բոլորը նպաստում է քոլեջի հեղինակության բարձրացմանը տարածաշրջանում: Այնուամենայնիվ, քոլեջի կայքեջի բացակայությունը սահմանափակում է իր մասին տեղեկատվության տարածումը և ինստիտուցիոնալ գործընթացների վերաբերյալ օբյեկտիվ և թարմացված տեղեկատվության հրապարակումը և այն հասանելի դարձնելը շահակիցների ավելի լայն շրջանակների համար:

Փորձագիտական խումբը բարձր է գնահատում քոլեջի ձևավորած արտաքին կապերը և արդյունավետ համագործակցությունը տարածաշրջանի և հանրապետության ոլորտային գործընկերների և գործատուների հետ, այդուհանդերձ կայքեջի և արտաքին կապերի հաստատման քաղաքականության և ընթացակարգերի բացակայությունը, կարող է խոչընդոտել քոլեջի կողմից արտաքին կապերի հետագա ընդլայնմանը ինչպես հանրապետությունում այնպես էլ միջազգային մակարդակում: Միջազգայնացման հեռանկարում քոլեջը պետք է անհրաժեշտ ուշադրություն հատկացնի շահակիցների օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը, այդ նպատակով ներդնելով գործուն մեխանիզմներ, որը կխթանի ուսանողների և դասախոսների շարժունության ծրագրերում ներգրավվելու հնարավորությունները:

**Հաստատության ուժեղ կողմերն են.**

1. Տարածաշրջանում կարևոր առաքելության իրականացումը՝ առողջապահական ոլորտի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան որակյալ մասնագետների պատրաստմամբ:
2. Արհեստավարժ դասախոսական և ուսումնաօժանդակ կազմը՝ պրակտիկ ոլորտի, բժիշկ-դասախոսների ներգրավմամբ:
3. Համագործակցության շրջանակում գործընկերների ռեսուրսային բազայի ամբողջական օգտագործումը փոխկապակցելով ուսումնառությունը պրակտիկ ոլորտի հետ:
4. Մասնագիտական կողմնորոշմանն ու կարիերայի ուղղորդմանն ուղղված քոլեջի կողմից իրականացվող հստակ քաղաքականությունը:
5. Դիմորդների հավաքագրման գործող հստակ մեխանիզմների կիրառումը:
6. Շրջանավարտների մեծ պահանջարկը տարածաշրջանում:
7. Ուսանողների ակտիվ մասնակցությամբ հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման մեխանիզմների առկայությունը:
8. Տարածաշրջանում գործընկերային կապերի լայն շրջանակը:

**Հաստատության թույլ կողմերն են.**

1. Ռազմավարական կառավարման և պլանավորման մշակույթի ձևավորման փուլում լինելը:
2. Ռազմավարական ծրագրի արդյունքների գնահատման ցուցանիշների քանակական և որակական ցուցիչների բացակայությունը:
3. Հետազոտական/վերլուծական և ուսումնական գործընթացների փոխկապակցվածության միասնական համակարգի բացակայությունը:
4. Դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի համար խրախուսման մեխանիզմների բացակայությունը:
5. Այլընտրանքային ֆինանսական մուտքերի բացակայությունը:
6. Պաշտոնական կայքէջի բացակայություն և արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման թույլ մեխանիզմները:
7. Հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի թույլ արտահայտումը:
8. Որակի ապահովման համակարգի ձևավորման փուլում լինելը:
9. Կառավարման և որակի ապահովման գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի ամբողջական չլինելը և մշտադիտարկման մեխանիզմների թույլ իրականացումը:

**Հիմնական խորհրդատվություններ.**

**Առաքելությունը և նպատակները**

1. Վերանայել քոլեջի ՌԾ-ն, հստակեցնել ռազմավարական առաջնահերթությունները, ոլորտային ուղղությունները փոխկապակցելով նպատակներն ու խնդիրները:
2. Վերանայել ՌԾ պլան ժամանակացույցը՝ սահմանելով հստակ պատասխանատուներ, ժամկետներ, կատարման ռեսուրսները, հաշվետվողականության ձևը:

3. Մշակել և սահմանել ՌԾ նպատակների համապատասխան արդյունքների գնահատման իրատեսական և չափելի քանակական և որակական ցուցիչներ, որոնք կարտահայտեն նպատակների ձեռք բերման աստիճանը:
4. Մշակել ՌԾ նպատակներում շահակիցների կարիքների արտահայտման գործուն մեխանիզմներ:

**Կառավարումն ու վարչարարությունը**

5. Համապատասխանեցնել ստորաբաժանումների կարճաժամկետ պլանավորման փաստաթղթերը ՌԾ երկարաժամկետ պլանի հետ, սահմանելով ակնկալվող միջանկյալ արդյունքներ և դրանց գնահատման ցուցանիշներ՝ ուշադրություն դարձնելով արդյունքի ձեռք բերման աստիճանի քանակական և որակական ցուցանիշների, ինչպես նաև հաշվետվողականության գործընթացների լավարկմանը:
6. Հստակեցնել ՄՈՒՀ-ի վարչական, ուսումնաօժանդակ և դասախոսական անձնակազմի պատասխանատվության շրջանակը, վերանայելով պաշտոնների անձնագրերը և ստորաբաժանումների կանոնակարգերը՝ խուսափելով գործառույթների կրկնություններից և պաշտոնների գերբեռնվածությունից, ապահովելով ստորաբաժանումների միջև ուղղահայաց և հորիզոնական կապերի արտահայտումը:
7. Հստակեցնել և բարելավել փաստաթղթային վարչարարությունը, գնահատել քոլեջի փաստաթղթերի գործառնական նշանակությունը, վերանայել դրանք ապահովելով իրավանորմատիվային ձևի և բովանդակության միասնությունը, հիմնվելով որակի ապահովման սկզբունքի վրա:
8. Խրախուսել ներքին և արտաքին շահակիցների գործուն մասնակցությունը իրենց առնչվող որոշումների կայացմանը, մշակելով և ներդնելով համապատասխան ընթացակարգեր և մեխանիզմներ:

**Մասնագիտության կրթական ծրագրերը**

9. Մշակել ՄԿԾ կառուցվածքային փաթեթը՝ սահմանելով ՄԿԾ վերջնարդյունքներ, փոխկապակցելով դրանք ՊԿՉ-ներով սահմանված մոդուլային ծրագրերի ուսումնառության արդյունքների և ՈԱՇ-ի բնութագրիչների հետ, արտահայտելով ներքին և արտաքին շահակիցների կարիքները:
10. Մշակել և ներդնել դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն՝ ապահովելով միասնական մոտեցումներ:
11. Մշակել և ներդնել ՄԿԾ վերջնարդյունքների ձեռքբերմանը միտված գնահատման մեթոդների և ձևերի ընտրության քաղաքականություն, հստակեցնել գնահատման չափանիշները (ըստ առաջադրանքների բնույթի)՝ ապահովելով դրանց կիրառությունը գնահատման գործընթացում:
12. Մշակել և ներդնել բենչմարքինգի իրականացման քաղաքականություն և ընթացակարգեր՝ տեղայնացնելով լավագույն փորձը:
13. Մշակել և ներդնել ՄԿԾ-ների մշտադիտարկման գնահատման և բարելավման քաղաքականություն և ընթացակարգեր՝ ապահովելով ՄԿԾ մշտադիտարկման և գնահատման մեխանիզմների կիրառությունը:

**Ուսանողները**

14. Վերանայել ՈւԽ-ի կանոնակարգի դրույթները և ապահովել ՈւԽ-ի փաստացի գործունեությունը կանոնակարգի դրույթներին համապատասխան:
15. Մշակել և ներդնել ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու գործուն մեխանիզմներ:
16. Բազմազանեցնել ուսանողների կարիքների վեր հանման հստակ գործիքակազմ:

**Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը**

17. Վերանայել դասախոսական և ՈՒՕ կազմի ընտրության և որակավորումներին ներկայացվող չափանիշներ՝ ըստ մասնագիտությունների:
18. Մշակել և բազմազանեցնել դասախոսների և ՈՒՕ կազմի կարիքների վեր հանման մեխանիզմները, փոխկապակցելով դրանք միմյանց հետ:
19. Ապահովել դասախոսների և ՈՒՕ կազմի մասնագիտական առաջընթացը, մասնագիտական վերապատրաստումներ կազմակերպելով վեր հանված կարիքների վրա:
20. Մշակել և ներդնել դասախոսների գնահատման և խրախուսման ընթացակարգեր, ուշադրություն դարձնելով հետազոտական գործունեության և մասնագիտական առաջընթացի խթանմանը:

**Հետազոտությունը և զարգացում**

21. Հստակեցնել քոլեջի տեսլականը հետազոտական ոլորտում՝ մշակելով և ներդնելով հետազոտության զարգացումն ապահովող քաղաքականություն և ռազմավարություն, սահմանելով հետազոտության իրականացման հստակ ուղղություններ և գործիքակազմ:
22. Ընդլայնել հետազոտական բնույթի հանձնարարականների իրականացման հնարավորությունները՝ նպաստելով ուսանողների վերլուծական և հետազոտական կարողությունների զարգացմանը:
23. Ներդնել դասախոսներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու հստակ մեխանիզմներ և քոլեջում հետազոտական գործունեության արդյունավետությունը գնահատող հստակ ցուցիչներ:
24. Մշակել և ներդնել հետազոտական աշխատանքի իրականացմանը նպաստող և ուսումնառության կապը ամրապնդող ընթացակարգեր
25. Մշակել և ներդնել հետազոտական աշխատանքների գնահատման հստակ չափանիշներ:

**Ենթակառուցվածքը և ռեսուրսները**

26. Մշակել և ներդնել ֆինանսների բաշխման և կառավարման քաղաքականություն, հստակեցնելով ֆինանսական հոսքերի բաշխումը ըստ ՌԾ-ի առաջնահերթությունների, ներդնելով ֆինանսական ռիսկերի գնահատման մեխանիզմներ:
27. Ներդնել ֆինանսական մուտքերի բազմազանեցման և այլընտրանքային աղբյուրների որոնման մեխանիզմներ, ապահովելով քոլեջի ֆինանսական կայունությունը և նյութատեխնիկական բազայի շարունակական համալրումը
28. Համակարգել քոլեջի ներքին փաստաթղթաշրջանառությունը, մշակելով և ներդնելով համապատասխան ընթացակարգեր, ձևավորել միասնական տեղեկատվական բազա:

**Հասարակական պատասխանատվությունը**

29. Հաշվետվություններում ապահովել ռազմավարական պլանավորման նպատակների և գործողությունների հետ կապը՝ դրանց հաղորդելով վերլուծական բնույթ:
30. Գնահատել, հստակեցնել և լավարկել հասարակայնության հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմները՝ ապահովելով նաև կայքէջի գործարկումը և հենվելով հասարակայնության հետ կապերի (PR), հանրային ներգրավման վերաբերյալ մշակված ռազմավարության վրա:
31. Մշակել և իրագործել հասարակության համար լրացուցիչ վճարովի կրթական ծառայություններ նոր ֆինանսական հոսքեր ապահովելու նպատակով:

**Արտաքին կապերը և միջազգայնացումը**

32. Մշակել և ներդնել արտաքին կապերի հաստատման և միջազգայնացման քաղաքականություն և ընթացակարգեր
33. Ներդնել արտաքին կապերի, տեղի և միջազգային փորձի ուսումնասիրումը խթանող և խրախուսող մեխանիզմներ:
34. Նպաստել ներքին շահակիցների լեզվաիմացության մակարդակի շարունակական բարելավմանը:

**Որակի ներքին ապահովման համակարգը**

35. Վերանայել որակի ապահովման քաղաքականությունը՝ հստակեցնելով ՈԱ գործընթացներում Քոլեջի տեսլականը, նպատակները, փաստաթղթերը և դրանց համապատասխանությունը իրականացվող գործունեությանը՝ հաշվի առնելով Քոլեջի ՌԾ առաջնահերթությունները:
36. Ներդնել ներքին և արտաքին շահակիցների ներգրավմամբ կարիքների վերհանման գործուն մեխանիզմներ:
37. Ներդնել հարցումների և ՈԱ գործընթացում կիրառվող այլ գործիքների մշակման հստակ մեթոդաբանություն, բարելավել հարցարանները դարձնելով դրանք բովանդակային և խնդիր բացահայտող:
38. Ներդնել Քոլեջում իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման, տվյալների հավաքագրման և վերլուծությունների մեխանիզմներ՝ հիմնվելով ՊԻԳԲ շրջափուլի վրա:
39. Ապահովել ՈԱ գործընթացների հրապարակայնությունը և թափանցիկությունը՝ ինչպես ներքին այնպես էլ արտաքին շահակիցների համար:

Ամսաթիվ՝ 09.02.2024

_____

Փորձագիտական խմբի ղեկավարի ստորագրություն

# ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

## ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Արարատի պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. **Ասյա Սիմոնյան**-ՇՊՀ-ի ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, գեղարվեստական մարմնամարզության մարզիչ, փորձագիտական խմբի ղեկավար:
2. **Նարինե Սիրականյան**-ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ծրագրերի ղեկավար, մանկավարժական գիտությունների թեկնածու, փորձագիտական խմբի անդամ:
3. **Կարինե Մնացականյան** - Երևանի հենակետային բժշկական քոլեջի «Ընդհանուր բժշկական մոդուլների, մանրէաբանության, հիգիենայի և էկոլոգիայի, վարակիչ, մաշկային, սեռավարակ հիվանդությունների» ամբիոնի դասախոս, մեթոդիստ, փորձագիտական խմբի անդամ:
4. **Սյուզաննա Հակոբյան-** Երևանի հենակետային բժշկական քոլեջի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող-փորձագետ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Քարտուղարության բաժնի մասնագետ **Լիլիթ Ղազարյանը:**

Փորձագիտական խմբի բոլոր անդամները և գործընթացի համակարգողը ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

**Դիմում պետական հավատարմագրման համար**

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ԱՊԲՔ–ն 13.01.2023թ. ներկայացրել է սահմանված ձևաչափին համապատասխան դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո (27.01.2023թ.) ԱՊԲՔ–ի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Քոլեջի ինքնավերլուծությունն իրականացրել է ԱՊԲՔ տնօրենի հրամանով ձևավորված աշխատանքային խումբը:

### Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատության՝ առաջին անգամ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու հանգամանքը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման սկզբնական փուլում լինելը՝ ՈԱԱԿ–ը 4-օրյա առցանց աշխատաժողովներ է իրականացրել ՄՈՒՀ-ի հետ: Աշխատաժողովները նպատակ են ունեցել նախապատրաստել քոլեջներին հավատարմագրման գործընթացի կազմակերպման փուլերին: Աշխատաժողովները տեղի են ունեցել 2023թ. փետրվարի 21-22-ը և մարտի 3-4-ն ընկած ժամանակահատվածում, որոնց մասնակցել են ՄՈՒՀ-ի աշխատակիցներ: 4-օրյա աշխատաժողովներին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները, ինստիտուցիոնալ հավատարմագրման դիմելու համար լրացվող էլեկտրոնային հարցաշարը, ինքնավերլուծության ու SWOT վերլուծության իրականացման առանձնահատկությունները և կապը չափորոշիչների հետ:

Ուսումնական հաստատությունն իրականացրել է SWOT վերլուծություն, որը քննարկվել է ՈԱԱԿ աշխատակիցների հետ:

ԱՊԲՔ-ն ինստիտուցիոնալ կարողությունների վերանայված ինքնավերլուծությունը ներկայացվել է 10.05.2023թ.: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության աշխատակիցների կողմից: Ինքնավերլուծության գործընթացին արտաքին շահակիցները չեն մասնակցել: Յուրաքանչյուր չափանիշ վերլուծվել է քոլեջի աշխատակցի կողմից՝ հաշվի առնելով աշխատանքային ուղղվածությունը և չափանիշի պահանջները: Ինքնավերլուծությունը հիմնականում եղել է նկարագրական և ընդհանրական, ինչը հնարավորություն չի տվել փորձագետներին նախնական գնահատման ժամանակ պատկերացում կազմել քոլեջում տիրող իրական վիճակի մասին:

### Նախապատրաստական փուլ

ԱՊԲՔ-ի կողմից ինստիտուցիոնալ կարողությունների զեկույցը և կից փաստաթղթերը ներկայացնելուց հետո ՈԱԱԿ համակարգողն ուսումնասիրել է դրանք՝ ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Ինքնավերլուծությունը և կից բոլոր փաստաթղթերը նախնական գնահատման նպատակով տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել էր Քոլեջի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին՝ աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով՝

1. փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան,
3. ՄԿՈՒ (Մասնագիտական կրթություն և ուսուցում) ոլորտի առանձնահատկությունների սահմանում և հավատարմագրման չափանիշների մեկնաբանում միջին մասնագիտական ոլորտին համապատասխան,
4. նախնական գնահատումը որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով Քոլեջի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և համակարգողը կազմել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, մասնագիտական հանդիպումներ և այլն: Մասնագիտական հանդիպումների ընթացքում փորձագիտական խումբը բաժանվում է՝ յուրաքանչյուր փորձագետ ըստ իր ուղղվածության: Յուրաքանչյուր փորձագետ (բացի ուսանող փորձագետից, նա միացել է մյուս փորձագետներից մեկին) հնարավորություն է ունեցել առանձին մասնագիտական հանդիպումներ ունենալ Քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրում դասավանդող դասախոսների, կրթական ծրագրի պատասխանատուի և ուսանողների հետ: Նախքան մասնագիտական հանդիպումները փորձագետներն իրենց մասնագիտության շրջանակներում ուսումնասիրել են մոդուլների շրջանակներում ուսանողներին տրվող հանձնարարականները՝ հասկանալու, թե այդ հանձնարարականները որքանով են միտված մոդուլում սահմանված կատարման չափանիշների ձեռքբերմանը:

### Նախնական այց

Հաշվի առնելով այն փաստը, որ ԱՊԲՔ ն գտնվում է Արարատի մարզում՝ Քոլեջի նախնական այցը կատարվել է առցանց՝ փորձագիտական այցից առաջ: Հանդիպմանը ներկա են եղել ՈԱԱԿ համակարգողը, Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը և փորձագիտական խմբի ղեկավարը: Հանդիպման ընթացքում Քոլեջին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

### Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2023թ. հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 3-ը ընկած ժամանակահատվածում: Ժամանակացույցով նախատեսված այցից մեկ օր առաջ (30.10.2023թ.) փորձագիտական խմբի բոլոր անդամները և համակարգողն ունեցել են փակ հանդիպում: Հանդիպման նպատակն էր՝ դուրս բերել Քոլեջի ուժեղ և թույլ կողմերն ըստ չափորոշիչների, հստակեցնել թիրախային խմբերին տրվող հարցադրումները, քննարկել իրականացվող հանդիպումների ընթացակարգը և հետագա քայլերը:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է Քոլեջի տնօրենի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ մասնակիցներն ընտրվել են պատահականության սկզբունքով նախօրոք տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ

ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները, ըստ նախատեսվածի, փորձագիտական խումբն իրականացրել է նաև դասալսումներ: Այցի ընթացքում փորձագիտական խումբն իրականացրել է փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների և պրակտիկայի վայրերի դիտարկում և ֆոկուս խմբային հանդիպումներ:

Փորձագիտական այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

## Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ հունվարի 12-ին: Քոլեջի կողմից նախնական զեկույցի վերաբերյալ դիտարկումներ չեն ներկայացվել: Փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 09.02.2024թ. և տրամադրվել քոլեջին:

Համակարգողի ստորագրությունը

09.02.2024թ.

# ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

## ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**1. Պատմություն**. ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող իրավաբանական անձ է, որը հիմնադրվել է 07.03.1994 թվականին Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության և Արարատի քաղխորհրդի գործկոմի որոշման համաձայն՝ որպես Երևան քաղաքի թիվ 2 բժշկական ուսումնարանի Արարատ քաղաքի մասնաճյուղ: 13.08.1996թ. ՀՀ ԱՆ կոլեգիայի որոշմամբ քոլեջը ստանում է «Երևանի թիվ 1 բազային բժշկական ուսումնարան» Արարատի դուստր ձեռնարկության (Դ/Ձ) կարգավիճակ: Ներառվում է նաև «Դեղագործություն» մասնագիտության ուսուցումը:

12.08.2003թ. ի կատարումն ՀՀ կառավարության 10.07.2003թ. որոշման «Երևանի թիվ 1 բազային բժշկական ուսումնարան» պետական ձեռնարկության «Արարատի բժշկական ուսումնարան» Դ/Ձ վերանվանվել է ՀՀ առողջապահության նախարարության «Արարատի բժշկական ուսումնարան» ՊՈԱԿ, որն էլ՝ ՀՀ ԱՆ 06.03.2006թ. թիվ232-Ա հրամանով վերանվանում է ՀՀ Ան «Արարատի պետական բժշկական քոլեջ»:

ԱՊԲՔ գտնվում է քաղաք Արարատում: Մեծ է քոլեջի դերը տարածաշրջանի առողջապահական ոլորտում: Տարածաշրջանի գրեթե բոլոր պետական և մասնավոր կլինիկաներում, լաբորատոր–ախտորոշիչ կենտրոններում, ատամնաբուժական կլինիկաներում, դեղատներում աշխատում են քոլեջի շրջանավարտները՝ դրսևորելով իրենց որպես արհեստավարժ, բարձր մասնագիտական կարողություններով օժտված բուժաշխատողներ:

**2. Կրթություն:** ԱՊԲՔ-ում ուսուցումն կազմակերպվում է հիմնական, միջնակարգ հանրակրթական, առկա և հեռակա ուսուցմամբ. Քոլեջն իրականացնում է որակյալ կրթություն՝ տալով առողջապահության ոլորտին միջին օղակի մասնագետներ, որոնք աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին և մարտահրավերներին պատրաստ, մշտապես կատարելագործվող, ազգային և համամարդկային արժեքներ կրող քաղաքացիներ են:

Ժամանակի պահանջներին համահունչ՝ քոլեջի մասնագիտությունների ցանկը պարբերաբար վերանայվում է: Քոլեջն իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագիր 5 մասնագիտություններով՝ «Քույրական գործ» («Բուժքույր/բուժեղբայր» որակավորում), «Մանկաբարձական գործ»՝ («Մանկաբարձ» որակավորում), «Ատամնատեխնիկական գործ»՝ («Ատամնատեխնիկ» որակավորում), «Դեղագործություն»՝ («Դեղագործ» որակավորում), «Բուժական կոսմետոլոգիա»՝ («Բուժքույր/բուժեղբայր կոսմետոլոգ» որակավորում):

Քոլեջի կարևորագույն խնդիրներից է որակյալ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ձևավորման, համալրման, զարգացման և սահուն սերնդափոխության իրականացումն ու համապատասխան կրթական միջավայրի ստեղծումն ու ապահովումը:

**3. Հետազոտություն:** ԱՊԲՔ քոլեջի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ խթանելով ստեղծագործական աշխատանքը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ձեռքբերման, կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների

օգտագործման ունակությունների զարգացումը: ՄՈՒՀ-ն իր ռազմավարական նպատակների և առաքելության շրջանակներում ակտիվացնում է հետազոտական գործունեությունը՝ մշակելով այնպիսի քաղաքականություն, որով հնարավոր կլինի գնահատել կատարվող հետազոտությունների արդյունավետությունը՝ ըստ արդիականության և կիրառելիության:

4. **Միջազգայնացում:** Քոլեջը որդեգրել է հստակ քաղաքականություն հնարավորինս ընդլայնել համագործակցությունների շրջանակը թե՛ երկրում գործող այլ ՄԿՈՒ հաստատությունների, հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների, գործատուների հետ, թե՛ միջազգային ՄՈՒՀ-երի և կրթության ոլորտին աջակցող կազմակերպությունների հետ:

ՄԿՈՒ ոլորտը զարգացման մեծ հեռանկար ունի, որն ապահովելու և նախատեսվող վերջնարդյունքներն ունենալու համար շատ կարևոր է միջազգային և տեղական գործընկերների սերտ համագործակցությունը:

**5. Որակի ապահովում.** Արարատի պետական բժշկական քոլեջում որակի ապահովման ներքին համակարգը որպես ստորաբաժանում ձևավորվել և ներդրվել է 2020թվ.-ին՝ ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացների բարելավման գերնպատակը իրականացնելու համար: Ուղղորդվելով քոլեջի զարգացման ռազմավարական ծրագրով՝ որակի ներքին համակարգը իր առաջ ծառացած խնդիրներին պարտավորվում է տալ արդիական և նպատակաուղղված լուծումներ:

Քոլեջի 2021թվ.-ի փետրվարի 1-ին իրականացած կառավարման խորհրդի թիվ 5 նիստի որոշմամբ հաստատվել է ՀՀ ԿԳՄՄՆ Արարատի պետական բժշկական քոլեջ ՊՈԱԿ կրթության որակի ներքին ապահովման ստորաբաժանման կանոնակարգը, որն իր մեջ արտացոլում է որակի ներքին ապահովման ընդհանուր դրույթները, կառուցվածքը և գործառույթները:

# I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

**ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:**

**Փաստեր:** Արարատի պետական բժշկական քոլեջը միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է, որը իր գործունեությունն իրականացնելիս առաջնորդվում է իր կանոնադրությամբ (2013թ.) և գործող Ռազմավարական ծրագրով (2023-2028)։ Նախորդ՝ 2018-2023 Ռազմավարական զարգացման ծրագրին արտահայտել է քոլեջի տեսլականը, առաքելությունը, նպատակը, խնդիրները, հիմնարար արժեքները և ռազմավարական 9 հիմնախնդիրները։ ՌԶԾ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քոլեջի 2018-2023 ՌԶԾ հիմնախնդիրները իրենց բովանդակությամբ հիմնականում արտահայտում են գործողություններ, օրինակ՝ բարձրացնել կառավարման արդյունավետությունն ու վարչական ծառայությունների որակը։ ՌԶԾ-ում տրված են նաև հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ որոշակի քայլեր, սակայն բացակայում է պլան-ժամանակացույցը և հիմնախնդիրներին հասնելու հստակ պլանավորումը:

Քոլեջը իր նախորդ ՌԶԾ-ի կատարողական վերլուծություն չի իրականացրել, սակայն ըստ ԻՎ զեկույցի՝ 2023-2028թ. ՌԾ-ը մշակելիս քոլեջը հաշվի է առել իր կանոնադրությունը և աշխատաշուկայի պահանջները, վերլուծել քոլեջի առկա իրավիճակը, վերանայել է ռազմավարական պլանավորման առաջնահերթությունները, այդպիսով սահմանել է ՌԾ ոլորտային ուղղությունները, դրանց նպատակները, հիմնախնդիրները, միջոցառումները, գործողությունները և ժամանակացույցը:

Քոլեջի նոր Ռազմավարական ծրագրում սահմանված առաքելությունը շեշտադրում է ուսանողակենտրոն կրթությունը և քոլեջի բժշկական ուղղվածությունը, որը արտահայտված չի եղել մինչև այդ։ Ըստ 2023-2028 ՌԾ-ի՝ ԱՊԲՔ-ի հիմնական առաքելությունն է ապահովել յուրաքանչյուր ուսանողի անհատական անձնային և մասնագիտական գիտելիքներով, կարողություններով և հմտություններով: Կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում, տարածաշրջանի կրթական, որակի ազգային շրջանակներին (ՈԱՇ), պետական կրթական չափորոշիչներին համապատասխանող, աշխատաշուկայի պահանջները բավարարող միջին մասնագիտական կրթությամբ, առողջապահության ոլորտի, որակյալ, մրցունակ մասնագետներ պատրաստել, ովքեր իրենց ստացած կրթությամբ կապահովեն բարեկեցիկ և արժանապատիվ ապագա:

Քոլեջի գործող ՌԾ-ում ամրագրված է նաև Քոլեջի նպատակը(ները), հիմնարար արժեքներն և սկզբունքները, առկա իրավիճակի SWOT վերլուծությունը, որն իրականացվել է հետևյալ ուղղություններով՝ քոլեջի շենքային պայմաններ, վարչական կազմ, դասախոսական կազմ, ուսանողական համակազմ, ռեսուրսներ, ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն։ Վերլուծության արդյունքում ընդգծվել են քոլեջի 10 հիմնախնդիրները (ՌԾ էջ 21), լուծման կարիք ունեցող խնդիրները և դրանց իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները։ Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՌԾ-ի

«Ռազմավարական առաքելության և նպատակների իրականացում 2023-2028 թթ. ռազմավարության ապահովում», բաժնում քոլեջը առանձնացրել է 8 հիմնական ոլորտային ուղղությունները՝ 1.կառավարման համակարգ և կադրային քաղաքականություն, 2.շենքային պայմաններ և նյութատեխնիկական բազա, 3.ֆինանսատնտեսական գործունեություն, 4.դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, 5.ուսանողական համակազմ, 6.կրթական գործունեություն, 7.կարիերայի կառավարում, 8.համագործակցություն և միջազգային կապեր: Այսուհանդերձ, այստեղ (էջ՝ 24-27) նույն՝ հիմնախնդիր հասկացության ներքո կրկին ներկայացնում է հիմնախնդիրներ, որոնք վերաբերվում են ոլորտային ուղղությունների նպատակներին, որը տարընկալումների տեղիք է տալիս:

ՌԾ-ում սահմանված նպատակները և հիմնախնդիրները հիմնականում արտացոլում են քոլեջի առաքելությունը, սակայն ռազմավարական ծրագրում (2023-2028) որպես պլանավորման փաստաթուղթ առկա են որոշ հակասություններ:

ՌԾ-ի ոլորտային ուղղությունները և սահմանված նպատակները երբեմն փոխկապակցված չեն այսպես, ՌԾ-ի առաջին ոլորտում՝ «Կառավարման համակարգ և կադրային քաղաքականություն» քոլեջի կառավարմանն ուղղված նպատակները և գործողությունները բացակայում են, ներկայացվում է միայն դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի առաջընթացին միտված գործողություններ, որոնք իրենց հերթին նույնական են ոլորտային չորրորդ՝ «Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ» ուղղության հետ, օրինակ՝ երկուստեք պլանավորվում է «Մանկավարժադասախոսական կադրերի վերապատրաստման արդյունավետության բարձրացում» և այլ կրկնվող նպատակներ: ՌԾ բոլոր նպատակների իրականացման համար որպես ժամանակացույց նշվում է՝ մինչև 2028թ.: Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քոլեջի ոլորտային ուղղություններում բացակայում է Որակի ապահովման ներքին համակարգին անդրադարձը, սակայն ՌԾ-ի 38-56 էջերում ներակայացվող՝ «ԱՊԲՔ-ի 2023-2028 թթ. զարգացման ծրագրի խնդիրները, նպատակները, ակնկալվող արդյունքները, պատասխանատուները, արդյունավետության գնահատման ցուցանիշները» բաժնում առկա է Որակի ապահովման համակարգին և կառավարման համակարգի բարելավմանը առնչվող նպատակներ և գործողություններ, որոնք չեն եղել սահմանված ՌԾ նպատակներում: Ընդհանուր առմամբ վերոնշյալ բաժնում ներկայացվող նպատակները, ակնկալվող արդյունքները և դրանց արդյունավետության գնահատման ցուցանիշները իրենց բովանդակությամբ փոխկապակցված չեն ՌԾ հիմնական նպատակների, հիմնախնդիրների և դրանց լուծման համար պլանավորված գործողությունների հետ:

Այդուհանդերձ, քոլեջը ՌԾ-ում առաջին անգամ փորձ է կատարել ըստ պլանավորված գործողությունների համար սահմանել ակնկալվող արդյունքները և դրանց արդյունավետության գնահատման ցուցանիշներ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գնահատման ցուցանիշները փոխկապակցված չեն ակնկալվող արդյունքների հետ՝ օրինակ ակնկալվող արդյունքն է «Բարելավված ՊԻԳԲ (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում) շրջափուլ՝ ուսումնական ստորաբաժանումների և դասախոսական կազմի գործունեության արդյունավետ կառավարումն ապահովող գործիքակազմերով», իսկ արդյունավետության գնահատման ցուցանիշն է «Վերապատրաստված աշխատակիցների

տոկոսի բարձրացում»: Հարկ է նշել, որ նշված ցուցիչը նույնպես հստակ չէ, քանի որ չի արտահայտում ակնկալվող քանակական արդյունքը:

ՌԾ գործողությունների իրականացման համար պատասխանատուները ընդհանուր են ներկայացված՝ երկու և ավել պատասխանատուներ, առնաց հստակեցման, թե, որ գործողության համար են պատասխանատու, իսկ որպես ժամկետներ բոլոր գործողությունների համար տրվում է 2023-2028թթ.: Այսպիսով, հստակ փոխկապակցված չեն գործողությունները, պատասխանատուները, կատարման ժամկետները, որը թույլ չի տալիս տեսնել քայլերի տրամաբանական հաջորդականությունը, բոլոր գործողությունների համար բացակայում է նաև ֆինանսական պլանավորումը:

Փորձագիտական այցը ցույց տվեց, որ քոլեջի առաքելությունը հստակ է ընկալվում ներքին և արտաքին շահակիցների կողմից, վերջիններիս կողմից կարևորվում է քոլեջի դերակատարությունը տարածաշրջանում միջն մասնագիտական բժշկական կադրեր պատրաստելու տեսանկյունից՝ շեշտադրելով Արարատի մարզում այս ուղղությամբ կրթություն կազմակերպող միակ ՄՈՒՀ լինելու հանգամանքը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՌԾ-ը մշակվել է ներքին շահակիցների հետ համատեղ աշխատանքի արդյունքում՝ մասնավորապես տնօրենի տեղակալները, ՈԱ պատասխանատուն, մասնակցել են ՌԾ նպատակների և խնդիրների սահմանման աշխատանքներին, սակայն ներքին և արտաքին շահակիցների կարիքների վեր հանում այս ուղղությամբ չի իրականացվել, այդուհանդերձ, ՌԾ-ը քննարկվել և հավանության է արժանացել Կառավարման խորհրդում:

Քոլեջը իր ռազմավարական ծրագրում ընդգծել է իր կողմից դիտարկվող ՌԾ-ի վերահսկողության մեխանիզմները, սակայն դրանք դրանք ոչ միշտ են հանդիսանում ՌԾ-ի մշտադիտարկման մեխանիզմ՝ օրինակ բաց դասերը, կամ ՄՈՒՀ-ի զարգացման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, մշակման, պահպանման և ներկայացման համակարգը ըստ էության մեխանիզմներ չեն: Քոլեջը ՌԾ գնահատումը նախատեսվում է կատարել կանխատեսված և փաստացի արդյունքների համեմատությամբ:

Ներկա փուլում քոլեջի ՌԾ-ի նպատակների իրականացման մշտադիտարկման հիմնական մեխանիզմներից է հաշվետվությունները, որոնք տրվում են ըստ ստորաբաժանման իրականացրած աշխատանքների կատարողականի, սակայն դրանք ՌԾ-ի նպատակների հետ ոչ միշտ են փոխկապակցված: Մեկ այլ մեխանիզմ է հարցումների անցկացումը, տարբեր շահակիցների շրջանում, որոնք նաև արտահայտված են ՌԾ-ի գործողություններում որպես գնահատման միջոցներ, այսուհանդերձ քոլեջը մինչ օրս իրականացրել է շահակիցների գոհունակության աստիճանը արտահայտող հարցումներ, որոնք ունեն վստահելիության ցածր աստիճան պայմանավորված սակավաթիվ շահակիցների մասնակցությամբ:

**Դատողություններ**: Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի դերակատարությունը տարածաշրջանի միջին մասնագիտական բժշկական կադրերի համալրման գործում: Այս համատեքստում կարևոր է, որ քոլեջը վերանայել և հստակեցրել է իր ռազմավարության մեջ արտահայտվող առաքելությունը, այն համապատասխանեցնելով ներքին

և արտաքին շահակիցների ակնկալիքներին՝ այն համահունչ դարձնելով իր գործունեությանը և ՈԱՇ-ի հինգերորդ մակարդակին: Փորձագիտական խումբը հաշվի է առնում այն իրողությունը, որ հաստատությունը առաջին անգամ փորձ է կատարել սահմանել ռազմավարական հիմնախնդիրները (ոլորտային ուղղությունները), դրանց համահունչ նպատակները, իրականացման ուղիները և ակնկալվող արդյունքների գնահատման ցուցիչները, ինչը անշուշտ դրական առաջընթաց է՝ հաշվի առնելով նախորդ ԶՌԾ փաստաթղթի բովանդակային խնդիրները: Այսուհանդերձ հարկ է նշել, որ մշակված ՌԾ-ում առկա են տրամաբանական խզվածքներ, որը հիմնականում արտահայտվում է նպատակներին համահունչ գործողությունների պլանավորման ժամանակ, իսկ երբեմն բացակայում է հետևողականությունը տվյալ ռազմավարական ուղղության զարգացմանը նպաստող նպատակների սահմանման հարցում՝ օրինակ կառավարում և վարչարարություն: Վերոնշյալը կարող է խոչընդոտել քոլեջի ոլորտային ուղղությունների համաչափ զարգացմանը և ռազմավարական նպատակների սահուն իրագործմանը:

Անդրադառնալով ՌԾ կառուցվածքին հարկ է նշել, որ այն բավականին խրթին է, որը հանգեցնում է ՌԾ նպատակների և խնդիրների ոչ հստակ ընկալմանը, տեսանելի չէ ՌԾ իրականացման հստակ ճանապարհային քարտեզը, որը իր հերթին կարող է դժվարացնել հետագա ընթացքի մշտադիտարկումը: Հարկ է նշել, որ նպատակների և գործողությունների միջև խզումները նաև նվազեցնում են սահմանված գնահատման ցուցանիշների արդյունավետությունը, մյուս կողմից մի շարք գնահատման ցուցանիշներ բովանդակային վերանայման կարիք ունեն: Փորձագիտական խումբը գտնում է, որ ՌԾ ոլորտների, նպատակների և խնդիրների հստակ փոխկապակցումը թույլ կտա ՄՈՒՀ-ին ապահովել ՌԾ սահուն իրականացումը, որը կարևորվում է ՄՈՒՀ-ի առաքելության շարունակական իրականացման համար:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՌԾ-ի մշակման աշխատանքներում ներգրավված են եղել ներքին շահակիցները, ՌԾ-ը նաև հավանության է արժանացել ԿԽ-ի կողմից: Այսուհանդերձ, նոր 2023-2028 ՌԾ-ի մշակման հիմքերում տեսանելի չէ շահակիցների կարիքների արտահայտումը և համապատասխան վերլուծությունների առկայությունը: Շահակիցների համապատասխան շրջանակի ներգրավումը թույլ կտա վեր հանել քոլեջի հետագա զարգացման համար կարևոր ռազմավարական ուղղությունները և սահմանել շահակիցների կարիքներից բխող, ուսումնասիրությունների և վերլուծությունների վրա հիմնված նպատակներ:

Փորձագիտական խումբը կարևորում է ՌԾ-ի մշտադիտարկման մեխանիզմների բազմազանեցումը, ներկա փուլում ՄՈՒՀ-ը հենվում է աշխատանքային պլաններին համաձայն հաշվետվությունների կատարմանը և հաշվետվողականության ապահովմանը, որոնք ոչ միշտ են բխում ՌԾ-ի նպատակներից: Հաշվետվողականության մոտեցումը պետք է տարածվի ինչպես կարճաժամկետ այնպես էլ երկարաժամկետ ընթացք պահանջող գործընթացների իրականացման աստիճանի օբյեկտիվ գնահատման համար: Այս համատեքստում ՌԾ գործողությունների պլան ժամանակացույցը պետք է արտահայտի ՄՈՒՀ-ի հեռանկարային պլանավորման տրամաբանական ընթացքը, հաշվետու-պատասխանատուներին, ռեսուրսների իրատեսական պլանավորումը և հաշվառումը և զարգացման հնարավորությունները: Դրական է, որ ՌԾ վերահսկողության մեխանիզմների կիրառմա ուղղությամբ քոլեջը արդեն իսկ որոշակի քայլեր է կատարում: Սակայն ՌԾ-ի իրականացման ընթացքի մշտադիտարկման վստահելի և

վերլուծահենք գնահատման մեխանիզմների ներդրումը կնպաստի հաջորդ փուլում պլանավորման գործիքակազմի լավարկմանը և պատասխանատուների շրջանակների հստակեցմանը, որը իր հերթին կբարելավի հաշվետվողականության մեխանիզմները:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի շահակիցների պատրաստակամությունը իրականացնելու անհրաժեշտ բարեփոխումները, ի նպաստ առաքելության և նպատակների իրականացմանը:

**Եզրահանգում**: Հաշվի առնելով, որ Արարատի պետական բժշկական քոլեջը վերանայել և հստակեցրել է իր առաքելությունը համապատասխանեցնելով իր գործունեությանը և շահակիցների ակնկալիքներին, վարչական աշխատակիցները որոշակիորեն ներգրավված են եղել ՌԾ մշակման աշխատանքներում, նախորդ շրջափուլից հետո որոշակի բարելավվել են ՌԾ-ի պլանավորման մեխանիզմները՝ մշակվել է ժամանակացույց, սահմանվել են պատասխանատուներ և ակնկալվող արդյունքներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊԲՔ-ն բավարարում է չափանիշի 1-ի պահանջները:

**Եզրակացություն**: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Արարատի պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

## II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:**

**Փաստեր:** Քոլեջի կառավարումն իրականացվում է կոլեգիալ և միանձնյա կառավարման զուգորդման սկզբունքով՝ բարձրագույն մարմնի Կառավարման խորհրդի և տնօրենի կողմից: Կոլեգիալ կառավարման օղակներն են՝ Կառավարման խորհուրդը, Մանկավարժական խորհուրդը և առարկայական հանձնաժողովները, վերջիններս վերանվանվել են ամբիոններ, պահպանելով իրենց հիմնական գործառույթները (2023 օգոստոսի ԿԽ նիստ):

Կառավարման խորհրդի կազմում ընդգրկված են 3 դասախոսներ՝ առաջադրվում են Մանկավարժական խորհրդի կողմից և 2 ուսանողներ՝ առաջադրված ՈՒԽ-ի կողմից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Կառավարման խորհուրդի որոշմամբ, 2023թ. օգոստոսից լուծարվել է Տնօրինական խորհուրդը, իսկ խորհրդում քննարկվող հարցերի շրջանակը տեղափոխվել է ԿԽ նիստերի օրակարգ: ԿԽ-ը քննարկում և հաստատում է քոլեջի նորմատիվ փաստաթղթերը, ուսումնական գործընթացին առնչվող որոշումները, բյուջեի նախահաշիվը, ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվությունները, ստորաբաժանումների և տնօրենի հաշվետվությունները և այլն: Կառավարման խորհրդի անդամները նպաստում են քոլեջի գործընկերային կապերի ամրապնդմանը. լինելով

տարածաշրջանում գործատուներ նաև համագործակցում են քոլեջի հետ, աջակցում են իրենց հնարավորության սահմաններում լուծելու ընթացիկ խնդիրները՝ օրինակ քոլեջի բակում բացօթյա մարզահրապարակի բարեկարգումը։

Քոլեջի Մանկավարժական խորհրդում ընդգրկված են քոլեջի բոլոր դասախոսները և ՈՒԽ-ի նախագահը (2022-2023 ուս. տարվանից)։ Խորհրդի նիստերին քննարկվում են ուսումնական և կրթադաստիարակչական բնույթի, դասավանդման որակի բարձրացմանը ուղղված մեթոդական հարցեր։ Քոլեջի կառավարմանն մասնակցում են նաև ուսումնական և կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալները՝ համակարգելով նաև ամբիոնների աշխատանքները։

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ թեև քոլեջի ֆինանսատնտեսական գործունեությունը հանդիսանում է ռազմավարական պլանավորման ուղղություն, այդուհանդերձ ՌԾ նպատակների իրականացումը փոխկապակցված չէ ֆինանսական ռեսուրսների հետ։ Հարկ է նշել, որ ֆինանսների բաշխման քաղաքականությունը քոլեջը չունի։ Քոլեջի ֆինանսատնտեսական գործունեությունը ներառում է ծախսերի հետևյալ ուղղությունները, որտեղ հիմնական ծախսերն են՝ աշխատավարձեր (82.3%), կոմունալ վճարումներ (5.6%) և այլ ծախսեր (12.1%), որի ներքո կատարում է ուսման վարձերի փոխհատուցմանը, ՄՈՒՀ-ի կրթական ռեսուրսների որոշակի համալրմանը, ուսումնամեթոդական գործունեության իրականացմանը, ընթացիկ կարիքների բավարարմանը, աշխատակիցների խրախուսմանը նպատակաուղղված ծախսերը։

Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կառավարման կառուցվածքային գծապատկերը արտահայտում է կենտրոնացված կառավարման համակարգ, գրեթե բոլոր ստորաբաժանումները (բաժինները) ուղիղ ենթակայություն ունեն տնօրենին, թույլ են արտահայտված հորիզոնական կապերը։ ՄՈՒՀ-ը մշակել է վարչական ՈՒՕ և դասախոսական անձնակազմի պաշտոնների անձնագրերը (2021թ.), փորձելով դրանք համապատասխանեցնել քոլեջի կազմակերպական կառուցվածքին և հստակեցնել աշխատակիցների գործառույթները։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ պաշտոնների անձնագրերի մշակման ժամանակ քոլեջը օգտվել է «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնի» ուղեցույցից և «Գործք» իրավատեղեկատվական ամսագրից։

Քոլեջի բոլոր վարչական և ուսումնաօժանդակ աշխատակիցները ներգրավված են նաև դասավանդման գործընթացում, և/կամ ունեն արտաքին համատեղություն, օրինակ՝ կարիերայի ուղղորդման պատասխանատուն համատեղությամբ գրադարանավարն է, դասավանդում է, զբաղվում է նաև արտաքին կապերի համակարգմամբ։ Փորձագիտական այցը ցույց տվեց, որ երբեմն առկա է աշխատակիցների գերբեռնվածություն միաժամանակ տարբեր գործընթացներում ներգրավվածությամբ պայմանավորված։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մասնագիտական կրթական ծրագրերի կառավարումը և իրականացումը համակարգվում է ուսումնական գծով տնօրենի տեղակալի կողմից, այստեղ ամբիոնների դերակատարությունը հստակեցված չէ ինստիտուցիոնալ մակարդակում, տեսանելի չեն ՄԿԾ-ների մշտադիտարկման, գնահատման և լավարկման պատասխանատուները ըստ կրթական ծրագրերի։ Ամբիոնները հիմնականում կազմակերպում

են իրենց կազմում ընդգրկված մոդուլների/առարկաների դասավանդման հետ կապված մեթոդական աշխատանքները, հետևում են քոլեջի դասախոսների մոդուլային/առարկայական ծրագրերի օրացուցային թեմատիկ պլանների կատարմանը, իրականացնում են դասալսումներ, աջակցում են դասավանդման գործընթացում սկսնակ դասավանդողների ինտեգրմանը, հանդիսանում են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամներ և մշակում են քննական հարցաշարերը և այլն։

Կանոնակարգերի և գործընթացների համադրումը ցույց է տալիս, որ առկա են վարչական և ուսումնաօժանդակ աշխատակիցների գործառութային կրկնություններ, օրինակ՝ ՈՒԱԳ տնօրենի տեղակալը պետք է իրականացնի մեթոդական աշխատանք երիտասարդ, տարեց մանկավարժների և մանկավարժական կրթություն չունեցող բժիշկ դասավանդողների հետ, փաստացի այս խնդրով զբաղվում են ինչպես ամբիոնների վարիչները այնպես էլ մեթոդիստը, ինչը արձանագրված է աշխատանքային պլաններում և համապատասխան կանոնակարգերում, սակայն քոլեջում սկսնակ դասավանդողների մենթորության իրականացման հստակ ընթացակարգ դեռևս չունի։ Ուսանողների հաճախումների վերահսկումը նույնպես միաժամանակ իրականացնում են թե՛ ուսումնական, թե՛ կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալները։ Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա է նաև գործընթացների և կանոնակարգերի անհամապատասխանություն, օրինակ՝ համաձայն ամբիոնի կանոնակարգի, ամբիոնը պետք է առաջարկի դասախոսների դասաբաշխումը և ծանրաբեռնվածության կարգավորումը, այսուհանդերձ այդ գործառույթները ներառված են նաև ուսումնական գծով տնօրենի տեղակալի ինչպես 2023-2024թթ., այնպես էլ նախորդող ուստարիների աշխատանքային պլաններում, ամբողջությամբ իրականացվում է վերջինիս կողմից։

Քոլեջը մշակել և հաստատել է էթիկական սկզբունքների կանոնակարգը (2023թ.), որը մեկնաբանում է դասավանդողների և ուսումնառողների կողմից վարքագծի կանոնները, սակայն չեն մեկնաբանվում էթիկայի խախտման դեպքերը և ընթացակարգը, հետևանքները։

ՄՈՒՀ-ը ունի համապատասխան կառուցակարգեր դասախոսներին և ուսանողներին ընդգրկելու կոլեգիալ մարմիններում ապահովելով նրանց մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացներում։ Փորձագիտական այցը ցույց տվեց, որ այս մեխանիզմը դեռևս ֆորմալ է գործում, թեև առկա են որոշ օրինակներ (մասնավորապես՝ ուսանողների կողմից բարձրաձայնվել է դասացուցակի և դեպի հարակից գյուղեր տրանսպորտի գրաֆիկի անհամապատասխանության խնդիրը, որին քոլեջի ղեկավարության միջնորդությամբ համայնքապետարանի կողմից տրվել է լուծում), սակայն դրանք պարբերական բնույթ չեն կրում։ ԿԽ-ի անդամ ուսանողները իրազեկում են ԿԽ-ում քննարկված հարցերը (ուսման վճարների սահմանման, կրթաթոշակների, ներքոլեջային զեղչերի, կանոնակարգերի վերաբերյալ) ուսանողության շրջանում, սակայն կարիքների վեր հանման տեսանկյունից պասիվ են։

ԱՊԲՔ-ի երկարաժամկետ պլանավորումը իրականացվում է ռազմավարական ծրագրի միջոցով, որը կազմվում է 5 տարի ժամկետով։ 2023-2028 ՌԾ-ի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ այն որոշակիորեն ցույց է տալիս քոլեջի հնգամյա պլանավորումը։ Երկարաժամկետ պլանավորման տեսանկյունից տվյալ փաստաթուղթը ունի մի շարք թերություններ,

մասնավորապես՝ գործողությունների և ՌԾ նպատակների համապատասխանեցում (հորիզոնական քարտեզագրում) չի իրականացվել, ոլորտային ուղղությունները և հիմնախնդիրները պատշաճ ներկայացված չեն, խնդրահարույց է նաև ակնկալվող արդյունքների և դրանց արդյունավետության գնահատման ցուցանիշների համադրումը որևիցէ կոնկրետ գործողության հետ, նույն խնդիրը տեսանելի է պատասխանատուների ներկայացման մեջ: Փաստաթղթի կառուցվածքը թույլ չի տալիս գնահատել պլանավորման տրամաբանությունը քայլերի հաջորդականությունը, որը պայմանավորված է բոլոր գործողությունների համար լայն հնգամյա ժամկետի սահմանումով, մյուս կողմից պլան ժամանակացույցը որպես երկարաժամկետ պլանավորման միջոց և մեխանիզմ կիրառելի չէ, պայմանավորված պահանջվող ռեսուրսների և հաշվետվողականության ձևի վերաբերյալ տեղեկատվության բացակայությամբ:

Կարճաժամկետ պլանավորումը իրականացվում է մեկ ուսումնական տարվա համար, դասախոսների, վարչական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքային պլանների միջոցով: Ստորաբաժանումների աշխատանքային պլանների դիտարկումները ցույց տվեց, որ դրանք հիմնականում ներառում են տվյալ բաժնի կանոնակարգով նախատեսվող գործառույթների կատարումը, ընթացիկ միջոցառումները: Հարկ է ընդգծել, որ աշխատանքային պլաններում կատարման ժամկետները արտահայտվում են հիմնականում նշելով ընթացիկ տարին կամ ամիսը, նշվում են նաև պատասխանատուները՝ տվյալ դեպքում ստորաբաժանման ղեկավարները: Ստորաբաժանումների տարեկան պլանավորման փաստաթղթերը տարեցտարի կրկնվում են բովանդակությամբ օրինակ՝ առարկայական հանձնաժողովը վերանվանվել է ամբիոն, սակայն գործառույթները մնացել են նույնը, 2023-2024 ուս. տարվա ամբիոնների պլաններում ներառված է նույն հարցերի շրջանակը, ինչ նախորդ տարիներին առարկայական հանձնաժողովների աշխատանքային պլաններում, իսկ պլանավորվող գործողությունները փոխկապակցված չեն քոլեջի ՌԾ նպատակների հետ: Աշխատանքային պլաններում կարելի է տեսնել նաև պլանավորված վերացական գործողություններ, օրինակ ՈԱ աշխատանքային պլանում նշվում է. «որակի ներքին ապահովման գործունեության մշակույթի ներդնում», սակայն չի հստակեցվում ինչպես, ինչ քայլերով:

Աշխատանքային պլանների մշտադիտարկման հիմնական մեխանիզմը հաշվետվություններն են, որոնք իրականացվում են ըստ տվյալ ստորաբաժանման իրականացված աշխատանքների: Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին տնօրենին ներկայացվում են դասախոսների կատարողականի, ուսանողների առաջադիմության, շարժի, վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի հաշվետվությունները: Հաշվետվությունների դիտարկումը ցույց է տալիս, որ դրանք հիմնականում նկարագրական են և չեն պարունակում վերլուծական տվյալներ, բացառությամբ ուսումնական գծով տնօրենի տեղակալի և կարիերայի պատասխանատուների հաշվետվությունների, որտեղ ներկայացվում են որոշ վիճակագրական տվյալներ: Հարկ է ընդգծել, որ հաշվետվությունները թեև լսվում և քննարկվում են մանկավարժական խորհրդում և ԿԽ-ում, սակայն դրանց արդյունքները դեռևս հիմք չեն հանդիսացել պլանավորման գործընթացների լավարկման համար: Պլանավորման փաստաթղթերը և հաշվետվությունները նաև փոխկապակցված չեն քոլեջի ՌԾ-ի իրականացման գործողությունների պլանի, պատասխանատուների և ակնկալվող արդյունքների հետ:

Համաձայն ինքնավերլուծության զեկույցի ԱՊԲՔ-ը մշտապես ուսումնասիրում և վերլուծում է իր գործունեության վրա ազդող արտաքին և ներքին գործոնները: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այդ գործոնների հաշվառումը տեղի է ունեցել հատվածային: Օրինակ՝ որպես արտաքին գործոն դիտարկում է լիազոր մարմնի և գործատուների հետ քոլեջի համագործակցությունը, այս համատեքստում քոլեջը իրականացրել է աշխատաշուկայի վերլուծություն, որը ցույց է տալիս գործատուների կողմից իրականացվող կրթական ծրագրերի շրջանավարտների պահանջարկը, հարկ է նշել, որ ուսումնասիրության մեջ հիմնականում ընդգրկվել են քոլեջի խոշոր գործընկեր գործատուները:

Ներքին գործոնների ուսումնասիրությունը իրականացվում է հիմնականում հարցումների և ներքին գնահատման միջոցով, բացի հարցումներից առկա է «Կարծիքների և առաջարկների գիրք», որտեղ կարող են ներկայացվել բողոքներ և առաջարկներ: Հարցման արդյունքները ենթարկվում են միայն թվային/տոկոսային վերլուծության, դրանց վերաբերյալ որակական գնահատականներ չեն տրվում: Քոլեջը սկսած 2017-2018 ուստարուց յուրաքանչյուր տարի իրականացնում է ներքին գնահատման հաշվետվություն, որոնք քոլեջի կողմից կատարված աշխատանքների կատարողական հաշվետվությունն են ներկայացնում: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հաշվետվությունները դեռևս չեն ծառայում տվյալահենք որոշումների կայացման հիմք: Արտաքին գործոնների ուսումնասիրության օրինակ է աշխատաշուկայի կարիքների որոշակի վերլուծությունը, որը հիմք է հանդիսացել կրթական ծրագրերի ներդրման համար: Թեև առկա են, որոշ մեխանիզմներ ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրության համար, սակայն այդ մեխանիզմների կիրառման պարբերականությունը և դրանց օբյեկտիվությունը ապահովված չէ քոլեջի կողմից: Քոլեջը ԻՎ զեկույցում ամբողջովին չի անդրադառնում իր կողմից ուսումնասիրվող գործոններին՝ օրինակ՝ «դիմորդների հավաքագրման համար իրականացվող աշխատանքները» երբեմն դիտվում են բովանդակային շեղումներ, օրինակ՝ նշվում է, որ քոլեջի գործունեության վրա ազդող գործոններից են. «ներքոլեջային իրադարձությունների մասին լուսաբանող սոցիալական էջերի առկայությունը», որը ուղղակի ազդեցության գործոն չէ:

Փաստաթղթերի դիտարկումը, ցույց է տալիս, որ փաստաթղթային վարչարարությունը դեռևս չի իրականացվում պլանավորման, իրականացման, գնահատման, բարելավման սկզբունքների հստակ շրջափուլով: Ընդհանուր առմամբ քոլեջի փաստաթղթային վարչարարության մեջ առկա են մի շարք խնդիրներ, օրինակ՝ 2018թ. հաստատված Կառավարման խորհրդի և Մանկավարժական խորհրդի կանոնակարգում և 2023թ, հաստատված ռազմավարական ծրագրում նշվում է ամբիոնների մասին, սակայն ամբիոններ քոլեջում մինչ 2023-2024 ուստարին չեն գործել, այլ գործել են առարկայական հանձնաժողովները՝ հումանիտար, և սոցիալ-տնտեսագիտական առարկաների, ընդհանուր մասնագիտական և դեղագործական առարկաների, հատուկ մասնագիտական առարկաների: Հարկ է նշել, որ փաստաթղթերում հանդիպում են նույն ամբիոնի տարբեր անվանումներ, օրինակ քոլեջի ամբիոնի կանոնակարգում նշվում է՝ «Հումանիտար, և սոցիալ-տնտեսագիտական առարկաների ամբիոն», որը տարբերվում ԿԽ-ի նիստում արձանագրված «ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական» անվանումից: Փաստաթղթային

վարչարարության խնդիրները արտահայտվում են նաև կանոնակարգերի մշակման և հաստատման գործընթացներում, մասնավորապես պաշտոնների անձնագրերի հետ միաժամանակ քոլեջում առկա են դասախոսի, կարիերայի պատասխանատուի, որակի ապահովման պատասխանատուի, ուսումնական և կազմակերպչադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենների տեղակալների կանոնակարգերը: Վերոնշյալ պաշտոնների անձնագրերի և կանոնակարգերի դիտարկումը ցույց է տալիս, որ փաստաթղթերում առկա են որոշ հակասություններ, օրինակ՝ կարիերայի ուղղորդման պատասխանատուի համար մշակվել է և պաշտոնի անձնագիր (2021թ.) և կանոնակարգ (2019թ.), որոնք ամբողջովին արտատպված են մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնի ուղեցույցից: Կարիերայի ուղղորդման պատասխանատուի կանոնակարգում նշվում է՝ ՄՈՒՀ-ում կարիերայի ստորաբաժանման օրինակելի կանոնակարգ, որտեղ դիտարկվում է կարիերայի ստորաբաժանման աշխատանքները, իսկ պաշտոնի անձնագրում նշվում է պատասխանատուի աշխատանքի նկարագիրը, գործառույթները և այլն: Հարկ է նշել, որ «Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման քաղաքականությունը» նույնպես վերաբերվում է պատասխանատուի գործառույթներին, որոնք իրենց բովանդակությամբ նույնական են վերոնշյալ պաշտոնի անձնագրի հետ: Նմանօրինակ պատկեր է նաև ստորաբաժանումների կանոնակարգերի հետ կապված օրինակ՝ առկա է ՈՒԽ կանոնակարգ և ՈՒԽ կանոնադրություն, որոնք իրենց բովանդակությամբ գրեթե չեն տարբերվում միմյանցից:

ՄՈՒՀ-ը մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման գնահատումը փոխկապակցում է ընթացիկ քննությունների, ստուգարքների ուսումնական և նախաավարտական պրակտիկաների, ինչպես նաև պետական ամփոփիչ որակավորման քննությունների արդյունքների հետ: Կրթական ծրագրերի վերլուծությունը և գնահատումը իրականացվում է նաև կրթության որակի ապահովման պատասխանատուի, կարիերայի կենտրոնի պատասխանատուի կողմից իրականացվող հարցումների միջոցով: Այդուհանդերձ ՄՈՒՀ-ը դեռևս չի վերլուծել հարցումների արդյունքների, քննությունների արդյունքների, ամփոփիչ որակավորման քննությունների հանձնաժողովի նախագահի կարծիքներից ստացվող տեղեկատվության օբյեկտիվությունը և հուսալիությունը, հստակ չէ նաև, թե որքանով են դրանք կիրառություն գտել և նպաստել ՄԿԾ-ների բարելավմանը:

ՄՈՒՀ-ը իր գործընթացների քոլեջի համար կարևոր միջոցառումների վերաբերյալ հրապարակումներ է կատարում հիմնականում սոցիալական էջերի միջոցով, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԻՎ զեկույցում նշվող կայքէջը դեռևս կառուցման փուլում է: Քոլեջը իր շահակիցների համար անհրաժեշտ տեղեկատվության հրապարակումները իրականացնում է նաև ցուցատախտակների միջոցով: Այդուհանդերձ, քոլեջի կողմից տեղեկատվության լուսաբանման գործիքակազմը դեռևս չի ապահովում հրապարակումների պարբերականությունը և հասանելիությունը ներքին և արտաքին շահակիցների համար, մյուս կողմից, քոլեջը չի գնահատել իր կողմից կատարված հրապարակումների արդյունավետությունը, օրինակ դիմորդների հավաքագրման նպատակով, չկան ներդրված գնահատող մեխանիզմներ:

**Դատողություններ:** Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջի կառավարման գործընթացները համակարգված են համաձայն քոլեջի կազմակերպական կառուցվածքի, ստեղծված են անհրաժեշտ կոլեգիալ օղակները և ապահովված է ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը կառավարման գործընթացներում: Փորձագիտական խումբը դրական է համարում Կառավարման խորհրդի գործուն մասնակցությունը քոլեջի ընթացիկ նպատակների և խնդիրների իրականացման մեջ, իսկ գործատու անդամների մասնակցությունը և ակտիվ հետաքրքրվածությունը գործընթացների դրական ընթացքով, կրթական ծրագրերի իրականացման արդյունավետության բարձրացման ուղղությամբ, էապես նպաստում են քոլեջի զարգացմանը և աշխատաշուկան համապատասխան կադրերով համալրմանը:

Դրական է, որ ՄՈՒՀ-ի ֆինանսատնտեսական գործունեությունը ապահովում է տարեկան կտրվածքով եկամուտների և ծախսերի կառավարումը, այս տեսանկյունից ՄՈՒՀ-ը ընտրել է ճկուն կառուցակարգ իր ընթացիկ խնայողությունները ուղղելով կրթական ծրագրերի իրականացման համար պահանջվող ծախսերը իրականացման համար, դրանք ներառելով այլ ծախսեր հոդվածում: Այդուհանդերձ ֆինանսական ռեսուրսների երկարաժամկետ պլանավորում առկա չէ, ֆինանսական միջոցների բաշխումը փոխկապակցված չէ ՌԾ-ի նպատակների իրականացման հետ, որը կարող է հանգեցնել ֆինանսների ոչ արդյունավետ կառավարման, վտանգելով ռազմավարական առաջնահերթությունների իրականացումը, այս տեսանկյունից ֆինանսական միջոցների և ՌԾ պլանավորման մեխանիզմների փոխկապակցումը, հիմնված ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականության վրա, կնպաստի քոլեջի ՌԾ-ի իրականացման արդյունավետության բարձրացմանը:

Կառավարման կառուցվածքային գծապատկերը արտահայտում է կենտրոնացված կառավարման համակարգ, գրեթե բոլոր ստորաբաժանումները (բաժինները) ուղիղ ենթակայություն ունեն տնօրենին, որը հանգեցնում է հորիզոնական կապերի թույլ արտահայտմանը և նվազեցնում է կառավարման արդյունավետությունը:

Փորձագիտական խմբի դիտարկումները ցույց են տալիս, որ քոլեջի վարչական և ուսումնաօժանդակ աշխատակիցները ներգրավված են ինչպես կառավարչական այնպես էլ դասավանդման գործընթացներում, զբաղվում են հասարակական նշանակության միջոցառումների կազմակերպմամբ, ինչը հանգեցնում է աշխատանքային գերբեռնվածության, բացի այդ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա են գործառույթների բաշխման խնդիրներ, ինչպես օրինակ գործառույթների կրկնություններ կ որը հանգեցնում է մի շարք աշխատանքների կրկնակի կատարման, ինչպիսիք են դասալսումները, սկսնակ դասավանդողների մեթոդական ուղղորդումը, հաճախումների վերահսկողությունը և այլն, սակայն այս աշխատանքներում գրեթե բացակայում է կատարողների միջև համագործակցությունը: Վերոնշյալ խնդիրները հանգեցնում են գործառնական կապերի արդյունավետության նվազմանը, որը նախ և առաջ անդրադառնում է հորիզոնական համագործակցության վրա: Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջի փոքրաթիվ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակիցների պարագայում և համեմատաբար փոքրաթիվ դասախոսական և ուսանողական համակազմի համար, գործառույթների հստակ

բաշխվածությունը և կրկնություններից խուսափումը էապես կբարձրացնի ՌԾ-ի կատարողականը, ինչպես նաև կնպաստի կառավարման ուղղահայաց և հորիզոնական կապերի համաչափ զարգացմանը: Այս համատեքստում առանձնակի ուշադրության է արժանի Որակի ապահովման պատասխանատուի (ստորաբաժանման) աշխատանքների և դերակատարության հստակեցումը, որպես կառավարման արդյունավետությունը գնահատող օղակ, ապահովելով օբյեկտիվ և անաչառ ուսումնասիրություններ իրականացնելու համար անհրաժեշտ գործառնական կապեր և միջավայր:

Քոլեջի ռազմավարական առաջնահերթություն հանդիսացող կրթության որակի բարելավումը անշեղ իրականացնելու համար, իսկ բոլոր կրթական ծրագրերի համար մեկ պատասխանատուի առկայությունը կարող է հանգեցնել կրթական ծրագրերի իրականացման արդյունավետության նվազմանը, այս իմաստով գործընթացների ապակենտրոնացումը կարևոր է հաշվի առնելով ՄԿԾ-ների շարունակական բարելավման մեխանիզմների կատարելագործման անհրաժեշտությունը: Ըստ էության ամբիոնների բաշխման առարկայական մոտեցումը և ներկա կարգավիճակը թույլ չի տալիս ամբիոնը դիտարկել, որպես կրթության կազմակերպող և պատասխանատու օղակ, քանի որ նրա դերը սահմանափակված է մեթոդական աշխատանքների վերահսկողությամբ: Կարևոր է, որ քոլեջը գնահատի ամբիոնի դերակատարությունը և իրական ներուժը, ինչպես ՄԿԾ-ների կառավարման և կազմակերպման, այնպես էլ դասավանդողների ներգրավման, բեռնվածության համակարգման հարցերում:

Փորձագիտական խումբը դրական է համարում կառավարման օղակներում ներքին շահակիցների ներգրավվածությունը, սակայն նրանց ակտիվ մասնակցությունը իրենց առնչվող որոշումների կայացմանը տեսանելի չէ, այսուհանդերձ փորձագիտական խմբի վերլուծությունները ցույց են տալիս, որ օրինակ մանկավարժական խորհրդում ներգրավված են բոլոր դասավանդողները, նրանցից շատերը նաև հանդիսանում են կառավարիչներ, ովքեր քաջատեղյակ են քոլեջի հիմնական խնդիրներին, որը մի կողմից դրական է, մյուս կողմից հանգեցնում է օբյեկտիվ և անաչառ կարծիքների և քննադատության բացակայությանը և ինչ որ առումով կարիքների վեր հանման տեսանկյունից պասիվությանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ աշխատակիցների գործառույթների հստակեցումը և տարանջատումը, փոխահամաձայնեցված աշխատանքների կազմակերպումը, ամբիոնների դերի հստակեցումը, դասավանդողների բեռնվածության համակարգումը, թույլ կտան քոլեջին ստեղծել կուռ համակարգված կառավարման համակարգ, որն իր հերթին կնպաստի ռազմավարական արդյունավետ պլանավորմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ 2023-2028 ՌԾ-ն իր կառուցվածքով և բովանդակությամբ բարելավվել է ի համեմատություն նախորդ ՌԾ-ի, սակայն խնդրահարույց է, որ քոլեջը հնգամյա պլան ժամանակացույցը կազմել է ընդհանրական մոտեցմամբ, չհստակեցնելով քայլերի հաջորդականությունը ըստ ժամկետների և պատասխանատուների: Հարկ է նշել, որ ռազմավարական նպատակներին հանգեցնող գործողությունները կրկնվում են, իսկ սահմանված ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման ցուցանիշները հստակ քանակական և որակական ձեռքբերումներ չեն արտահայտում, որը կարող է հանգեցնել սահմանված նպատակների թերի իրագործմանը: Այս համատեքստում փորձագիտական խումբը

մտահոգիչ է համարում առկա մեխանիզմների արդյունավետությունը գնահատող մեխանիզմների բացակայությունը քոլեջում, որը հնարավորություն չի տալիս քոլեջին գնահատել տարբեր գործընթացներում իր կողմից ներդրված ռեսուրսների (մարդկային, նյութական, ֆինանսական) կիրառման արդյունավետությունը:

Անդրադառնալով քոլեջի ռազմավարական պլանավորման մոդելին, հարկ է նշել որ բոլոր մակարդակներում գերակայում է կարճաժամկետ պլանավորումը, իսկ երկարաժամկետ պլանավորման փաստաթղթի և կարճաժամկետ պլանների միջև առկա է բովանդակային խզվածք, ըստ էության ստորաբաժանումները շարունակում են պլանավորել իրենց գործառույթների կատարումը, սակայն տեսանելի չէ, թե ո՞ր ռազմավարական նպատակի իրագործմանն է միտված իրենց գործունեությունը և ինչ ցուցանիշներ են ակնկալվում ապահովել և բարելավել: Այսպիսի դրական փորձ կարելի է դիտարկել, ՌԱ պատասխանատուի աշխատանքային պլանը, որը քոլեջը կարող է տարածել այլ ստորաբաժանումների վրա, միևնույն ժամանակ ուշադրություն դարձնելով իրատեսական ակնկալվող արդյունքների և հստակ քանակական և որակական ցուցանիշների սահմանմանը:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում նաև այն փաստը, որ պլանավորման փաստաթղթերը և հաշվետվությունները հիմնականում փոխկապակցված չեն քոլեջի ՌԾ-ի իրականացման գործողությունների պլանի հետ, որը քոլեջում հանգեցնում է ՊԻԳԲ շրջափուլի հատվածային կիրառությանը: Հաշվի առնելով, որ ակնկալվող արդյունքների արդյունավետության գնահատման ցուցանիշներ դեռևս ներդրման փուլում են, իսկ հաշվետվությունների վերլուծական բաղադրիչը ինստիտուցիոնալ մակարդակում թույլ է զարգացած, հաշվետվությունների, հարցումների և այլ մշտադիտարկման մեխանիզմների լավարկումը կնպաստի տվյալահենք որոշումների կայացմանը, որտեղ կարևոր է ինչպես ներքին միջավայրի, այնպես է արտաքին գործոնների վերլուծությունը, որոնք կարող են փաստացի հիմք հանդիսանալ որոշումների կայացման և հետագա պլանավորման համար:

Դրական է, որ քոլեջը որոշակիորեն իրականացնում իր վրա ազդող ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրություն, ընդգծելով որոշակի ուղղություններ: Դրական է, որ ուսումնասիրությունները նաև հիմք են հանդիսացել որոշումների կայացման համար, օրինակ նոր կրթական ծրագրերի ներդնումը հաշվի առնելով աշխատաշուկայի կարիքները: Փորձագիտական խումբը շեշտադրում է, այն հանգամանքը, որ ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրության գործիքակազմը՝ հաշվետվություններ, հարցումների արդյունքներ, դեռևս թույլ չի տալիս օբյեկտիվ և անաչառ տվյալների մշակմանը, երբեմն ապահովված չէ բազմակարծությունը, վերլուծությունների հիմնավորվածությունը տեղեկատվական աղբյուրներով, որը կարող է հանգեցնել սուբյեկտիվ եզրահանգումների: Քոլեջը կարող է իր կրթական ծրագրերի ներդրման դրական փորձը տարածել նաև մյուս գործընթացների վրա, բարելավելով ուսումնասիրության և գնահատման գործիքակազմը, ինչպես նաև ապահովելով իր որոշումների եզրակացությունների հիմնավորվածությունը:

Փորձագիտական խումբը դրական է համարում ՄՈՒՀ-ում պաշտոնների անձնագրերի մշակումը և հաստատումը, ինչպես նաև փաստաթղթային վարչարարության բարելավման միտումները: Այսուհանդերձ առկա են մի շարք հրատապ լուծումներ պահանջող խնդիրներ,

մասնավորապես ՄՈՒՀ-ը պետք է գնահատի փաստաթղթերի իրավական և կիրառական նշանակությունը, հստակ տարանջատելով պաշտոնի անձնագիր, թե պաշտոնի կանոնակարգ, կանոնադրություն թե կանոնակարգ, ընդ որում ուշադրություն հատկացնելով փաստաթղթի անվանման և բովանդակության համահնչեցմանը, օրինակ քաղաքականության ներքո ներկայացվում է գործառույթներ, ինչպես նաև գործընթացների և փաստաթղթերի համապատասխանությանը: Վերոնշյալ խնդիրների համակարգումը կնպաստի տվյալ փաստաթղթի ներդրման և կիրառման արդյունավետության բարձրացմանը, զերծ մնալով ինքնանպատակ փաստաթղթերի, կանոնակարգերի, քաղաքականությունների մշակումից, որոնք կիրառության մեջ պիտանի չեն ՄՈՒՀ-ի համար և չեն հանդիսանում որոշումների հիմք, չեն ապահովում հստակ ընթացակարգերի իրականացումը: Փաստաթղթային վարչարարության իրականացումը որակի ապահովման սկզբունքով, այդ գործընթացներում ակտիվ ներգրավելով շահակիցներին, կհանգեցնի կառավարման համակարգի լավարկմանը, ինչը իր ռազմավարական ծրագրով ակնկալում է ՄՈՒՀ-ը:

Դրական դիտարկելով ՄՈՒՀ-ում մասնագիտական կրթական ծրագրերի և այլ գործընթացների գնահատման համար որոշակիորեն կիրառվող մեխանիզմների առկայությունը, փորձագիտական խումբը նշում է, որ դրանք բազմազանեցման կարիք ունեն, ինչպես նաև անհարժեշտ է գնահատել այդ գործիքների արդյունավետությունը, որպես օբյեկտիվ տեղեկատվության աղբյուր գործընթացների վերաբերյալ քանակական և որակական տեղեկատվության հավաքագրման նպատակով, այս մոտեցումները կարևոր են նաև տեղեկատվության հրապարակման մեխանիզմների բազմազանեցման և դրանց արդյունավետության գնահատման գործիքակազմի ներդրման համար:

Քոլեջի կայքեջի ստեղծումը կարող է առաջընթաց քայլ լինել ՄՈՒՀ-ի համար, որպես հրապարակայնության ապահովման մեխանիզմ:

**Եզրահանգում:** Հաշվի առնելով, որ ԱՊԲՔ-ում կառավարման գործառնական կապերը հստակեցման կարիք ունեն, ապահովված չէ ստորաբաժանումների միջև հորիզոնական համագործակցությունը, առկա են գործառույթների կրկնություններ, երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորման մեջ առկա են խզվածքներ, վերջիններս լիովին չեն արտահայտում քոլեջի ռազմավարական նպատակներին հասնելու ճանապարհային քարտեզը, փաստաթղթային վարչարարությունը չի իրականացվում որակի ապահովման սկզբունքով, գործընթացների արդյունավետության գնահատման ցուցանիշները հիմնականում չունեն քանակական և որակական ցուցիչներ, հաշվետվությունները և գնահատման մեխանիզմները լիովին չեն նպաստում տվյալահենք որոշումների կայացմանը, առկա չեն գնահատման գործիքակազմի արդյունավետությունը գնահատող մեխանիզմներ, ՄՈՒՀ-ը չի բավարարում չափանիշ 2-ի պահանջները:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Արարատի պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

# III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:**

**Փաստեր:** Քոլեջն իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագիր 5 մասնագիտություններով՝ «Քույրական գործ» («Բուժքույր/բուժեղբայր» որակավորում), «Մանկաբարձական գործ»՝ («Մանկաբարձ» որակավորում), «Ատամնատեխնիկական գործ»՝ («Ատամնատեխնիկ» որակավորում), «Դեղագործություն»՝ («Դեղագործ» որակավորում), «Բուժական կոսմետոլոգիա»՝ («Բուժքույր/բուժեղբայր կոսմետոլոգ» որակավորում)։ Քոլեջում ուսումնական գործընթացը կազմակերպվում է առկա ուսուցմամբ՝ հիմնական կրթության (9-ամյա) հիմքով (ուսման տևողությունը 3 կամ 4 տարի) և միջնակարգ կրթության (12-ամյա) հիմքով (ուսման տևողությունը 2 կամ 3 տարի), և հեռակա ուսուցմամբ՝ «Դեղագործություն» մասնագիտությամբ, որը ներդրվել է սկսած 2019թ. հաշվի առնելով միջին և ավելի բարձր տարիքի զբաղվածություն ունեցող քաղաքացիների հետաքրքրվածությունը տվյալ մասնագիտության նկատմամբ։

Համաձայն քոլեջի 2023-2028թթ. ՌԾ-ի՝ քոլեջի առաքելությունը աշխատաշուկայի պահանջները բավարարող միջին մասնագիտական կրթությամբ, առողջապահության ոլորտի մրցունակ մասնագետների պատրաստումն է։ Քոլեջը լինելով տարածաշրջանում բժշկական ոլորտում միջին մասնագիտական կրթություն իրականացնող միակ հաստատությունն ապահովում է կադրային պահանջարկը, իսկ ուսանողների զգալի մասն աշխատում է մասնագիտությամբ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ օրինակ, «Արարատի հիվանդանոց ԲԿ»-ում աշխատողների մոտ 80%-ը քոլեջի շրջանավարտներ են։ Քոլեջը իրականացրել է աշխատաշուկայի վերլուծություն, որտեղ ամփոփված են վերջին տարիներին խոշոր գործատուների կողմից մասնագետների պահանջարկը ըստ մասնագիտությունների, ինչպես նաև մասնագիտական կողմնորշման աշխատանքների շրջանակներում շահակիցների վեր հանված կարիքները, որոնք հիմք են հանդիսացել օրինակ՝ «Բուժական կոսմետոլոգիա» ծրագրի ներդրման համար (2021թ.)։

Քոլեջը միջին մասնագիտական կրթություն իրականացնելիս առաջնորդվում է ՀՀ ՊԿՉ-ներով ու օրինակելի մոդուլային ծրագրերով։ Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ իրականացվող ՄԿԾ-ներում մասնակիորեն տեղայնացվել են ՊԿՉ-ները, հիմնականում կարևորելով տեսական և գործնական ժամերի հարաբերակցության բաշխումը՝ գործնական ժամերի գերակայությամբ բոլոր մոդուլների շրջանակում, սակայն էական բովանդակային փոփոխություններ չեն եղել։ Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ չնայած վերը նշվածին որոշ մասնագիտական մոդուլներում դեռևս առկա են տեսական և գործնական ժամերի փոփոխության անհրաժեշտություն, օրինակ՝ «Ընդհանուր Հոգեբանության հիմունքներ», որը շեշտադրվում էր պրակտիկ ոլորտից ներգրավված սկսնակ դասախոսների կողմից։

Քոլեջը չունի ՄԿԾ սահմանված վերջնարդյունքներ, առաջնորդվում է մոդուլների ակնկալվող արդյունքներով: ԻՎ զեկույցում ներկայացված է որոշակի քարտեզագրում ՄԿԾ մոդուլների ակնկալվող արդյունքների և ՈԱՇ վերջնարդյունքի համադրությամբ, որտեղ ներառված են տարբեր ծրագրերից մի քանի մոդուլների ակնկալվող արդյունքներ:

Ուսումնական պլանների դիտարկումը ցույց տվեց, որ նախասիրական և ընտրովի առարկաներ ներառվել է միայն «Դեղագործություն» մասնագիտության ուսումնական պլաններում հաշվի առնելով ուսանողների առաջարկը, մյուս ծրագրերում առաջնորդվում են օրինակելի ուսումնական պլաններով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջը «Դեղագործություն» մասնագիտությունում ներդրել է «Պաթոլոգիայի հիմունքներ» ընտրովի առարկա, որն ունի մշակված ծրագիր, նույն մասնագիտության հեռակա ուսուցմամբ բաժնում ներդրվել է «Առաջին բուժօգնություն» առարկան, իսկ որպես նախասիրական առարկա՝ «Պացիենտի խնամքը», որը մշակվել է «Քույրական գործի հիմունքներ: Մարմնի բիոմեխանիկա: Բուժհաստատություններում թունավոր և վնասակար գործոնների ազդեցությունը բուժանձնակազմի վրա: Հիվանդի խնամք» մոդուլի հիման վրա:

Քոլեջը լիովին անցել է մոդուլային ուսուցման, սակայն որոշ ծրագրերում և փաստաթղթերում դեռևս առկա են մոդուլը որպես «առարկա» դիտարկելու դեպքեր օրինակ՝ «Ընդհանուր հոգեբանության հիմունքներ» մոդուլում, դասալսումների հաստատված ժամանակացույցերում: Դասավանդվող մոդուլներում հիմնականում առկա են ուսումնառության նյութերը՝ ՊԿՉ-ների պահանջներին համապատասխան, որոնք մշակվում են դասավանդող դասախոսների կողմից: Հիմնականում կիրառվում են օրինակելի մոդուլային ծրագրերը, այսուհանդերձ առկա է մոդուլային ծրագրերի մշակման դրական փորձ, օրինակ՝ «Ընդհանուր հոգեբանության հիմունքներ» մոդուլը, որի դրական փորձը չի ուսումնասիրվել և տարածվել:

Քոլեջն իր ՌԾ-ում կարևորել է դասավանդման գործընթացի արդիականացումը՝ դասապրոցեսում նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդրմամբ:

Քոլեջը դեռևս չունի դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մշակված քաղաքականություն, այսուհանդերձ հարկ է նշել, որ դասախոսները հիմնականում առաջնորդվում են ՊԿՉ-ով առաջարկվող մոդուլային ծրագրերի իրականացման մեթոդաբանությամբ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասավանդման և ուսումնառության մեթոդներն ընտրվում են դասախոսների կողմից՝ անհատական մոտեցմամբ: Դասախոսներին մեթոդների ընտրության հարցում աջակցում է մեթոդիստը իրականացնելով սեմինարներ և թեմատիկ զեկուցումներ, նորարար մեթոդների կիրառության վերաբերյալ: Փորձագիտական խմբի դասալսումները ցույց տվեցին, որ դասավանդման ընթացքում հիմնականում կիրառվում է դասախոսությունը, նախորդ նյութի կրկնության համար՝ հարց ու պատասխանի մեթոդները: Գործնական և լաբորատոր աշխատանքների ժամանակ հանձնարարվում են ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը դասի ժամանակ սահմանափակ է պայմանավորված պրոյեկտորների քանակով (2-ը), սակայն ուսանողներին տրվում են տեսասահիկների միջոցով ներկայացումների պատրաստման, ինչպես նաև թեմայի շրջանակներում պաստառների պատրաստման

հանձնարարականներ։ Ընթացիկ առաջադրանքները միտված են վերլուծական հետազոտական կարողությունների ձևավորմանը և առաջադրվում են գրեթե բոլոր մոդուլների շրջանակներում, ինչպես անհատական այնպես խմբային աշխատանքների ձևաչափով, օրինակ «Դեղագործություն» ՄԿԾ-ի ուսանողներին տրվել է խմբային հետազոտական աշխատանք տարբեր խմբերի դեղերի ազդեցության ուսումնասիրության վերաբերյալ, կատարում են նաև հերբարիումների և քսուկների պատրաստում, դեղատոմսերի ուսումնասիրություն։ Բոլոր ՄԿԾ-ներում մասնագիտական առանձնահատկություններով պայմանավորված կարևորվում է կլինիկական մտածողության ձևավորվումը իրավիճակային խնդիրների միջոցով, «Քույրական գործ» և «Մանկաբարձական գործ» ՄԿԾ-ների ուսանողների հետ քննարկվում են հիվանդանոցում ուսումնական պրակտիկայի ժամանակ եղած կլինիկական դեպքերը, ինքնուրույն անամնեզ են հավաքագրում, նաև դերային խաղեր են կիրառվում։ Ներքին շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ նմանօրինակ առաջադրանքներ տրվում են գրեթե բոլոր մոդուլների շրջանակներում, սակայն փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ոչ բոլոր մոդուլների փաթեթներում են արտահայտվում այդ առաջադրանքները, որտեղ բացակայում էին գնահատման հստակ չափանիշները։

Մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորումը հիմնականում կատարվում է պրակտիկ միջավայրում (հիվանդանոցում/ դեղատներում), ակտիվ ուսուցման պայմաններում, որին նպաստում է հատկապես դասապրոցեսի կազմակերպումը հիվանդանոցում, պրակտիկ ոլորտից ներգրավված դասախոսների կողմից։

Ուսանողների գործնական հմտությունների ձևավորումը հիմնականում իրականացվում է ուսումնական, արտադրական և նախասավարտական պրակտիկաների միջոցով։ Գործնական հմտությունների կրթական վերջնարդյունքների լիարժեք ձեռք բերման համար քոլեջը օգտվում է գործընկերային ռեսուրսներից՝ Արարատի բժշկական կենտրոն, պոլիկլինիկա, ատամնաբուժարաններ և դեղատներ, անհրաժեշտության դեպքում նաև իրականացնում է ճանաչողական այցեր։

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ մասնավորապես հիվանդանոցում անցկացվող պրակտիկաների ընթացքում ուսանողները ներգրավված են մասնագիտական տարբեր գործընթացներում՝ պրակտիկայի ղեկավարների վերահսկողությամբ։ Օրինակ՝ «Մանկաբարձական գործ» ՄԿԾ-ի շրջանակում ուսանողները տեսնում են ծնունդ ընդունելը, կեսարիան հատում (պացիենտի համաձայնությամբ), գործիքների նախապատրաստական և ախտահանման գործընթացները, իսկ «Դեղագործություն» ՄԿԾ-ի շրջանակում ուսանողները մասնակցում են դեղերի դասավորման գործընթացին։ «Քույրական գործ» ՄԿԾ-ի պրակտիկայի շրջանակներում ուսանողները իրականացնում են ներարկումներ, վերցնում են անալիզներ, տեսնում են հիվանդանոցի լաբորատորիայի աշխատանքները, պահպանելով ներհիվանդանոցային հիգիենայի կանոնները, ուսանողները հնարավորություն ունեն կամավորության սկզբունքով աջակցել որևիցէ բաժանմունքի աշխատանքներին։ Բոլոր պրակտիկանտները հնարավորություն ունեն կամավոր մասնակցելու հիվանդանոցին կից «Շտապ օգնության» կանչերին, ընդունարանի աշխատանքներին, առաջին օգնություն ցուցաբերելու հմտությունների ձևավորման համար։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը առավել մեծ ուշադրություն է հատկացնում պրակտիկաների արդյունավետ կազմակերպմանը, իրականացրել է հարցում (էլեկտրոնային ձևաչափով) ուսանողների շրջանում, սակայն մասնակցության թիվը շատ ցածր է արդյունքների օբյեկտիվ գնահատման համար: Պրակտիկայի ընթացքի վերահսկումը և գնահատումը իրականացվում է օրագրի միջոցով, որում ներկայացվում են պրակտիկայի թեմաները, և պրակտիկայի վայրում կատարված աշխատանքների նկարագրությունը: Պրակտիկան գնահատվում է պրակտիկայի անմիջական ղեկավարի (պրակտիկայի վայրից) և պրակտիկայի վարիչի կողմից 10 միավորային համակարգով: Օրագրերի ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ չնայած նշված է ուսանողի ձեռք բերած գիտելիքները և կատարված աշխատանքները պրակտիկայի ընթացքում, սակայն գնահատման համար առանձնացված բնութագրիչների (ուսանողի տեսական պատրաստվածությունը, քոլեջում ստացած գիտելիքների կիրառումը պրակտիկայում, ուսանողի վարքը, վերաբերմունքը հիվանդների և աշխատանքային ընկերների նկատմամբ և աշխատանքում տեղ գտած թերությունները) տեսակարար կշիռը միավորի ձևավորման մեջ և գնահատականի հիմնավորումը տեսանելի չեն:

Քոլեջում կիրառվում է ուսանողների գիտելիքների գնահատման 10 միավորային և պետական ամփոփիչ ստուգման/ատեստավորման համար 20 միավորային համակարգը: Ուսանողների ընթացիկ գնահատումը և հաճախումների հաշվառումը իրականացվում է մատյանների միջոցով:

Քոլեջում գործում են գնահատման գործընթացին առնչվող մի շարք կանոնակարգեր «Ուսանողների գնահատման կանոնակարգ» (2022), «Գնահատականի վերահանձնման կանոնակարգ» (2022), «Գերազանցության դիպլոմի շնորհման, գնահատականների վերահանձնման կանոնակարգ» (2021), «Գնահատման բողոքարկման կանոնակարգ» (2022), «Առաջադիմության ստուգման և գնահատման մեկնաբանություն» և «Ակադեմիական ազնվության կանոնակարգ» (2022): Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցուց տվեցին, որ նշված փաստաթղթերում առկա են բովանդակային խզումներ, օրինակ՝ «Գնահատականի վերահանձնման կանոնակարգ»-ը «Գերազանցության դիպլոմի շնորհման, գնահատականների վերահանձնման կանոնակարգ»-ի բովանդակային շարունակությունն է, սակայն ներկայացվում է որպես առանձին փաստաթուղթ: Պետական ամփոփիչ ստուգման, ինչպես նաև ակադեմիական ազնվության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է հատվածային տարբեր կանոնակարգերում:

«Ուսանողների գնահատման կանոնակարգ»-ում ներկայացված են գնահատման ռուբրիկները (մեկնաբանվում է միավորների ձևավորման պահանջները 1-10 միավորի տիրույթում) և սանդղակները, գնահատման համակարգը, սկզբունքները և գործիքների նկարագրությունը, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ դրանք գնահատման գործընթացում հաշվի չեն առնվում, մասնավորապես ակնկալվող արդյունքների գնահատման ժամանակ վերոնշյալ կանոնակարգին համապատասխան ռուբրիկներ չեն տեղայնացվել:

Համաձայն ինքնավերլուծության՝ քոլեջը կիրառում է գնահատման մի շարք մեթոդներ՝ հարց ու պատասխան, թեստային առաջադրանք, գործնական աշխատանքներ: Կիրառվում են

ուսանողների գնահատման հետևյալ ձևերը՝ ընթացիկ քննություններ, ռեֆերատներ, հետազոտական աշխատանքներ, ինչպես նաև պրակտիկաներ և ամփոփիչ ատեստավորման քննություններ: Հարկ է նշել, որ նախագծային այդ թվում խմբային, հետազոտական և ռեֆերատիվ աշխատանքների կատարման չափանիշներ և գնահատմանը ներկայացվող պահանջներ քոլեջը դեռևս չի մշակել, դասախոսները ինքնուրույն են որոշում գնահատման չափանիշները:

Ընթացիկ քննությունների հարցաշարերի դիտարկումը ցույց տվեցին, որ դրանք կազմվում են ըստ մոդուլների, որոնք հիմնականում ներառում են գիտելիքները ստուգող հարցեր, որոշ դեպքերում՝ առկա է նաև իրավիճակային խնդիրներ կամ գործնական կարողությունները ստուգող հարցեր, օրինակ՝ «Քույրական գործ» ՄԿԾ-ում «Քույրական գործը թերապիայում», «Մանկաբարձական գործ» ՄԿԾ-ում «Գինեկոլոգիա» մոդուլներից, սակայն այս մոտեցումը տարածված չէ բոլոր ՄԿԾ-ների մոդուլների գնահատման ժամանակ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը մշակել է բաց թողնված դասերի լրացման ձևաթերթ, որով վերահսկվում է ուսանողների կողմից բացակա դասերի լրացումը՝ տվյալ թեմայի շուրջ ռեֆերատ կատարելու միջոցով: Ռեֆերատների կատարումը կրում է ֆորմալ բնույթ, հիմնականում ուսանողները վերարտադրում են տվյալ դասախոսության թեման, մեծամասամբ բացակայում են հավելյալ աղբյուրների ուսումնասիրությունը և ակադեմիական ազնվության գործիքակազմի հետևողական կիրառությունը, իսկ որոշ դեպքերում նաև վերահսկողությունը դասախոսների կողմից:

Քոլեջի «Ակադեմիական ազնվության կանոնակարգ»-ում ներկայացված է ակադեմիական ազնվության բնորոշումը, ուսանողների կողմից ակադեմիական ազնվության վարքագծի դրսևորումները և պահպանումը, սակայն փաստաթուղթը մասնակի է անդրադառնում դասախոսներին, մասնավորապես շեշտադրելով նրանց դերը ակադեմիական ազնվության վերահսկողության տեսանկյունից, և չի սահմանում նրանց կողմից համապատասխան վարքագծի դրսևորման անհրաժեշտությունը, հստակ չեն ակադեմիական ազնվության խախտման հետևանքները: Նույն կանոնակարգում նշվում է նաև ուսանողների ակադեմիական ազնվության պահպանման հարցում ծնողների դերակատարությունը, որի ազդեցությունը գնահատված չէ տվյալ գործընթացում: Կանոնակարգը պրակտիկայում կիրառություն չունի: Ակադեմիական ազնվության վերաբերյալ անդրադարձ կա նաև բողոքարկման կարգում, մասնավորապես գրագողության բացահայտման դեպքում չեղյալ է համարվում քննաթերթիկում ուսանողի գրառումները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների կողմից գնահատականների բողոքարկման դեպքեր չեն եղել, նաև չեն արձանագրվել ակադեմիական ազնվության խախտման դեպքեր:

Քոլեջը իր գործող ռազմավարական ծրագրում չի անդրադարձել ՄԿԾ բենչմարքինգի իրականացմանը, ինչպես նաև չունի համապատասխան ընթացակարգեր և քաղաքականություն: Այսուհանդերձ փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջը համագործակցելով ՀՀ մի շարք քոլեջների հետ, համատեղ քննարկումների, փոխադարձ ճանաչողական այցերի մակարդակում իրականացնում է դասավանդման փորձի փոխանակում, սակայն քոլեջը դեռևս չի իրականացրել ՄԿԾ-ների, այդ թվում՝ նաև մոդուլային ծրագրերի առաջավոր փորձի համեմատական վերլուծություն տեղական կամ միջազգային այլ կազմակերպությունների

օրինակով: Շահակիցների հետ հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ առաջիկայում գործընթացների իրականացման համար քոլեջը նախատեսում է մշակել բենչմարքինգի իրականացման քաղաքականություն և ընթացակարգեր:

Քոլեջը ՄԿԾ-ի մշտադիտարկման և արդյունավետության գնահատման գործող հիմնական մեխանիզմներն են դասալսումները և ՈԱ պատասխանատուի ու կարիերայի պատասխանատուի կողմից իրականացվող հարցումները ուսանողների շրջանավարտների և գործատուների շրջանում: Վերոնշյալ հարցումների արդյունքները վերլուծվել են միայն քանակական բաղադրիչով: Դասալսումների արձանագրությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանցում հիմնականում նշվում են դասի մեթոդական ապահովման կողմերը, տրվում են նաև դասի մեթոդական կողմերի բարելավման առաջարկություններ: Հարկ է նշել, որ տեսանելի չեն ինչպես դասալսումների այնպես էլ հարցումների արդյունքների վերլուծության հիման վրա կայացված որոշումները՝ ՄԿԾ-ներում իրականացված բարելավումները:

ՄԿԾ մշտադիտարկման մեխանիզմ է նաև պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի արձանագրությունները, սակայն բացակայում է այս ուղղությամբ մշակված հստակ քաղաքականությունն ու ընթացակարգերը: Պետական ամփոփիչ ատեստավորման նախագահների հաշվետվությունների դիտարկումը ցույց տվեց, որ դրանցում ներառված չեն հանձնաժողովի նախագահի կարծիքները, միայն 2022-2023 ուսումնական տարվա հաշվետվություններում առկա է կարծիք, սակայն ուժեղ և բարելավման ենթակա կողմեր չեն նշվել (առկա չեն առաջարկություններ հետագա բարելավման ուղղությամբ):

**Դատողություններ:** Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջն իրականացնելով բժշկական ոլորտում միջին մասնագիտական կրթական ծրագրեր, ապահովում է տարածաշրջանի կադրային պահանջարկը, իր առաքելությանը և ռազմավարական ծրագրին համապատասխան: Փորձագիտական խումբը գտնում է, որ կրթական ծրագրերի շարունակականության ապահովման և զարգացման տեսանկյունից կարևոր է տարածաշրջանում աշխատաշուկայի համապարփակ ուսումնասիրությունն ու վերլուծությունը արտաքին շահակիցների ներգրավմամբ, ինչպես նաև մասնագիտությունների կրթական ծրագրերի տեղական կամ միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրությունն ու համեմատական վերլուծությունը, որոնք կօգնեն քոլեջին բարելավել ծրագրերը աշխատաշուկայի պահանջներին համապատասխան և դառնալ ավելի մրցունակ:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ Քոլեջը ՄԿԾ-ներն իրականացնելիս առաջնորդվում է ՊԿՉ-ներով, այսուհանդերձ փորձագիտական խումբը կարևորում է ՄԿԾ-ի իրականացման ամբողջական փաստաթղթային հենքի մշակումը, որտեղ կարտահայտվեն ՈԱՇ-ին համապատասխան, ներքին և արտաքին շահակիցների կարիքներից բխող կրթական ծրագրի վերջնարդյունքները, ուսումնական պլանը, վերջնարդյունքների ձեռք բերմանը միտված ՄԿԾ դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները: Փորձագիտական խումբը կարևորում է նաև մոդուլային ծրագրերը իրենց ամբողջությամբ (ուսումնառության ակնկալվող արդյունքներ, կատարման չափանիշներ, գնահատման մեթոդներ, հանձնարարականներ), ընտրովի մոդուլների, նախասիրական և պահուստային ժամերի նպատակային կիրառությունը:

Մոդուլների մշակումը, քարտեզագրումը և դրանց համապատասխանեցումը քոլեջի Ռազմավարական ծրագրերին ավելի արդյունավետ կդարձնի կրթական ծրագրերի իրականացումը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Քոլեջում իրականացվում են մեթոդական ուղղվածության աշխատանքներ միտված նորարար մեթոդների ներդրմանը և դասավանդման գործընթացի բարելավմանը, այսուհանդերձ դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության միասնական մոտեցման բացակայությունը կարող է հանգեցնել ուսումնառության ակնկալվող արդյունքների (վերջնարդյունքների) ոչ լիարժեք ձեռքբերմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ դասավանդման և ուսումնառության մեթոդների պարբերական ուսումնասիրությունների իրականացմանը զուգընթաց, դասախոսների դրական փորձի վերհանումն ու տարածումը կարող են նպաստել ուսումնառության արդյունավետության բարձրացմանը: Վերջնարդյունքների, մասնավորապես՝ գործնական կարողությունների և հմտությունների ձեռքբերման տեսանկյունից, փորձագիտական խումբը կարևորում է նորարարական մեթոդների կիրառմանը և ամրապնդմանը զուգահեռ շեշտադրել գործնական կարողություններ և վերլուծական միտք ձևավորող առաջադրանքների բազմազանեցումը, դրանց պլանավորումն ու համակարգվածության ապահովումը բոլոր ՄԿԾ-ներում:

Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջում գնահատման համակարգին վերաբերվող մի շարք կանոնակարգերի առկայությունը, սակայն դրանց համեմատությունը և համադրումը թույլ են տալիս փաստել փաստաթղթային հենքի վերանայման անհրաժեշտությունը, որը կբխի գնահատման գործընթացներին վերաբերվող տեղեկատվության և ընթացակարգերի համակարգված և մատչելի ներկայացման սկզբունքերից, որոշ դեպքերում անհրաժեշտ է տեղայնացնել կանոնակարգը քոլեջում առկա վիճակին համապատասխան: Կանոնակարգերի վերանայումը կնպաստի նաև գնահատման մեթոդների ընտրության միասնական մոտեցումների մշակմանը և գնահատման հստակ չափանիշների սահմանմանը: Փորձագիտական խումբը կարևորում է գնահատման չափանիշների ներդրումը ընթացիկ գնահատման գործընթացում, և գնահատման ռուբրիկների մշակումը կախված առաջադրանքների բնույթից: Ռեֆերատների, նախագծային և հետազոտական աշխատանքների կատարման չափանիշների մշակումը և դրանց փոխկապակցումը ակադեմիական ազնվության ապահովման գործուն մեխանիզմների հետ, թույլ կտա քոլեջին առավել ամրապնդել հետազոտության և ուսումնառության կապը՝ նպաստելով ուսանողների վերլուծական և հետազոտական կարողությունների զարգացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում Քոլեջում մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման որոշակի մեխանիզմների կիրառումը, այնուամենայնիվ խումբը գտնում է, որ դրանք ունեն բազմազանեցման անհրաժեշտություն, ինչը կբխի ՄԿԾ բարելավման տրամաբանությունից, կարևորելով գնահատման արդյունքների կիրառությունը հետագա պլանավորման աշխատանքներում: ՄԿԾ մշտադիտարկման հստակ ընթացակարգերի բացակայությունը թույլ չի տալիս քոլեջին համակարգել առկա մեխանիզմները և բարձրացնել կիրառվող գործիքակազմի արդյունավետությունը: Այս համատեքստում կարևոր է բենչմարքինիգի ընթացակարգերի

մշակումը և ներդրումը քոլեջում, ինչը թույլ կտա ուսումնասիրել, փաստաթղթավորել և տարածել դրական փորձը, այն դարձնել ՄԿԾ բարելավման գործիք, նպաստելով ՄԿԾ-ների պարբերական վերանայման և բարելավման մշակույթի տարածմանը, քոլեջում մրցունակ մասնագետի պատրաստմանը և իր առաքելության ամբողջական իրականացմանը:

**Եզրահանգում:** Հաշվի առնելով, որ Արարատի պետական բժշկական քոլեջն իրականացնում է իր առաքելությանը, ՊԿՉ-ներին և ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին համապատասխան կրթական ծրագրեր, կիրառվում են ուսանողների գիտելիքների, գործնական կարողությունների և հմտությունների ձևավորմանը նպաստող դասավանդման և ուսումնառության մեթոդներ, տրվում են վերլուծական և հետազոտական կարողություններ ձևավորող առաջադրանքներ, կարևորվում է մասնագիտական կլինիկական մտածողության ձևավորումը, որոշակիորեն առկա է ՄԿԾ մշտադիտարկման գործիքակազմ փորձագիտական խումբը գտնում է, որ Արարատի պետական բժշկական քոլեջը բավարարում է չափանիշ 3-ի պահանջներին:

**Եզրակացություն**: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Արարատի պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

## IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:**

**Փաստեր:** ԱՊԲՔ-ում՝ 2021 թվականից, ընդունելությունը կազմակերպվում է առցանց՝ dimord.emis.am կայքի միջոցով, հիմնական կրթության հիման վրա: Ընդունելության մասին քոլեջը շահակիցներին տեղեկացնում է ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերի միջոցով, ինչպես նաև դիմորդների հավաքագրման նպատակով մասնագիտական կողմնորոշման հանձնաժողովների միջոցով նախապատրաստական այցեր է իրականացնում տարածաշրջանի թվով 35 դպրոցներ, իրականացնում տեղեկատվական հանդիպումներ, որոնց ընթացքում բաժանվում են բուկլետներ, որոնցում ներկայացվում է ապագա դիմորդին անհրաժեշտ տեղեկատվությունը քոլեջի վերաբերյալ: Կարիերայի կենտրոնի և ՈՒԽ-ի հետ կողմից կազմակերպվում են «Բաց դռների օր» դպրոցների աշակերտների և ծնողների համար, որտեղ ծանոթացնում են քոլեջի ծավալած գործունեությանն ու ռեսուրսային բազային, քննարկում իրենց հետաքրքրող հարցերը:

Քոլեջում ընդունելությունն իրականացվում է կանոնակարգի համաձայն, որը կատարվում է համաձայն ՀՀ ԿԳ նախարարի «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը հաստատելու մասին» №254-Ն

հրամանով: Ընդունելությունն իրականացվում է «Կենսաբանություն» առարկայից բանավոր քննության արդյունքների հիման վրա:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում 2020-2023 ուսումնական տարվա ընդունելության արդյունքում նկատվում է ուսանողների թվաքանակի աճ, քոլեջում սովորում են 286 ուսանող, որից 38-ը՝ հեռակա: 2022-2023 թ. ընդունելության ցուցանիշը 109 ուսանող է: Փորձագիտական այցից և ինքնավերլուծությունից պարզ դարձավ, որ տարածաշրջանի մյուս քոլեջներում այլևս չեն գործում «Քույրական գործ», «Դեղագործություն» մասնագիտությունները, որով պայմանավորված քոլեջը կանխատեսվում է դիմորդների ներհոսք Արտաշատ քաղաքից, քանի որ այն տարածաշրջանում միակ ՄՈՒՀ-ն է, որն իրականացնում է բժշկական մասնագիտություններ:

ՄՈՒՀ-ում ուսանողների կրթական կարիքների վերհանման նպատակով հաճախ իրականացվում են բանավոր և գրավոր հարցումներ: Հարցումների արդյունքները վերլուծվում և քննարկվում են, իրականացվում են վերլուծություններ, որոնց արդյունքները ՈԱ պատասխանատուի կողմից ներկայացվում են քոլեջի ներքին շահակիցներին: Ըստ անհրաժեշտության, քոլեջի կողմից ձևավորում են ժամանակավոր հանձնաժողովներ, որոնք նպաստում են խնդիրների վեր հանմանն ու լուծմանը, օրինակ՝ Քույրական գործ ՄԿԾ-ում 3-րդ կուրսի ուսանողների կողմից առաջարկ է եղել ավելացնել Ուսումնական պրակտիկաների ժամաքանակը ևս երկու շաբաթով, որը քոլեջի կողմից ընդունվել և իրականացվել է, «Դեղագործություն» մասնագիտության ուսանողների առաջարկությամբ ներդրվել է «Պացիենտի խնամք» նախասիրական առարկան:

Քոլեջը ուսանողներին լրացուցիչ պարապմունքներ և խորհրդատվություններ է տրամադրում ըստ անհրաժեշտության: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների համար խորհրդատվությունները կազմակերպվում ու իրականացվում են և՛ անհատական, և՛ խմբային տարբերակով: Խորհրդատվական պարապմունքներ են նախատեսված նաև պետական, ամփոփիչ, ավարտական քննություններին նախորդող օրերին, որն իրականացվում է նախապես հաստատված ժամանակացույցով. քոլեջի կողմից կա հստակ պահանջ՝ պարապմունքներին բոլորի մասնակցությունը պարտադիր է: Խորհրդատվական պարապմունքներ են իրականացվում նաև բաց թողնված դասերը լրացնելու համար՝ համաձայն ԱՊԲՔ ներքին կանոնակարգի, ուսանողների բացակայությունների լրացման ընթացակարգի: Ըստ կարգի՝ յուրաքանչյուր ուսանող իր բաց թողնված դասաժամը կարող է լրացնել դասախոսների համար սահմանված հստակ ժամանակացույցով, որը փակցված էր յուրաքանչյուր լսարանի դռան վրա, որտեղ նշված էր համապատասխան օրվա հերթապահ դասախոսների անուն, ազգանունները: Բաց թողնված դասի լրացման համար ուսանողը կատարում է ռեֆերատ, որոնց ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հաճախ չեն պահպանվում նմանօրինակ աշխատանքներին ներկայացվող պահանջները և ակադեմիական մոտեցումները, ինչպիսիք են օգտագործված գրականության հղումներ, եզրակացություն և այլն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԱՊԲՔ-ն ուսանողների համար չի սահմանել վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց. նրանք ազատ են իրենց հուզող հարցերով դիմելու ցանկացած ստորաբաժանման աշխատակցի՝

չսահմանափակվելով ժամկետներով: Վարչական կազմին դիմելու առաջնային և կարևոր օղակ են համարվում նաև կուրսղեկները, ովքեր անհրաժեշտության դեպքում խորհրդատվություններ են մատուցում և աջակցում ուսանողներին ընթացիկ կրթական և անձնական հարցերում: Ուսանողները քոլեջի ղեկավար կազմին հիմնականում դիմում են վարձավճարների, կրթությունը շարունակելու վերաբերյալ հարցերով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը ներգրավել է մանկավարժ-հոգեբանի, որի ծառայություններից օգտվող ուսանողները հիմնականում դիմում են իրենց անձնական խնդիրների լուծման համար: Կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի հետ համատեղ դասախոսների, հոգեբան-մանկավարժի, կուրսղեկների կողմից կազմակերպվում են դասախոսությունները, բանավեճեր, քննարկումներ, ինչպես նաև պատրաստվում են պաստառներ տարբեր թեմաներով՝ Թրաֆիկինգի, թմրամոլության, ալկոհոլի վնասակար ազդեցությունների մասին:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԱՊԲՔ-ում 2019թ. գործում է Կարիերայի կենտրոն, որն ունի սահմանված կանոնակարգ և առաջնորդվում է տարեկան աշխատանքային պլանով: Իրականացնում է շրջանավարտների շրջանում տարեկան երկու անգամ բանավոր հարցումներ, հավաքագրում տեղեկություն նրանց զբաղվածության վերաբերյալ: Քոլեջի Կարիերայի կենտրոնը համագործակցում է տարածաշրջանի մի շարք գործատուների և կազմակերպությունների հետ, շրջանավարտներին ուղղորդում տարածքային զբաղվածության կենտրոններ, և հնարավորության դեպքում նաև նրանց աջակցում աշխատանք տեղավորման հարցում: Քոլեջի ուսանողները մասնակցում են ՀՀ-ում տեղի ունեցող մասնագիտական EXPO-ների, աշխատանքի տոնավաճառների, հաճախում ՀՀ բուհեր և միևնույն ուղղվածության քոլեջներ, ծանոթանում նրանց կրթական ծրագրերին, ինչպես նաև իրականացնում շրջայցեր, ոլորտի առաջատար կազմակերպություններ (հիվանդանոցներ, ատամնաբուժարաններ «Արարատի հիվանդանոց» բժշկական կենտրոն պոլիկլինիկա, դեղատներ):

Քոլեջի կարիերայի կենտրոնը սերտորեն համագործակցում է մարզային Կարմիր խաչ բարեգործական-սոցիալական կազմակերպության հետ, համատեղ իրականացրել թվով 23 միջոցառումներ վերջին երկու տարվա ընթացքում:

Քոլեջում Կարիերայի կենտրոնի կողմից իրականացվել են հարցումներ ուսանողների և գործատուների շրջանում, որոնց արդյունքների վերլուծություններից դուրս է բերվել պրակտիկաների ժամաքանակի պակասը: ԱՊԲՔ-ի կողմից կազմակերպվել են Քույրական գործ ՄԿԾ-ի ուսանողների մասնագիտական հավելյալ պրակտիկա ատամնաբուժարանում և ախտորոշման կենտրոնում, դեղագործների մոտ հավելյալ այցեր դեղատներ, որոնք ծրագրով նախատեսված չեն եղել:

Շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ Ատամնատեխնիկական գործ և Դեղագործություն ՄԿԾ-ի ուսանողների համար կազմակերպվում են տարբեր մոդուլների վերջնարդյունքների ապահովման նպատակով պրակտիկ այցելություններ՝ «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ, «Արփիմեդ» դեղագործական ընկերություն, «Էլտա Մեդ» բժշկական կենտրոնի ձուլարան, «Մանկաբարձական գործ» մասնագիտության ուսանողների համար «Մայրության դպրոցում» կազմակերպվել և իրականացվել են սեմինարներ մասնագիտական թեմաներով:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջը դեռևս չունի հետազոտական աշխատանքների կատարման կարգ, ուղեցույց: Ուսանողների շրջանում հետազոտական աշխատանքներն իրականացվում են առանձին մոդուլների, առարկաների (ըստ մոդուլի/ առարկայի առանձնահատկության), ուսումնական և նախաավարտական պրակտիկաների շրջանակներում: Հետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածությունը հիմնականում ապահովվում է անհատական աշխատանքների միջոցով, որոնք իրականանում են հերբարիումների պատրաստման, ռեֆերատների, պրոթեզների պատրաստման տեսքով:

ԱՊԲՔ-ում գործում է «Ուսանողական խորհուրդ», որն ունի սահմանված կանոնադրություն: «Ուսանողական խորհրդում» ներգրավված են քոլեջի 1-3-րդ բոլոր կուրսերից ուսանողներ. նրանց գործունեությանը աջակցում է քոլեջի կրթադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈւԽ-ն վերջին տարվա ընթացքում ձևավորել է մի քանի ներքին հանձնախմբեր, այդ թվում լրատվական, սոցիալական, սպորտի և առողջապահական, որոնցից յուրաքանչյուրը զբաղվում է իր գործառույթներով, օրինակ՝ լրատվականը աշխատում է ՈՒԽ ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերի համալրմամբ, սպորտի և առողջապահության հանձնախմբի առաջարկով իրականացվել է ֆուտբոլի առաջնություն հարակից դպրոցի թիմի հետ, սոցիալականը՝ աջակցել է Կարմիր խաչին օգնություն բաժանել Արցախից տեղահանված ընտանիքներին: ՈՒԽ նախաձեռնությամբ նաև նախատեսվում է ուսանողների շրջանում կազմակերպել մեդիագրագիտության դասընթացներ, որի համար արդեն իսկ ձեռք են բերվել նախնական պայմանավորվածություններ: Այսուհանդերձ, իր գործունեության շրջանակներում ՈՒԽ-ն հիմնականում չի իրականացնում ուսանողների իրավունքների պաշտպանությանը ուղղված միջոցառումներ, այլ զբաղվում է մշակութային, սպորտային և ժամանցային միջոցառումների կազմակերպմամբ, իսկ աշխատանքային պլանում ուսանողների իրավունքների պաշտպանության մասով աշխատանքներ դեռևս նախատեսված չեն, քանի որ իրավունքների խախտման նախադեպեր չեն եղել: Այցի ընթացքում նաև պարզ դարձավ, որ ՈՒԽ-ը ՈԱ պատասխանատուի աջակցությամբ կազմակերպել է էլեկտրոնային ձևաչափով հարցումներ ուսանողների շրջանում, պարզելու ՈՒԽ աշխատանքներից վերջիններիս գոհունակությունը, հարցման արդյունքները դեռևս ամփոփված չեն:

ՄՈՒՀ-ի ուսանողության շրջանում իրականացվել է հարցումներ, ռեսուրսների բավարարվածության վերաբերյալ, դասախոսների գնահատման, սակայն բացակայում են հարցումների արդյունքների որակական վերլուծությունները, առկա է միայն տոկոսային, քանակական տվյալներ:

**Դատողություններ:** Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ ԱՊԲՔ-ում գործում են դիմորդների հավաքագրման և մասնագիտական կողմնորոշման հստակ մեխանիզմներ, որոնց գործածության արդյունքում ապահովել է դիմորդների կայուն աճ վերջին 5 տարվա կտրվածքով: Սակայն, փորձագիտական խմբի դիտարկմամբ, անհրաժեշտության կա գնահատելու գործող մեխանիզմների արդյունավետությունը, որը թույլ կտա ՄՈՒՀ-ին առավել

լավարկելու կիրառվող մեխանիզմները՝ ապահովելով շարունակական բարելավում: Քոլեջի համար շահեկան է դիտարկվում այն փաստը, որ տարածաշրջանում հանդիսանում է միակ բժշկական մասնագիտություններ իրականացնող միջին մասնագիտական հաստատությունը, որը մի կողմից պարտավորեցնում է քոլեջին ապահովել որակյալ կրթական ծառայություններ, մյուս կողմից լրացնում է տարածաշրջանի բուժական կազմի պահանջարկը, ինչն ԱՊԲՔ-ին հնարավորություն է տալիս լինել մարզում առաջատարը:

Փորձագիտական խումբը կարևորում է այն հանգամանքը, որ ՄՈՒՀ-ում առկա է ուսանողների իրավունքները պաշտպանող մարմին՝ հանձինս Ուսանողական խորհրդի, որը իր ծավալած գործունեությամբ ուսանողների մոտ հիմնավորված է որպես ստեղծագործական և ժամանցային միջոցառումների կազմակերպման կառույց: Սակայն ՈՒԽ-ի դերը որպես ուսանողների իրավունքները բարձրաձայնող և պաշտպանող կառույց թե՛ ուսանողների, թե՛ ՈՒԽ-ի կողմից լիովին չի ընկալվում, ինչը կարող է հանգեցնել նրան, որ ՈՒԽ-ը կարող է կորցնել իր իրական դերակատարությունը, ինչի մասին փաստում է այն, որ ուսանողների կարիքների վեր հանման գործընթացում, որպես առաջնային օղակ շեշտադրվում է կուրսղեկների դերը, այս իմաստով ՈՒԽ-ին իր բուն գործառույթը իրականացնում է ոչ լիարժեք: ՈՒԽ ինքնավարության և իրական դերի ապահովումը թույլ կտա քոլեջին ներդնել ուսանողների կարիքների վեր հանման օբյեկտիվ և անաչառ մեխանիզմներ, որոնք կամրապնդեն և կբարձրացնեն ուսանողների ակտիվությունը կոլեգիալ մարմիններում իրենց առնչվող որոշումների կայացման համար:

Փորձագիտական խմբի կողմից դրական է գնահատվում նաև այն փաստը, որ քոլեջում պարբերաբար անցկացվում են ուսանողների կարիքների վեր հանման, ինչպես նաև ռեսուրսներից բավարարվածության վերաբերյալ հարցումներ: Սակայն հարցումների արդյունքների գնահատման վերլուծությունները, հետադարձ կապի մեխանիզմները, բացակայում են, որը հանգեցնում է որակի ապահովման ՊԻԳԲ շրջափուլի հատվածային կիրառությանը, մասնավորապես խզելով գնահատումից պլանավորում և բարելավում ընթացքը: Վերոնշյալ գործիքակազմի և վերլուծական բաղադրիչների ամբողջական ներդրումը կնպաստի գործընթացների արդյունավետության բարձրացմանը, քոլեջի նպատակների իրագործման համատեքստում:

Գովելի է այն փաստը, որ ուսանողներն իրենց հուզող հարցերով և առաջարկություններով ազատ, ցանկացած պահի, կարող են մոտենալ վարչական աշխատակազմին, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ կանոնակարգի և ժամանակացույցի սահմանումը գործընթացները առավել համակարգային կդարձնեն, ինչը կարևոր է քոլեջի հեռահար նպատակների՝ ուսանողների թվակազմի ավելացման տեսանկյունից:

Դրական է դիտարկվում քոլեջում մանկավարժ-հոգեբանի հաստիքի առկայությունը, ում ծավալած գործունեությունը ուսանողների մոտ մեծ վստահություն է վայելում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՄՈՒՀ-ը ուսանողներին տրամադրում է անհրաժեշտ խորհրդատվություն և ունենում են լրացուցիչ պարապմունքների հնարավորություններ, որոնց միջոցով նաև լրացվում են ուսանողների մոտ բաց թողնված թեմաները՝ ռեֆերատների կատարման միջոցով, որոշակիորեն նպաստելով թեմայի յուրացմանը, սակայն այս աշխատանքների կատարման որակական կողմին ներկայացվող պահանջներ ՄՈՒՀ-

ը ինստիտուցիոնալ մակարդակում չի սահմանել (քանի էջ, եզրակացություն, գրականության հղումներ և այլն), թողնելով դասախոսի կողմից ինքնուրույն չափանիշների սահմանմանը, որը կարող է հանգեցնել աշխատանքների ֆորմալ կատարմանը, առնաց որակական բաղադրիչի ապահովման, իր հերթին նվազեցնելով բաց թողնված դասերի լրացման մեխանիզմի արդյունավետությունը: Այս համատեքստում, փորձագիտական խումբը անհրաժեշտ է համարում վերլուծական և հետազոտական բաղադրիչի կարևորումը և կանոնակարգված ներդնումը, ինչպես ռեֆերատների այնպես էլ հանձնարարականների և անհատական աշխատանքների կատարման ընթացքում, այսպիսով բոլոր մակարդակներում կարևորելով ուսանողների կողմից վերջնարդյունքների ձեռքբերումը:

Դրական է գնահատվում Կարիերայի կենտրոնի կողմից ուսանողների համար իրականացրած աշխատանքները, որոնք նոր հնարավորությունների են տալիս և նպաստում ուսանող-գործատու կապի ամրապնդմանը, բացահայտելով՝ ինչպիսի հմտություններ են նրանց անհարժեշտ հետագայում գործատուին ներկայանալիս և աշխատելիս: Ինչպես նաև դրական է Կարիերայի կենտրոնի համագործակցությունը գործընկերների հետ, որոնք վերջին տարում առավել ակտիվություն են ցուցաբերում, այնուամենայնիվ համագործակցության շրջանակի ընդլայնումը, նոր գործընկերների ներգրավումը կնպաստի ուսանողների աշխատանք գտնելու և գործատուների հետ հաղորդակցման հնարավորությունների մեծացմանը:

**Եզրահանգում:** Հաշվի առնելով, որ ԱՊԲՔ-ում ներդրված են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության հստակ մեխանիզմներ, վերջին տարիներին ավելացել են դիմորդների և ուսանողների թվաքանակը, ուսանողները ազատ են վարչական անձնակազմին դիմելու հարցում, գործում են ուսանողների կարիերային նպաստող որոշակի ծառայություններ, ուսանողները ստանում են համապատասխան խորհրդատվություններ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊԲՔ-ը բավարարում է չափանիշ 4-ի պահանջներին:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Արարատի պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

## V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:**

**Փաստեր:** ԱՊԲՔ-ն դասախոսների և ուսումնաօժանդակ կազմի ընտրության ժամանակ առաջնորդվում է ՀՀ Աշխատանքային օրենսգրքի, Կրթության մասին, ՀՀ Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին օրենքների

պահանջներով, քոլեջի կանոնադրության համապատասխան ամրագրված դրույթներով: Դասախոսական կազմի աշխատատեղերի համալրումը անցկացվում է համաձայն Մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգի, ըստ որի հաստատությունը դասախոսի թափուր տեղի համար հայտարարում է մրցույթ, որի մասին հրապարակում է թերթի, և հաստատության սոցիալական էջերի միջոցով, նշելով աշխատանքի նկարագրությունը, պահանջվող որակավորումը և այլն: Դասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմը նշանակվում և ազատվում է տնօրենի կողմից՝ ՀՀ Աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

Քոլեջն իր 2023-2028թթ. Ռազմավարական ծրագրում շեշտադրել է կառավարում և կադրային քաղաքականություն ինչպես նաև դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմ ոլորտները որպես ռազմավարական առաջնահերթություններ: Քոլեջի առկա խնդիրների վերլուծության մեջ, առանձնացվում է դասախոսական կազմը որակյալ մասնագետներով համալրման խնդիրը, իսկ վերոնշյալ ռազմավարական ուղղություններում որպես նպատակ ընդգծվում է կադրային քաղաքականության կատարելագործումը, որի իրականացման համար պլանավորվում են դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական կոմպետենցիաների շարունակական բարելավումը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջը վերջին տարիներին ներգրավում է պրակտիկ ոլորտի մասնագետներ՝ մասնավորապես նեղ մասնագիտական բժշկական առարկաների դասավանդման համար: Պրակտիկ ոլորտից դասավանդող մասնագետների ներգրավումը հիմնականում իրականացվում է համատեղությամբ, առանց մրցույթի: Այդուհանդերձ, ՄՈՒՀ-ը աշխատանքի ընդունվելիս հաշվի է առնում՝ կրթության որակավորումը հաստատող փաստաթուղթը, աշխատանքային փորձը, կարևորում են մասնագիտական գիտելիքները և մանկավարժական հմտությունները, մասնագիտական վերապատրաստումները, անցկացվում է հարցազրույց տնօրինության կողմից, հաշվի առնելով վարքային և հաղորդակցման հատկանիշները: Անհրաժեշտության դեպքում թեկնածուներին ուղղորդվում են դասալսումների փորձառու դասախոսների մոտ:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքային գործառույթները, իրավունքները, պարտականությունները սահմանված են պաշտոնների անձնագրերում (լաբորանտի, հաշվապահի, կադրերի տեսուչի, մեթոդիստի): Դասախոսի կանոնակարգում նշվում է, որ բժշկական քոլեջի դասախոսը պետք է ունենա բարձրագույն մանկավարժական կամ բարձրագույն կամ միջին բժշկական կրթություն և մասնագիտական աշխատանքի փորձ: ՄՈՒՀ-ը չի սահմանել ըստ ՄԿԾ-ների դասախոսական կազմի կոմպտենցիաներին ներկայացվող պահանջներ, սակայն առաջնորդվում է ՊԿՉ-ներով՝ հաշվի առնելով մասնագետի որակավորման համապատասխանությունը դասավանդվող առարկային կամ մոդուլին:

ՄՈՒՀ-ը ներդրել է հարցումների անցկացման կարգ (2021), համաձայն որի դասախոսական անձնակազմի մասնագիտական որակները և հմտությունները ենթակա են մշտադիտարկման հարցումների միջոցով, որոնք պետք է կազմակերպվեն պարբերաբար, իսկ հարցաշարերը քննարկվեն շահակիցների շրջանակում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսների մասնագիտական որակների գնահատում իրականացվել է ուսանողների

շրջանում հարցումների միջոցով, նաև պարզ դարձավ, որ դասախոսները հիմնականում տեղեկացված չեն հարցաշարի բովանդակությանը: Հարցման արդյունքները թույլ են տալիս գնահատել ուսանողների գոհունակությունը դասախոսի աշխատանքից, սակայն խորքային վերլուծությունը չի իրականացվում, և ներկայացվում դասավանդողներին: Հարցումները թեև կազմակերպվել են պարբերաբար, սակայն դրանց արդյունքները որոշումների հիմք չեն հանդիսացել, մյուս կողմից դասավանդողները ոչ միշտ են հետաքրքրված հարցման տվյալներով:

ՄՈՒՀ-ում գործում է դասալսումների անցկացման և արդյունքների ամփոփման կարգ, համաձայն որի իրականացվում է դասախոսական կազմի մասնագիտական որակների և աշխատանքի գնահատումը առարկայական հանձնաժողովի նախագահի և անդամների մասնակցությամբ, մանկավարժական խորհրդում հաստատված ձևաթերթի համաձայն: Դասալսումները իրականացվում են նաև ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի, որակի պատասխանատուի, մեթոդիստի կողմից՝ համաձայն իրենց տարեկան աշխատանքային պլանների, նախապես սահմանված ժամանակացույցով: Դրանք կազմակերպվում են ինչպես սկսնակ դասախոսների, այնպես էլ երկարամյա մանկավարժական փորձ ունեցող դասավանդողների մոտ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասալսումների արդյունքները ըստ կանոնակարգի քննարկվում և վերլուծվում են առարկայական հանձնաժողովների (ամբիոնների) նիստերում: Մեթոդիստի կողմից իրականացված դասալսումների արդյունքներով մեթոդական բացթողումներ և թերություններ ունեցող դասախոսներն ուղղորդվում են փորձառու դասավանդողների մոտ դասալսումների, որից հետո կատարվում են կրկնակի դասալսումներ: ՈԱ պատասխանատուն դասալսումներ է իրականացնում հաշվի առնելով հարցումների արդյունքները, եթե ուսանողների կողմից առկա են եղել դժգոհություններ դասավանդման մեթոդներից:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսների գործունեության գնահատման համար դիտարկվում են նաև պրակտիկաների ղեկավարների և գործատուների արձագանքները ուսանողների գիտելիքների վերաբերյալ, ուսանողների հաջողությունները:

Հարկ է նշել, որ թեև առկա են դասախոսական կազմի գործունեության պարբերաբար գնահատման մեխանիզմներ, սակայն դրանք են գործում են իրարից անկախ՝ չհանդիսանալով դասախոսի կատարած աշխատանքների ընդհանրական գնահատականի ձևավորման հիմք, մյուս կողմից ամբողջությամբ չեն բացահայտում դասախոսական անձնակազմի մասնագիտական կարիքները:

Դասավանդողների կարիքների վերհանումն որոշակիորեն իրականացվում է առարկայական հանձնաժողովների (ամբիոնների) նիստերում, վեր հանված կարիքները և առաջարկները, ներկայացվում են մանկավարժական խորհրդի նիստում: Դասալսումների արդյունքում ընտրվում են մանկավարժամեթոդական վերապատրաստումների կարիք ունեցող դասավանդողները: Քոլեջը փորձում է հնարավորության սահմաններում իրականացնել դասավանդողների մասնագիտական զարգացմանն ու կատարելագործմանն ուղղված գործընթացներ, ինչպիսիք են միջոցառումները, սեմինարները, կոնֆերանսներն ու խորհրդատվությունները: Օրինակ՝ վեր հանված կարիքի հիման վրա ինֆորմատիկայի

դասախոսը կազմակերպել է աշխատակիցների համար համակարգչային տեխնոլոգիաներից օգտվելու հմտությունների ձևավորման դասընթաց: Կարիերայի պատասխանատուն փորձի փոխանակման նպատակով կազմակերպում է այցեր այլ ուսումնական հաստատություններ, օրինակ՝ Երևանի հենակետային բժշկական քոլեջում այցի ընթացքում իրականացվել է «Քույրական գործի հիմունքներ» մոդուլի շրջանակներում դասալսում և քննարկում: Մասնագիտական վերապատրաստումներ հիմնականում անցնում են պրակտիկ բժիշկ-դասախոսները, քոլեջին ներկայացնելով ՇՄԶ հաստատող փաստաթղթերը, քոլեջի կողմից կազմակերպված մասնագիտական վերապատրաստումներ չեն եղել:

Քոլեջը չունի սկսնակ դասախոսների ուղղորդման հստակ ընթացակարգեր, սակայն առկա են այս ուղղությամբ իրականացվող որոշակի քայլեր, մասնավորապես այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից պարբերաբար իրականացվող վերապատրաստման դասընթացներին, առաջնահերթություն է տրվում սկսնակ դասավանդողների վերպատրաստմանը՝ նեղ մասնագետների մանկավարժական կրթություն չունեցող և միջին մասնագիտությամբ դասավանդողների համար: Քոլեջի մեթոդիստը կազմակերպում է սեմինարներ, որոնց կարող են մասնակցել ոչ միայն սկսնակ, այլ նաև մասնագիտական հմտությունների կատարելագործման, դասավանդման համագործակցային մեթոդների ձեռքբերման կարիք ունեցող ցանկացած դասավանդող: Սկսնակ դասախոսներին աջակցում են փորձառու, երկարամյա աշխատանքային փորձ ունեցող դասավանդողները՝ խորհրդատվությունների, փորձի փոխանակման միջոցով:

Վերջին տարիներին Քոլեջը ունի դասախոսների թվի կայուն աճ 2022-2023 ուս տարում դասավանդում են թվով 37 դասախոսներ: Այդուհանդերձ, քոլեջում առկա է դասախոսական կազմի գերբեռնվածություն, վարչական աշխատանքի համատեղում: Այսպես՝ մեծ թվով դասախոսներ դասավանդում են միջին տվյալներով 6-7 մոդուլներ, ընդ որում երբեմն դրանք մասնագիտորեն շատ տարբեր են: Օրինակ՝ «Աղետների բժշկություն», «Անվտանգ. առաջին օգնություն», «Դեղաբանության հիմունքներ», «Հոգեբուժություն», «Պաթոլոգիայի հիմունքներ», «ՔԳ վարակիչ հիվանդությունների ժամանակ», «Բժշկական հոգեբանության հիմունքներ», «Համաճարակաբանություն», «Կլինիկական պաթոլոգիա» մոդուլները դասավանդում է նույն դասախոսը: Կամ՝ «Ակնաբուժություն», «Քիթ, կոկորդ, ականջի հիվանդություններ», «Անատոմիա», «Վիրաբուժական կոսմետոլոգիայի հիմունքներ», «Ներքին հիվանդություններ», «Թերապիա» մոդուլները դասավանդում է մեկ դասախոս, կամ՝ «Լատիներեն լեզու», «Պացիենտի կրթում», «Մարդու կենսագործունեության փուլերը», «Քույրական գործի հիմունքներ», «Հիգիենայի հիմունքներ», «Մանրէաբանության հիմունքներ» մոդուլները /31.08.2023թ.Հրաման թիվ 1/:

Քոլեջը վերջին տարիներին իրականացնում է կադրերի երիտասարդացման քաղաքականություն, սակայն այս ուղղությամբ տվյալների բազան՝ ըստ դասախոսական անձնակազմի միջին տարիքի, քոլեջում աշխատանքային ստաժի և այլն վերլուծված չեն: Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քոլեջի դասավանդող անձնակազմի միջին տարիքը կազմում է մոտավորապես 48, իսկ դասավանդողների զգալի մասն աշխատանքի երկարամյա փորձ ունի (միջինում՝ 24 տարի): Նաև պարզ դարձավ, որ վերջին տարիների ընթացքում ավելացել է Քոլեջի դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի

վարձատրությունը: Այսպես՝ 2021-2022թթ աշխատավարձը կազմել է Քոլեջի ծախսերի 72,2%, իսկ 2022-2023թթ՝ 83,8%-ը: Հավելյալ վարձատրվում են կուրսղեկները, իսկ 2023-2024 ուսումնական տարուց բարձրացվել է նաև ամբիոնների վարիչների հավելավճարը:

Քոլեջը որոշակիորեն նպաստում է դասախոսական անձնակազմի մասնագիտական առաջընթացին, մասնավորապես վերապատրաստումների ձևով, սակայն դրանք հիմնականում մանկավարժական բնույթի են:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը պարբերաբար տարբեր կերպ խրախուսում է իր աշխատակիցներին հաշվի առնելով դասավանդողների բարեխիղճ աշխատանքը, կազմակերպած բաց դասերը, միջոցառումները՝ տրվում են շնորհակալագրեր, պատվոգրեր, պարգևատրումներ հուշանվերների և դրամական շնորհումների տեսքով: Այսպես՝ հաշվի առնելով ուսանողների շրջանում իրականացրած հարցումների արդյունքները, մանկավարժական խորհրդում առաջադրվում է տարվա լավագույն դասախոսի թեկնածությունը՝ ՀՀ ԿԳՄՄՆ կամ Արարատի համայնքում կազմակերպվող միջոցառումներում քոլեջը ներկայացնելու համար: Այսուհանդերձ, քոլեջում ներդրված չեն դասախոսական անձնակազմի խրախուսման հստակ ընթացակարգեր, որոնք կսահմանեն խրախուսման դեպքերը և ձևերը, մասնավորապես ուշադրություն չի հատկացվում դասավանդողների մեթոդական աշխատանքների իրականացմանը և այս ուղղությամբ նրանց առաջընթացին:

ՄՈՒՀ-ը ունի 3 վարչական, 15 ուսումնաօժանդակ և 8 տեխնիկական աշխատող: Վերը նշված աշխատակազմի ձևավորումը իրականացվում է համաձայն ՀՀ ԿԳՄՄՆ կողմից հաստատված հաստիքացուցակի: Բոլոր վարչական և ՈՒՕ աշխատողներն առաջնորդվում են իրենց տարեկան աշխատանքային պլաններով և յուրաքանչյուր ուստարվա ավարտին հաշվետվություն ներկայացնում: Հարկ է նշել, որ գործառույթների բաշխվածությունը պայմանավորված է պաշտոնների անձնագրերով, սակայն առկա են դեպքեր, երբ աշխատակիցը ստանձնում է իր գործառույթներից դուրս պարտականություններ, օրինակ՝ կարիերայի պատասխանատուն նաև համարվում է քոլեջի արտաքին կապերի հաստատման համար պատասխանատու անձանցից մեկը, լաբորանտների աշխատանքային պլաններում տեսանելի չէ թե, որ լաբորատորիաների համար է պատասխանատու: Համաձայն ուսանողների շրջանում ՈԱ պատասխանատուի կողմից իրականացրած հարցումների արդյունքների, նրանք հիմնականում գոհ են ՈՒՕ կազմի աշխատանքներից, այսուհանդերձ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակիցների կոմպետենցիաների, ինչպես նաև կարիքների գնահատում քոլեջը չի իրականացնել:

**Դատողություններ:** Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջի վարած՝ դասախոսական կազմի որակյալ կադրերով համալրելու քաղաքականությունը, որը ռազմավարական պլանավորման մաս է կազմում, իսկ իրականացումը համակարգված է հստակ ընթացակարգերով: Կարևոր է նաև, որ վերջին տարիներին մասնագետների համալրումը իրականացվում է երիտասարդ և պրակտիկ փորձառությամբ բժիշկ-դասավանդողներով, այս իմաստով, Արարատ ԲԿ-ը (և այլ բուժհաստատություններ, դեղատներ, ատամնաբուժարաններ) քոլեջի համար հանդիսանում է և մասնագետների դոնոր, և ուսանողների համար պրակտիկայի

վայր, և հետագայում աշխատավայր։ Այս փոխշահավետ համագործակցությունը բխում է ինչպես քոլեջի, այնպես էլ տարածաշրջանի շահերից և շեշտադրում է քոլեջի ուրույն դերակատարությունը տարածաշրջանի առողջապահական ոլորտում։

ՄԿԾ իրականացման համար մասնագետների նկատմամբ պահանջները սահմանելիս քոլեջն առաջնորդվում է ՊԿՉ նվազագույն պահանջներով, դրական է, որ մասնագետներ ներգրավելիս հնարավորության դեպքում իրականացվում է մրցույթ, սակայն հիմնականում պրակտիկ բժիշկները ներգրավվում են համատեղության կարգով, որը թույլ է տալիս քոլեջին առավել ճկուն լինել կադրերի համալրման ժամանակ։ Դրական է, որ աշխատանքի ընդունելիս հաշվի է առնվում աշխատանքային փորձառությունը, վերապատրաստումները և հաղորդակցման հմտությունները որպես դասավանդող, այսուհանդերձ, փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը չի սահմանել յուրաքանչյուր ՄԿԾ-ի համար անհրաժեշտ մասնագետներին ներկայացվող պահանջները։ Այդ պահանջների սահմանումը ըստ կրթական ծրագրերի թույլ կտա քոլեջին ապահովել իր ռազմավարական նպատակը՝ «որակյալ» կադրերով համալրում, այս համատեքստում կարևոր է, որ քոլեջն իր համար սահմանի մասնագիտական հստակ պահանջներ ՄԿԾ-ի արդյունավետ իրականացման համար։

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջում առկա են դասախոսական անձնակազմի գնահատման որոշ մեխանիզմներ, ինչպիսիք են հարցումներ և դասալսումները։ Մեխանիզմներից հարցումների դիտարկումը ցույց է տալիս, որ դրանք թեև իրականացվել են որոշ պարբերականությամբ և թույլ են տալիս վեր հանել ուսանողների գոհունակությունը, սակայն չեն նպաստում խորքային վերլուծությունների իրականացմանը և դասախոսների մանկավարժական և մասնագիտական կոմպետենցիաների գնահատմանը։ Փորձագիտական խումբը նշում է, որ հարցաշարերի բովանդակությունը պետք է հիմնված լինի հարցման անցկացման նպատակին համահունչ հարցադրումների ձևակերպմամբ, ակնկալվող պատասխաններով, որոնց վերլուծությունը և ամփոփումը կարող է տվյալահենք գնահատման գործիք դառնալ ՄՈՒՀ-ի համար։ Մյուս կողմից կարևոր է սոցիալական հարցման օրինաչափություններին համապատասխան գնահատել ակնկալվող պատասխանների օբյեկտիվությունը հաշվի առնելով հարցվողների քանակակազմը։ Վերոնշյալ սկզբունքների ապահովումը թույլ կտա ՄՈՒՀ-ի կիրառել հարցումները որպես դասախոսների մասնագիտական և մանկավարժական կոմպետենցիաների գնահատման և կարիքների վեր հանման միջոց։

Փորձագիտական խումբը կարևորում է, որ ՄՈՒՀ-ում առկա է ձևավորված դասալսման մշակույթ, իսկ դասալսումների արդյունքները նպաստում են դասավանդողների մանկավարժական կոմպետենցիաների կատարելագործմանը, դրական է նաև, որ դասալսումները նպաստում են սկսնակ դասավանդողների աջակցությանը և մասնագիտական առաջխաղացմանը, որոշակիորեն նաև հիմք են հանդիսանում հետագա վերապատրաստումների ուղղորդման համար։ Այս համատեքստում կարևոր է, որ քոլեջում առկա դասավանդման մեթոդական լավ փորձի տարածման միջոց են հանդիսանում փոխադարձ դասալսումները, այսուհանդերձ, տարբեր ստորաբաժանումների կողմից իրականացվող դասալսման արդյունքների իրար հետ չեն փոխհամաձայնեցվում և փոխկապակցվում, արդյունքում դրանք չեն

նպաստում դասախոսների գնահատման միասնական համակարգի ձևավորմանը, որտեղ կհամադրվեն տարբեր մեխանիզմների արդյունքները:

Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջի կողմից սկսնակ դասավանդողներին տրվող մեթոդական աջակցությունը, տեսանելի են որոշ սկզբունքային մոտեցումներ, ինչպիսիք են դասալսումները, մեթոդական ուղղորդումները, վերապատրաստման առաջնահերթությունը: Քոլեջը դեռևս չի փաստաթղթավորել այդ գործընթացները, իսկ դրանց արդյունավետությունը հնարավոր չէ գնահատել, քանի որ տեսանելի չէ օրինակ՝ քանի սկսնակ դասախոս է ստացել աջակցություն: Ընթացակարգերի մշակումը և ներդրումը թույլ կտա քոլեջին փաստաթղթավորել գործընթացները և ապահովել հիմքեր արտաքին գնահատման համար՝ բարելավելով առկա գործընթացները:

Փորձագիտական խումբը դրական է համարում, դասախոսական կազմի կայունության ցուցանիշների առկայությունը քոլեջում, ինչպես նաև երիտասարդ կադրերով համալրման ձգտումները, սակայն իր համակազմի տվյալների լիարժեք ինքնավերլուծություն քոլեջը չի իրականացրել, օրինակ ինչպես միջին աշխատանքային ստաժ, միջին տարիք և այլն: Քոլեջում կիրառվող խրախուսման միջոցները՝ բացի արդեն իսկ առկա մեխանիզմներից, պետք է փոխկապակցվեն նաև մասնագիտական առաջընթացի ցուցանիշների և դասախոսների գնահատման ընթացակարգերի հետ:

**Եզրահանգում:** Հաշվի առնելով, որ քոլեջը իրականացնում է դասախոսների ընտրության քաղաքականություն, նրանց կարիքների վերհանում, կարևորում է անձնակազմի համալրումը երիտասարդ մասնագետներով, ներգրավում է պրակտիկ դասավանդողների, դասալսումների միջոցով իրականացնում է դասավանդող կազմի կարիքների վերհանմանն ու կատարելագործմանն ուղղված գործողություններ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊԲՔ-ն բավարարում է չափանիշ 5-ի պահանջներին:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Արարատի պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

## VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:**

**Փաստեր:** Քոլեջն իր 2023-2028թթ. Ռազմավարական ծրագրում հետազոտության զարգացումը չի դիտարկել որպես առաջնահերթություն, չունի սահմանված նպատակներ և տեսլական, սակայն այլ ոլորտային ուղղություններում առկա են պլանավորված գործողություններ, որոնք հիմնականում վերաբերվում են ուսանողների մոտ հետազոտական գործունեության զարգացմանը, օրինակ՝ Կրթական գործունեություն ուղղության մեջ շեշտադրել

է ուսանողների հետազոտական աշխատանքների զարգացման մեխանիզմների կատարելագործման նպատակով հետազոտական խմբերի ձևավորումը տարբեր հետազոտությունների իրականացման համար: Այսուհանդերձ, դասախոսական կազմի հետազոտական կարողությունների ձևավորմանը միտված գործողությունները տեսանելի չեն քոլեջի Ռազմավարական ծրագրում:

Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջն իր գերխնդիրն է համարել կրթության որակի բարձրացումը՝ խթանելով ստեղծագործական աշխատանքը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ձեռքբերման, կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացումը:

Քոլեջը որպես հետազոտություն դիտարկում է ուսանողի կատարած հետազոտական աշխատանքները՝ ռեֆերատները, թղթապանակները, խմբային հետազոտական բնույթի աշխատանքներ, սակայն կրթական ծրագրերի կարիքներից բխող հետազոտական ուղղություններ քոլեջում դեռևս սահմանված չեն, հարկ է նշել, որ նորաստեղծ ամբիոնները նույնպես չեն հստակեցրել իրենց հետազոտական ուղղվածությունը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2022-2023 ուստարում հետազոտական բնույթի աշխատանքներ իրականացումը պիլոտային կարգով կիրառվել է «Դեղագործություն» ՄԿԾ-ի մի քանի մոդուլների («Մասնավոր դեղաբանություն», «Դեղերի դեղատնային տեխնոլոգիա», «Ֆարմակոգնոզիա», «Ապրանքագիտություն», «Պատմություն», «Ռուսաց լեզու») շրջանակում, հետագայում հետազոտության և ուսումնառության փոխկապակցման դրական փորձը մյուս կրթական ծրագրերում տարածելու նպատակով: Օրինակ՝ ուսանողները ուսումնասիրում են, թե բույսը որպես հումք, որ դեղաձևում և ինչպես է կիրառվում, նշում են ցուցումներն ու հակացուցումները: Համաձայն ինքնավերլուծության՝ իրականացված հետազոտական աշխատանքների նպատակը միջառարկայական կապերի ստեղծումն է, սակայն միջառարկայական հետազոտությունների նախադեպ առկա չեն:

Հետազոտական աշխատանքների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանցում ներդրված չեն միասնական մոտեցումներ, տարբեր են տիտղոսաթերթերը, երբեմն բացակայում է բովանդակությունը, եզրակացությունը, գրականության ցանկը և այլն: Միաժամանակ, հետազոտական աշխատանքների մեծ մասը նույնաբովանդակ են, չեն պահպանվում ակադեմիական ազնվության նորմերը, եզրակացությունները չեն արտահայտում հետազոտության արդյունքները: Ռեֆերատները, որոնք իրականացվում են բացակայությունների լրացման նպատակով իրենց բովանդակությամբ չեն կարող դիտարկվել, որպես հետազոտական բնույթի աշխատանքներ:

Քոլեջում սահմանված չեն նաև հետազոտական աշխատանքների և ռեֆերատների կատարման և գնահատման չափանիշներ, հստակեցված չէ նաև խմբային հետազոտությունների գնահատման չափանիշները: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ որոշ դեպքերում ուսանողների իրականացրած հետազոտությունը ինքնանպատակ է, օրինակ պատմություն առարկայի շրջանակներում ուսանողները իրականացրել են փաստահավաք ուսումնասիրություն, որը չի գնահատվել և չի տպագրվել որպես հետազոտություն, չի հանդիսացել նաև որպես առարկայի ընթացիկ գնահատման բաղադրիչ:

Ուսանողներին տրվող առաջադրանքներում առկա են որոշ հետազոտական բնույթի առաջադրանքներ և խնդիրներ, որոնք նպաստում են ուսանողների վերլուծական մտածողության զարգացմանը: Օրինակ՝ «Քույրական գործ» մասնագիտության հատուկ մասնագիտական մոդուլների քննական տոմսերում ներառվում են իրավիճակային խնդիրները:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը չունի հստակ սահմանված պահանջներ դասախոսների հետազոտական և մեթոդական աշխատանքներ իրականացնելու ուղղությամբ, բացակայում են խրախուսման և ներգրավման մեխանիզմները, ըստ այդմ հետազոտական գործունեությունը գտնվում է դասախոսի անհատական նախաձեռնության և հետաքրքրությունների շրջանակում:

ՄՈՒՀ-ում առկա չեն ինչպես հետազոտական գործունեության շրջանակներում տեղական գործընկերների հետ համագործակցության, այնպես էլ հետազոտության միջազգային նախադրյալներ:

**Դատողություններ:** Փորձագիտական խմբի դիտարկմամբ չնայած քոլեջում իրականցվում են հետազոտական բնույթի որոշ աշխատանքներ, որոնք նպաստում են ուսանողների ստեղծագործական կարողությունների, վերլուծական մտքի զարգացմանը, սակայն հետազոտությունների իրականացման ուղղությամբ տեսլականի և հստակ քաղաքականության սահմանման, հետազոտությունը որպես ռազմավարական նպատակ դիտարկելու պարագայում քոլեջը կկարողանա հստակեցնել հետազոտական ոլորտում իր զարգացման ուղղությունները, ինչը կնպաստի ՈԱԾ-ի 5-րդ մակարդակի պահանջների լիարժեք ապահովմանը: Հետազոտական կարողությունների զարգացմանը էապես կնպաստի նաև հետազոտական աշխատանքների կատարման չափանիշների սահմանումը: Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի կողմից ուսանողների, դասախոսների հետազոտական կարողությունների գնահատումը՝ քոլեջի հետազոտական ներուժը բացահայտելու և հետազոտության նշաձող սահմանելու համար:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջն ունի հետազոտական բնույթի աշխատանքների բազմազանեցման, ինչպես նաև դրանց գնահատման հստակ չափանիշների սահմանման անհրաժեշտություն, ինչը կնպաստի ուսանողների ներգրավմանը հետազոտական գործընթացում: Փորձագիտական խումբը գնահատում է քոլեջի որոշակի քայլերը հետազոտական բնույթի աշխատանքներ իրականացնելու ուղղությամբ, սակայն շեշտադրում է նաև հետազոտական աշխատանքների իրականացման հստակ նպատակների և միասնական ձևաչափի սահմանման անհրաժեշտությունը՝ ակադեմիական ազնվության պահպանման հենքով:

Հետազոտական ուղղության զարգացման համար փորձագիտական խումբը գտնում է, քոլեջում անհրաժեշտ է նաև խթանել դասախոսների ներգրավվածությունը հետազոտական գործընթացներում, ինչի համար կարևոր է խրախուսման մեխանիզմների ներդրումը քոլեջում, ինչպես նաև քոլեջում հետազոտական միջավայրի համար պայմանների ստեղծումը, ինչը կնպաստի թե դասախոսների, թե ուսանողների, և թե ուսումնաօժանդակ անձնակազմի կողմից հետազոտությունների, ուսումնասիրությունների իրականացմանը և քոլեջում դրական փորձերի ներդրմանը:

**Եզրահանգում:** Հաշվի առնելով, որ Արարատի բժշկական պետական քոլեջը չունի հետազոտական ուղղության զարգացման համար սահմանված տեսլական, քաղաքականություն, հետազոտության զարգացումը չի դիտարկում որպես Քոլեջի զարգացման ուղղություն, չի գնահատել իր հետազոտական աշխատանքներ կատարելու մասնագիտական ներուժը, դասախոսները ներգրավված չեն հետազոտական աշխատանքներում, ուսանողների առաջադրանքներում թույլ է հետազոտական/վերլուծական բաղադրիչը, այս ուղղության զարգացման համար չի ներդրել խրախուսման մեխանիզմներ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում չափանիշ 6-ի պահանջներին:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Արարատի պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

## VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:**

**Փաստեր:** ՄՈՒՀ-ը իր ռազմավարական ծրագրում որպես առաջնահերթություններ առանձնացրել է շենքային պայմաններ, նյութատեխնիկական բազա և ֆինանսատնտեսական գործունեություն ոլորտային ուղղությունները, որտեղ կարևորում է նյութատեխնիկական բազայի արդիականացում, լսարանների, լաբորատորիաների տեխնիկապես վերազինումը, ուսումնական միջավայրի բարելավումը, ինչպես նաև ֆինանսական ներհոսքերի բարելավումը և դիվերսիֆիկացիան, որոնք արտահայտվում են ՌԾ-ում վերոնշյալ նպատակների իրագործմանը ուղղված գործողություններում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը վերջին տարիներին բարելավել է շենքային պայմանները (հիմնովին վերանորոգվել է պետական միջոցներով), ներկայումս ունի բարեկարգ երկհարկանի մասնաշենք (825մ$^2$ տարածքով, 0.3067 հա հողակտորով), որտեղ առկա է 15 լսարան, որից 3-ը կաբինետ-լաբորատորիաներ, 8 կաբինետ և 2 օժանդակ տեխնիկական սենյակներ, 3 սանհանգույց, գրադարան, բուժկետ, յուրաքանչյուր հարկում 1-ական ընդարձակ նախասրահներ՝ ուսանողների հանգստի համար: Քոլեջը քիմիայի և ֆիզիկայի լաբորատորիաների բացը լրացնում է ավագ դպրոցի հետ համագործակցության միջոցով:

Քոլեջը ապահովված է WIFI կապով, առկա է երկու պրոյեկտոր, իսկ ՀՀ ԿԳՄՄՆ քոլեջին է տրամադրել անհատույց օգտագործման ժամանակակից համակարգիչներ (15-ը), որոնք արդեն իսկ կիրառվում են ինչպես համակարգչային օպերատորություն առարկայի դասավանդման համար, այնպես էլ դասավանդողների կողմից, տեսասահիկներով դասի վարման համար:

Ռեսուրսների դիտարկումը ցույց տվեց, որ քոլեջի առարկայական կաբինետները որոշակիորեն համալրված են անհրաժեշտ ցուցապաստառներով, որոնք մշակվում են նաև

ուսանողների կողմից, (օրինակ՝ տարբեր օրգանների անատոմիա) առկա են մուլյաժներ (անատոմիայի կաբինետ), գործիքներ սարքավորումներ: Այդուհանդերձ «Քույրական գործ» և «Մանկաբարձական գործ» մասնագիտությունների, գործնական հմտությունների ձեռք բերման համար առկա ուսումնական մուլյաժները ֆիզիկապես մաշված են (օրինակ՝ տիկնիկ, ձեռքի մուլյաժ, և այլն): Հարկ է նշել, որ ներկա փուլում նույն մասնագիտությունների գործնական հմտությունները մեծամասամբ ուսանողները զարգացնում են հիվանդանոցային պայմաններում հաստատության բուժառուների հետ աշխատելու ընթացքում (Արարատ ԲԿ), որտեղ կան նաև համապատասխան մուլյաժներ և կաբինետներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը պատրաստվում է աստիճանաբար համալրել առարկայական կաբինետները անհրաժեշտ ժամանակակից ուսումնական պարագաներով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը պատրաստվում է աստիճանաբար համալրել առարկայական կաբինետները անհրաժեշտ ժամանակակից ուսումնական պարագաներով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ քոլեջը ունի որոշ ենթակառուցվածքների բացակայությամբ պայմանավորված խնդիրներ, որոնցից է մարզադահլիճի և միջոցառումների դահլիճի բացակայությունը, ըստ այդմ ֆիզկուլտուրայի դասերը անցկացվում են հարակից դպրոցի մարզադահլիճում (պայմանագրային հիմունքներով): Թեև քոլեջի մասնաշենքը հիմնանորոգված է, սակայն լսարանային ֆոնդի սղության պատճառով որոշ դասեր անցկացվում են նախկին պոլիկլինիկայի մասնաշենքում, որը բարեկարգման կարիք ունի: Քոլեջում առկա SS միջոցները սակավաթիվ են, Ներքին շահակիցների կողմից կարևորվեց նաև քոլեջում բուֆետի կարիքը:

Քոլեջի գրադարանը, ընթերցասրահը և գտնվում է կարիերայի կենտրոնի հետ համատեղ նույն տարածքում, որը մշտապես հասանելի է ուսանողների համար: Քոլեջում առկա է թվով 3123 գրականություն, այդ թվում հատուկ մասնագիտական գրականությունը, որը բաշխված է ըստ առարկայական կաբինետների: Քոլեջը պարբերաբար իր միջոցներով ավելացվում է մասնագիտական գրադարանային ֆոնդը, այսուհանդերձ ոչ բոլոր մասնագիտությունների համար է առկա արդիական նոր գրականություն: Գրադարանային ֆոնդի միջոցներով, 2020-2021 ուստարում գրադարանը ձեռք է բերել 35 նոր դասագիրք, իսկ 2021-2022թ.՝ 60 դասագիրք: Հանրակրթական առարկաների անհրաժեշտ գրքերի ձեռք բերման համար քոլեջը նաև համագործակցում է հանրակրթական դպրոցների հետ, ինչպես նաև դասագրքերի էլեկտրոնային շտեմարանի հղումը (QR) փակցված է քոլեջի միջանցքերում: Մասնագիտական էլեկտրոնային գրադարանների ՄՈՒՀ-ը չի անդամակցում:

Քոլեջի ֆինանսական ռեսուրսների պլանավորումը իրականացվում է տարեկան կտրվածքով: Քոլեջի ֆինանսական մուտքերի 69%-ը ձևավորվում է պետպատվերով սովորող ուսանողների ծախսերի հատուցումից և 31%-ը ուսանողների վարձավճարներից: Քոլեջի ֆինանսական ծախսերի 82.3%-ը կազմում է աշխատավարձի ֆոնդը, 5.6%-ը կոմունալ ծախսերը և 12.1%-ը այլ ծախսերը այդ թվում շենքի բարենորոգման աշխատանքներ, գույքի ձեռքբերում, լաբորատոր պայմանների ստեղծում և այլն, որոնք ձևավորվում են հաշվի առնելով քոլեջի ֆինանսական հնարավորությունները և ստորաբաժանումների կողմից ներկայացվող պահանջագրերը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջը պարբերաբար

ֆինանսական միջոցներ է հատկացնում տարբեր կրթական ծրագրերի համար անհրաժեշտ ռեսուրսների ապահովման համար, օրինակ՝ անօրգանական քիմիայի և դեղագործական քիմիայի լաբորատորիաները վերազինվել են անհրաժեշտ գույքով, ձեռք են բերվել նյութեր սարքավորումներ, արդեն իսկ կառուցվել է ՌԾ-ում (2023-2028թթ) նախատեսված բացօթյա մարզահրապարակը «ֆիզկուլտուրա» առարկայի պարապմունքների համար, որի համար իրենց ակտիվ ներդրում են ունեցել ԿԽ-ի անդամները: Քոլեջի միջոցներով «Կոսմետոլոգիա» ՄԿԾ-ի իրականացման համար ձեռք է բերել անհրաժեշտ գույք, «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության համար ուսանողների թվաքանակին համապատասխան մշտապես ապահովվում են անհրաժեշտ նյութեր և սարքավորումներ:

Քոլեջը ունեցել է կարճաժամկետ ծրագրերի իրականացման փորձառություն, որոնք լրացուցիչ ֆինանսական մուտքեր են ապահովել («Դիմահարդարում» ծրագիրը ՄՄԾ հետ համատեղ թիրախային խմբի համար), սակայն ներկա փուլում այդպիսի գործող ծրագիր չկա: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ որպես ֆինանսական միջոցների բազմազանեցման աղբյուր քոլեջը հիմնականում դիտարկում է կարճաժամկետ ծրագրերի իրականացումը, որոնք դեռևս մշակման փուլում են:

ՄՈՒՀ-ը ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն չի մշակել, ֆինանսական միջոցները բաշխվում են ըստ բյուջեի նախագծի, հաշվի առնելով եկամուտները և ծախսերի նախահաշիվը, որը քննարկվում է ԿԽ-ում, հաստատվում է տնօրենի և հաշվապահի կողմից: Քոլեջը բյուջեի պլանավորումը դեռևս փոխկապակցված չէ ՌԾ ոլորտների հետ, մասնավորապես տեսանելի չէ բյուջեում առանձին հոդվածներով հատկացումները տարբեր ռազմավարական նպատակների իրականացման համար, ինչպիսիք են՝ վերպատրաստումները, բարենորոգման աշխատանքները, նյութատեխնիկական բազան:

Հաշվի առնելով, որ քոլեջի ֆինանսական մուտքերի հիմնական աղբյուրը ուսանողների վարձավճարներն են (անվճար և վճարովի), ապա վերջին տարիների (հինգ տարի) ուսանողների թվաքանակի կայուն աճը, նպաստել է քոլեջի ֆինանսական հոսքերի ավելացմանը, որը որոշակիորեն ծառայում է կրթական ծրագրերի շարունակականության ապահովմանը: Այսուհանդերձ, ըստ մասնագիտությունների կրթական ծրագրերի ծախսարդյունավետության հաշվարկ քոլեջը չի իրականացրել,

Քոլեջը արտաքին փաստաթղթաշրջանառության համար կիրառում է «Mulberry»-ի համակարգը: Փաստաթղթավորման գործընթացները համակարգվում են կադրերի բաժնի կողմից, կադրերի տեսուչը իրականացնում է ուսանողների և կադրերի հաշվառումը, հետևում փաստաթղթավարման կանոնների պահպանմանը: Փաստաթղթերի արխիվացումը կատարվում է ՀՀ կառավարության որոշմամբ «Պահպանման ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկով»: Փաստաթղթաշրջանառությունը կարգավորող քաղաքականություն և ընթացակարգ քոլեջը չի մշակել, սակայն ձևավորված է ներքին պատասխանատվության շրջանակը, օրինակ՝ քոլեջի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը պատասխանատու է մատենավարության և կրթության կազմակերպման վերաբերյալ փաստաթղթերի պահպանման համար՝ ընդունելության

քննությունների անցկացման մասին հաշվետվություններ, շրջանավարտների դիպլոմներ և ատեստատների գրանցման մատյաններ:

Փորձագիտական այցը ցույց տվեց, որ միասնական տեղեկատվական հարթակ քոլեջը չունի, ներքին հաղորդակցման համար, իսկ անհրաժեշտության դեպքում կիրառվում է էլեկտրոնային փոստը:

Անդրադառնալով ՄՈՒՀ-ի միջավայրի ապահովությանը և անվտանգությանը, հարկ է նշել որ քոլեջն ունի շուրջօրյա պահակակետ, բացի այդ հերթապահում են ինչպես դասախոսները, այնպես էլ ուսանողական խորհրդի անդամները, իսկ հերթապահության գրաֆիկը փակցված է միջանցքներում, փակցված են նաև տարհանման սխեմաները, առկա է հակահրդեհային միջոցներ, շենքի անվտանգությունը բարձրացնելու նպատակով նախատեսվում է տեղադրել արտաքին և ներքին հսկողության տեսահամակարգեր: Քոլեջի բուժկետը տեղակայված է շենքի երկրորդ մուտքի մոտ, որը մշտապես հասանելի է շահակիցներին: Լաբորատորիաներում բոլոր լսարաններում առկա է օդափոխման համակարգ, փակցված են անվտանգության կանոնները, որոնք նաև մեկնաբանվում են դասավանդողների կողմից:

Ինչ վերաբերվում է հատուկ կարիքներով շահակիցներին, ապա շքամուտքում կառուցված է թեքահարթակ, իսկ առաջին հարկի սանհանգույցը հարմարեցված է տեղաշարժման խնդիր ունեցող շահակիցների համար: Քոլեջում պարբերաբար իրականացվում են տարհանման վարժանքներ, տարածքային ԱԻ՝ Արարատի մարզի փրկարար ծառայության հետ համատեղ միջոցառումներ: Քոլեջը 2022թ. ստեղծել է աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) խորհուրդ:

Քոլեջում իրականացվել են ռեսուրսներից բավարարվածության հարցումներ, ուսանողների և դասավանդողների շրջանում: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ հարցման արդյունքները էական փոփոխությունների չեն հանգեցրել, այլ գնահատող գործիքակազմ ՄՈՒՀ-ը դեռևս չի կիրառել:

**Դատողություններ:** Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջի ենթակառուցվածքների և ռեսուրսների շարունակական բարելավումը հանդիսանում է ռազմավարական առանցքահերթություններից մեկը, կարևոր է, որ քոլեջը այս ուղղությամբ իրականացրել է մի շարք առաջընթաց քայլեր, որոնցից է շենքային պայմանների բարելավումը, ուսումնական ռեսուրսների համալրումը, այդուհանդերձ դեռևս ուսումնական միջավայրի ամբողջական բարելավում քոլեջը չի իրականացրել, ինչպիսիք են առարկայական կաբինետները, ժամանակակից ուսումնական մուլյաժներով համալրումը, ՏՏ միջոցներով լսարանների համալրումը, որոնք պահանջում են որոշակի ֆինանսական ներդրումներ: Հարկ է ընդգծել, որ քոլեջն իր հնարավորությունները լիովին կիրառում է՝ ապահովելու կրթական ծրագրերի համար անհրաժեշտ ուսումնական միջավայրը, իսկ բացակա ռեսուրսները համալրում է պայմանագրային հիմունքներով համագործակցելով հանրակրթական դպրոցների, մարզադպրոցի, դեղատների և բուժ հաստատությունների հետ, ինչպես դասերի անցակցման, այնպես էլ պրակտիկաների կազմակերպման համար: Այսպիսով, գործընկերային ռեսուրսների համատեղ կիրառությամբ քոլեջը ապահովում է մասնագիտությունների համար անհրաժեշտ ուսումնական միջավայրը: Տարբեր ենթակառուցվածքներում դասերի կազմակերպումը կարող է

նվազեցնել ՄԿԾ իրականացման ընթացքի նկատմամբ քոլեջի վերահսկման գործիքակազմի արդյունավետությունը, ինչը նաև որոշակի անհարմարություններ է ստեղծում թե՛ ուսանողների, թե՛ կրթության կազմակերպիչների համար։

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը ապահովում է կրթական վերջնարդյունքների ձեռք բերման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրը, սակայն կրթական ծրագրերի իրականացման ապահովումը՝ ռեսուրսային տեսանկյունից, որոշակիորեն կախված է գործընկերներից, այս տեսանկյունից ռեսուրսների շարունակական համալրումը կարևոր ռազմավարական նշանակություն ունի քոլեջի կրթական ծրագրերի շարունակականության ապահովման համար։

Փորձագիտական խումբը ընդգծում է նաև այն իրողությունը, որ քոլեջի ֆինանսական մուտքերը սահմանափակված են միայն ուսման վարձավճարներով (վճարովի և անվճար), որը հնարավորություն չի ընձեռում քոլեջին մեծ խնայողություններ կատարել, հաշվի առնելով, որ ծախսերի 87.9%-ը միայն կազմում է աշխատավարձը և կոմունալ վճարումները։ Այս համատեքստում իհարկե դրական է ուսանողների թվաքանակի կայուն աճը, սակայն քոլեջին անհրաժեշտ է նաև որոնել ֆինանսական միջոցների ներգրավման այլընտրանքային աղբյուրներ, որոնք կնպաստեն նյութատեխնիկական բազայի ավելի արագ վերազինմանը և արդիականացմանը։

Դրական համարելով քոլեջի արտաքին ֆինանսական հաշվետվողականությունը, ինչպես կառավարման խորհրդին, այնպես էլ պետությանը, որպես ֆինանսների տնօրինման բաղադրիչ մաս, փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ քոլեջում ֆինանսական միջոցների բաշխման հստակ քաղաքականություն դեռևս ներդրված չէ, որը թույլ կտա ՄՈՒՀ-ի իրականացնել ֆինանսական պլանավորում ըստ ռազմավարական առաջնահերթությունների։ Ներկա փուլում քոլեջը իրականացնում է ընթացիկ տարվա համար կարճաժամկետ պլանավորում, որը թույլ չի տալիս քոլեջին կատարել համապատասխան հատկացումներ հեռանկարային նպատակների իրագործման համար, մյուս կողմից տարբեր գործընթացների՝ այդ թվում ՄԿԾ-ների ծախսարդյունավետությունը քոլեջը դեռևս չի որոշել, որը նույնպես կարևոր բաղադրիչ է ֆինանսատնտեսական արդյունավետ գործունեության համար։

Դրական է, որ քոլեջը ապահովում սահուն արտաքին փաստաթղթաշրջանառություն «Mulberry»-ի համակարգի միջոցով, այսուհանդերձ ներքին գործընթացներ կառավարող հստակ ընթացակարգ դեռևս ներդրված չէ։ Գործընթացների համակարգումը և միասնական համակարգերի ներդրումը թույլ կտա բարձրացնել ստորաբաժանումների միջև համագործակցության արդյունավետությունը։

Ինչ վերաբերվում է անվտանգ միջավայրի առկայությանը, ապա փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի ջանքերը այս ուղղությամբ, առկա է շուրջօրյա հսկողություն, ինչպես նաև քոլեջի դասավանդողները և ուսանողական խորհրդի անդամները իրականացնում են հերթապահություն դասերի ընթացքում, դրական է նաև, որ քոլեջի ղեկավարությունը հետամուտ է ինչպես անվտանգ միջավայրի ապահովման, այնպես էլ ուսանողների մեջ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորմանը և զերծ պահելուն վնասակար սովորությունների, կարևոր է նաև բուժկետի պլանավորումը շենքի առաջին հարկում երկրորդ մուտքի մոտ, որը

նպատակահարմար է առաջին օգնություն ցուցաբերելու համար: Շենքային պայմանները հարմարեցված են նաև հատուկ կարիքավոր ուսանողների և այլ շահակիցների համար:

**Եզրակացություն:** Հաշվի առնելով, որ քոլեջի ենթակառուցվածքների և ռեսուրսների շարունակական բարելավումը հանդիսանում է ռազմավարական առանցքահերթություն այդ թվում՝ շենքային պայմանների բարելավումը, ուսումնական ռեսուրսների համալրումը, տրամադրելով որոշակի ֆինանսական միջոցներ, ՄԿԾ-ների իրականացման համար ձևավորված է համապատասխան ուսումնական և անվտանգ միջավայր, որը համապատասխանեցված է հատուկ կարիքներ ունեցող շահակիցներին, ուսանողներն ու դասախոսները բավարարված են տրամադրվող ուսումնական ռեսուրսներից, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 7-ի պահանջներին:

**Եզրահանգում:** Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՍՆ Արարատի պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

## VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:**

**Փաստեր:** Արարատի պետական բժշկական քոլեջն ունի որոշակիորեն ձևավորված հաշվետվողականության ներքին և արտաքին համակարգ: Համաձայն ինքնավերլուծության՝ ԱՊԲՔ-ի բոլոր ոլորտների պատասխանատուները հաշվետվություններ են ներկայացնում տնօրենին, իսկ քոլեջն ուսումնական տարվա ընթացքում, օրենքով սահմանված կարգով, տարեկան հաշվետվություն է ներկայացնում ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը տվյալ ուսումնական տարվա ընդունելության արդյունքների, ամփոփիչ որակավորող հանձնաժողովների հաշվետվությունների վերաբերյալ, ինչպես նաև, եռամսյակային հաշվետվություններ է ներկայացնում ֆինանսական, կադրային, կարիերայի կենտրոնի, գնումների, ուսանողների շարժի վերաբերյալ: Քոլեջը հաշվետվություններ է ներկայացնում նաև Պետեկամուտների կոմիտեին, Ազգային վիճակագրական ծառայությանը և այլ պետական գերատեսչություններին: Տնօրենի հաշվետվությունները քննարկվում են Կառավարման խորհրդում, սակայն խորհրդի կողմից հաշվետվությունների գնահատման հստակ ցուցիչներ չեն գործում: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ԱՊԲՔ-ում կա վարից վեր հաշվետվողականության մեխանիզմ, սակայն հաշվետվությունները հիմնականում փոխկապակցված չեն ՌԾ-ի հետ, նկարագրողական են, չեն պարունակում պլանավորված և իրականացրած աշխատանքների վերլուծություններ, փաստաթղթավորման տեսանկյունից միատեսակ չեն: Համաձայն ինքնավերլուծության՝ քոլեջը հաշվետու է նաև ծնողներին: Պարբերաբար իրականացվում են ծնողական ժողովներ, որոնց

ընթացքում ներկայացվում են կատարված աշխատանքները, ներկայացվում ուսանողների բացակայությունները, քննարկվում անելիքները և լսում առաջարկներ:

Ինքնավերլուծության համաձայն՝ ԱՊԲՔ-ն ունի տեղեկատվության հասանելիությունն ու թափանցիկությունն ապահովող հարթակներ՝ քոլեջի պաշտոնական կայք էջը, ֆեյսբուքյան էջը, սակայն այցի ընթացքում պարզվեց, որ պաշտոնական կայքէջը դեռևս կազմավորման փուլում է, դեռևս չի գործում: Քոլեջի գործունեությունը, առկա մասնագիտություններն ու կատարված աշխատանքները լուսաբանվում են «Գործընթաց» տեղեկատվական վերլուծական անկախ թերթում, իսկ Կրթություն շաբաթաթերթում պարբերաբար տեղ են գտնում քոլեջում մանկավարժի թափուր հաստիքների վերաբերյալ հայտարարություններ: Քոլեջի վերաբերյալ հայտարարությունները տեղ են գտել նաև Արարատի մարզի ARARAT TV հեռուստաալիքի վազող տողում: Լուսաբանման միջոց են հանդիսանում նաև ցուցատախտակները, տեղեկատու պաստառները, հայտարարությունները:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի աշխատանքային գործունեության հասանելիության և թափանցիկության ապահովման կարևոր միջոց է ֆեյսբուքյան սոցիալական հարթակում գործող կարիերայի պատասխանատուի էջը, որում տեղադրվում են քոլեջում իրականացվող միջոցառումների, ցուցահանդեսների, վերապատրաստումների, գործատուների հետ հանդիպումների, ԷՔՍՊՈ-ներին մասնակցության, դպրոցներ այցելության, ուսանողների ձեռքբերումների, զանազան քննարկումների վերաբերյալ տեղեկատվությունները: Քոլեջը չունի հասարակության հետ կապերի պատասխանատու կամ ստորաբաժանում:

ԱՊԲՔ-ն, համագործակցելով Արարատի մարզում գործող դպրոցների հետ, ամեն տարի մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ է ունենում աշակերտների և նրանց ծնողների, ուսուցիչների հետ, ներկայացնում քոլեջում գործող մասնագիտությունները և դրանց պահանջարկը աշխատաշուկայում:

ԱՊԲՔ-ում հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներից են սոցիալական ցանցերը:

Քոլեջի ֆեյսբուքյան էջում կատարվում են հրապարակումներ, ընդունելության գործընթացի և իրականացվող միջոցառումների վերաբերյալ: Քոլեջում կազմակերպվում են բաց դռների օրեր, ծնողական ժողովներ, համայնքի ներկայացուցիչների, հասարակական կազմակերպությունների, Միասնական սոցիալական ծառայության աշխատակիցների, գործատուների հետ տարաբնույթ քննարկումներ, վեր են հանում հուզող հարցերը, քննարկվում նրանց կողմից արված առաջարկները: Պարբերաբար կազմակերպվում են միջոցառումներ, որոնց երբեմն մասնակցում են նաև ուսանողների ծնողները: Քոլեջի ՈՒԽ-ն նույնպես ակտիվ է իր ֆեյսբուքյան, ինստագրամյան էջերում, որտեղ տեղադրվում են իրենց ուսանողական միջոցառումների վերաբերյալ տեղեկատվական նյութեր:

Քոլեջը հետադարձ կապի մեխանիզմների արդյունավետության գնահատում դեռևս չի իրականացվել:

Քոլեջը հասարակությանը գիտելիքների փոխանցման համար մասնակցում է իրականացված բաց դասերի, տեղեկատվական հանդիպումների, կարողությունների կիրառման

գործնական պարապմունքների՝ ցուցադրելով իրենց գիտելիքները և հմտությունները: Օրինակ, բաց դասեր են իրականացվել Արարատի համայնքապետարանի Եվրամիության «Աղետների ռիսկերի կառավարման կարողություններ զարգացումը Արևելքի հարևան երկրների քաղաքներում» ծրագրի շրջանակներում, ապագա մայրերի շրջանում սեմինար է անցկացվել «Ներարգանդային կյանք», «Նորածնային շրջան», «Կրծքով կերակրման շրջան» թեմաներով:

Փորձագիտական այցից և շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ քոլեջի ուսանողները ակտիվ մասնակցություն են ցուցաբերել նաև տարբեր միջոցառումների, որոնք որոշակիորեն կապ ունեն իրենց մասնագիտության հետ: Օրինակ, Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ Արարատ քաղաքում գործող Զարգացման կենտրոն կրթադաստիարակչական ՀԿ կից «Աճ երեխաների զարգացման կենտրոն»-ում քոլեջի ուսանողները երեխաներին են ներկայացրել առաջին օգնություն ցուցաբերելու վերաբերյալ պարզագույն միջոցառումներ: «Իրական աշխարհ, իրական մարդիկ» ՀԿ-ի հետ համագործակցության շրջանակում քոլեջի թվով 37 ուսանողներ մասնակցել են «Երիտասարդների շրջանում ՄԻԱՎ-ի կանխարգելում հասակակիցների ներգրավմամբ» դասընթացին՝ ստանալով վկայականներ, ապա իրականացրել են միջոցառումներ քոլեջի մյուս ուսանողների, դպրոցի բարձր դասարանցիների, Արարատ քաղաքի արվեստի և մշակույթի կենտրոնի աշխատակիցների և սաների շրջանում՝ իրենց ստացած գիտելիքները փոխանցելով նրանց: Հայկական Կարմիր Խաչ ընկերության Մասիսի մասնաճյուղի հետ համագործակցության շրջանակում քոլեջի ուսանողները «Ժպիտներ» ակումբում արցախցի երեխաներին օգնել են իրականացնել դասապատրաստումներ: Հայկական Կարմիր Խաչ ընկերության առաջին օգնություն ուսումնամեթոդական կենտրոնը կամավորների համար քոլեջում իրականացրել է առաջին օգնության դասընթացներ, իսկ այդ գիտելիքները ուսանողները պարբերաբար փոխանցում են իրենց հասակակիցներին:

**Դատողություններ:** Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջի գործունեության ընթացքում ձևավորվել են ներքին և արտաքին հաշվետվողականության մեխանիզմներ, ինչը նպաստում է թափանցիկության ու հաշվետվողականության ապահովմանը քոլեջի շահակիցների համար, սակայն միաժամանակ կարևոր է ապահովել հաշվետվությունների և ՌԾ կապը, ինչպես նաև հաշվետվությունները դարձնել վերլուծական, ինչը կնպաստի առկա խնդիրների վերհանմանը՝ հաջորդիվ դրանց լուծում տալու և վերլուծված արդյունքների հիման վրա որոշում կայացնելու նպատակով: Արդյունավետության տեսանկյունից՝ փորձագիտական խումբը կարևորում է նաև հաշվետվությունների գնահատման մեխանիզմների, ցուցիչների սահմանումն ու գործարկումը:

Գնահատելի է, որ քոլեջն ունի տեղեկատվության հասանելիությունն ու թափանցիկությունն ապահովող հարթակներ, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ գործընթացների արդյունավետության բարձրացմանը կարող է նպաստել քոլեջի պաշտոնական կայքի լիարժեք գործարկումը, ինչը կապահովի քոլեջի շրջանավարտների, արտաքին կապերի և այլ գործընթացների մասին առավել ընդլայնված տեղեկատվության

տարածմանը: Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի միտումները հասարակության, այլ ՄՈՒՀ-երի հետ կապերի ամրապնդման, շարունակական զարգացման առումով:

Կարևոր է քոլեջում հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմների առկայությունը, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ առկա է գործող մեխանիզմների արդյունավետության գնահատման և բազմազանեցման անհրաժեշտություն:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը չունենալով հասարակության հետ կապի պատասխանատու, կարիերայի պատասխանատուի շնորհիվ ապահովում է գործատուների հետ հետադարձ կապը:

Գովելի է քոլեջի կողմից ծավալած ակտիվ հասարակական գործունեությունը. կամավորական աշխատանքներ, տարբեր միջոցառումների, դասընթացների մասնակցություն, որոնցում ներգրավված են նաև ուսանողները, սակայն մտահոգիչ է, որ ունենալով համապատասխան թե՛ մարդկային, թե՛ նյութական ռեսուրսներ, քոլեջը չի իրականացնում լրացուցիչ կրթական ծրագրեր, վճարովի վերապատրաստումներ, որոնք կարող են ապահովել նաև լրացուցիչ դրամական հոսքեր քոլեջի համար:

**Եզրակացություն:** Հաշվի առնելով, որ քոլեջն ունի հաշվետվողականության որոշակի մեխանիզմներ, հաշվետու է պետական գերատեսչություններին, արտաքին և ներքին շահակիցներին, ունի հասարակությանը գիտելիքներ փոխանցելու մեխանիզմներ, ակտիվորեն մասնակցում է միջոցառումների, դասընթացների, ապահովում է իր գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածումն ու թափանցիկությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊԲՔ բավարարում է չափանիշ 8-ի պահանջները:

**Եզրահանգում:** Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՍՆ Արարատի պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

## IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

**ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:**

**Փաստեր:** ԱՊԲՔ-ն իր 2023-2028թթ. Ռազմավարական ծրագրում, Համագործակցությունը և միջազգային կապերը դիտարկել է որպես ուղղություն՝ նպատակադրելով ընդլայնել քոլեջի համագործակցության շրջանակը մարզային, հանրապետական, արտասահմանյան կրթական հաստատությունների միջև, որը կնպաստի կառավարման ոլորտում և ուսումնական գործընթացում փորձի փոխանակմանը, սոցիալական և մշակութային կապերի ամրապնդմանը: Համաձայն ԻՎ-ի ՄՈՒՀ-ը ձգտում է ավելի բարձրացնել ուսուցման

արդյունավետությունը՝ ներդնելով նորարար մեթոդներ, տեղայնացված առաջավոր փորձ, այն զարգացնել և տարածել, մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում ներմուծել նորարարություններ, ծանոթանալ մանկավարժական նոր մոտեցումներին: Այդ ուղղությամբ քոլեջն իրականացրել է մարզային հաստատությունների համագործակցության շրջանակի ընդլայնմանն ուղղված որոշակի աշխատանքներ:

Քոլեջը նպատակադրել է նաև ներգրավվել միջազգայնացմանն ուղղված համալիր գործընթացներում՝ կիրառելով համագործակցության տարբեր ձևաչափեր, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ այդ ուղղությամբ դեռևս հստակ պլանավորում և քայլեր իրականացված չեն:

Քոլեջը չունի արտաքին կապերի խրախուսման քաղաքականություն և սահմանված ընթացակարգեր:

Քոլեջը դեռևս չունի արտաքին կապերի և միջազգայնացման զարգացմանն ուղղված գործընթացները համակարգող ստորաբաժանում կամ պատասխանատու անձ: Համաձայն ինքնավերլուծության՝ համագործակցության ընդլայնմանը միտված գործընթացներն իրականացվում է տնօրենի, կարիերայի կենտրոնի պատասխանատուի և ՈԱ պատասխանատուի կողմից, սակայն գործընթացների բաշխումը կանոնակարգված բնույթ չունի:

Չնայած քոլեջը չունի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածք և հստակ սահմանված ընթացակարգեր, սակայն կարողացել է ստեղծել համագործակցային միջավայր, մասնավորապես՝ Արարատ քաղաքում և մարզում: Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ելնելով փոքր տարածաշրջանի առանձնահատկությունից, իր գործունեության ընթացքում քոլեջը հատուկ ուշադրություն է դարձնում տեղական կազմակերպությունների հետ լայն համագործակցային ցանց ստեղծելուն, ինչպիսիք են բուժհաստատությունները, ատամնաբուժական և կոսմետոլոգիական կենտրոնները, դեղատները, քոլեջները, ՀՀ բուհերը, հասարակական կազմակերպությունները և այլն:

Քոլեջը պայմանագրերի և համաձայնագրերի շրջանակներում համագործակցում է մարզի մի շարք բժշկական կենտրոնների («Արարատի հիվանդանոց ԲԿ» ՓՊԸ, «Էլտա Մեդ» ԲԿ ՍՊԸ, «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ, «Սմայլ Դենտ» ՍՊԸ) հետ ուսանողների պրակտիկաների անցկացման, ինչպես նաև ճանաչողական այցերի իրականացման համար՝ բժշկական ծառայության ժամանակակից սարքավորումներին ծանոթանալու նպատակով: Քոլեջը համագործակցում է նաև Երևանի հենակետային բժշկական, Դիլիջանի պետական բժշկական, Վանաձորի, Մարտունու պետական բժշկական քոլեջների հետ: Մասնավորապես, փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ԵՀԲՔ-ում հանդիպման ընթացքում իրականացվել է դասալսումներ և քննարկումներ «Քույրական գործի հիմունքներ» մոդուլի շրջանակներում, իսկ «Ատամնատեխնիկական գործ» բաժնում՝ առարկայական խմբակի շրջանակներում, ոչ ֆորմալ դասընթաց «Գործատուին ներկայանալու հմտություններ» թեմայով, ռեսուրսների դիտարկում, հարցաշարերի և հարցաթերթիկների քննարկում, վերլուծություններ:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ չնայած այն փաստին, որ քոլեջը համագործակցում է նաև այլ ՄԿՈՒ հաստատությունների հետ, սակայն բենչմարքինգ չի իրականացրել:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի համագործակցությունը հատկապես ակտիվ է «Արարատի հիվանդանոց ԲԿ» ՓԲԸ-ի հետ ոչ միայն պրակտիկաների ընթացքում, այլ նաև որպես ուսանողների մասնագիտական գիտելիքների խորացման և լրացուցիչ հմտությունների ձեռք բերման համար: Օրինակ, ուսանողների առաջարկով քոլեջը կազմակերպել է լրացուցիչ պրակտիկա հիվանդանոցում:

Դեղագործություն մասնագիտության ուսանողների համար քոլեջը կազմակերպում է ճանաչողական և ուսուցողական այցեր («Մեդիկալ Հորիզոն»), դասախոսություններ («Արփիմեդ» և «Pharm project» ), աշխատանքի ուղղորդման հանդիպումներ ( «Ալֆա Ֆարմ»):

Քոլեջի կարիերայի ուղղորդման պատասխանատուն համագործակցում է նաև ԱՁ տնօրենների, ախտորոշիչ կենտրոնների, ատամնաբուժական կլինիկաների, Միասնական սոցիալական ծառայության հետ, որը նպաստում է շրջանավարտների՝ իրենց մասնագիտությամբ աշխատանք գտնելուն: ՀՀ Բուհերի հետ համագործակցության արդյունքում շրջանավարտները հնարավորություն ունեն շարունակել կրթությունը բակալավրի երկրորդ կուրսից:

Քոլեջը համագործակցում է նաև տարածաշրջանի դպրոցների հետ՝ անցկացնելով ուսուցողական, դաստիարակչական բնույթի հանդիպում-քննարկումներ, իրազեկման միջոցառումներ մասնագիտական կողմնորոշման նպատակով: Պարբերաբար հանդիպումներ են իրականացվել նաև Միասնական սոցիալական ծառայության, քոլեջի նախկին տարիների շրջանավարտների, ոլորտային մասնագետների, Արարատի համայնքապետարանի տարբեր ստորաբաժանումների, ԱԻՆ Արարատի մարզային փրկարարական վարչության ներկայացուցիչների հետ:

Փորձագիտական հետազոտության արդյունքներից պարզ դարձավ, որ քոլեջի համագործակցության արդյունքները վերոնշյալ հաստատությունների հետ, նպաստել է նաև շրջանավարտների՝ մասնագիտական աշխատանք գտնելուն (օրինակ՝ Արարատի հիվանդանոցում՝ 67 %, Վեդու բժշկական կենտրոնում՝ 32% և այլն):

2022 թվականից քոլեջը մասնակցում է Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող «Էրազմուս+» ծրագրին, Եվրոպական Կրթական Հիմնադրամի կողմից նախաձեռնած «Նորարար մանկավարժներ» նախագծին, որում քոլեջը տեսնում է ինչպես տեղական, այնպես էլ միջազգային նույն ոլորտների մասնագետների հետ նոր կապեր ստեղծելու, դասավանդման նորարար մոտեցումների վերաբերյալ գիտելիքներ և փորձ ստանալու հնարավորություններ: Սակայն այցի ընթացքում պարզվեց, որ քոլեջը միջազգային համագործակցությունների նախադեպեր չունի՝ չնայած միջազգայնացումը որպես առանձին ուղղություն դիտարկելուն:

Համաձայն ինքնավերլուծության՝ քոլեջը արտաքին կապերի ընդլայնման և միջազգայնացման նպատակով շեշտադրել է ուսանողների և դասախոսական կազմի օտար լեզվի իմացության մակարդակի բարելավումը: Չնայած քոլեջը նշել է դասավանդողների, վարչական աշխատողների և ուսանողների օտար լեզուներին տիրապետելու տոկոսային ցուցանիշներ, որի համաձայն ռուսաց լեզվի իմացությունը թե դասախոսական և վարչական անձնակազմի, թե

ուսանողների մոտ գնահատվել է 100%, իսկ օտար լեզուների իմացությունը՝ 50%-ից ցածր, սակայն գնահատման գործիքակազմ առկա չէ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ խնդրի առկայությունը, նրա բարելավման ուղիները դեռևս լիարժեք վերլուծված չեն, հստակ պլանավորված չէ խնդիրների վերհանման և լուծման մեխանիզմները:

Ելնելով օտար լեզվի կարևորությունից՝ քոլեջը «Դեղագործություն» մասնագիտության հեռակա բաժնում նախատեսվել է պահուստային ժամերի հաշվին ավելացնել օտար լեզվի ժամերը:

**Դատողություններ:** Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը որդեգրել է համագործակցությունների շրջանակն ընդլայնելու քաղաքականություն՝ այն դարձնելով նաև ռազմավարական ուղղություն: Հարկ է նշել, որ մարզային և հանրապետական մակարդակում քոլեջի արտաքին կապերը հաջողված են և նպաստում են ՄՈՒՀ-ի զարգացմանը, միևնույն ժամանակ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի արտաքին կապերի հաստատումը իրականացնում է իրավիճակային կառավարման սկզբունքով, չունենալով արտաքին կապերի զարգացումը խրախուսող հստակ քաղաքականություն ու ընթացակարգեր, որոնց մշակումը և ներդնումը կնպաստի գործընթացների համակարգմանը և արդյունավետության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջի արտաքին կապերի ընդլայնմանն ուղղված գործընթացներն իրենց հիմքում նպատակ ունեն նպաստելու նորարարական մեթոդական համակարգի ներդրմանը, ոլորտում դասավանդման դրական փորձի վերհանմանն ու տեղայնացմանը: Փորձագիտական խումբը հատկանշական է համարում քոլեջի համագործակցության լայն շրջանակը, որի նպաստում է նաև, որ շրջանավարտները իրենց մասնագիտությամբ աշխատանք գտնեն: Այսուհանդերձ, անհրաժեշտ է համագործակցային դաշտի ընդլայնման և մասնավորապես միջազգայնացման ուղղության զարգացման տեսանկյունից, խթանել միջազգային կապերի հաստատումը և այլ ՄԿՈՒ հաստատությունների առաջավոր փորձի ուսումնասիրությունը, որը իր հերթին կնպաստի առավել մրցունակ կադրերի պատրաստմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջի կողմից ԵՄ-ի միջոցով ֆինանսավորվող «Էրազմուս+» ծրագրի մասնակցության քայլերը, որը կարևոր նախադրյալ է միջազգայնացման զարգացման համար բարենպաստ միջավայր ստեղծելու համար՝ հատկապես ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունության ծրագրերին մասնակցությունը խթանելու տեսանկյունից, սակայն փորձագիտական խումբը տեսնում է դրանք առարկայացնելու անհրաժեշտություն: Մյուս կողմից փորձագիտական խումբը ընդգծում է, որ շահակիցների օտար լեզվի իմացության ցածր մակարդակը կարող է խոչընդոտել միջազգայնացման գործընթացների ակտիվացմանը քոլեջում: Այս տեսանկյունից ուսանողների և դասախոսական կազմի օտար լեզվի իմացության մակարդակի բարելավման ուղղությամբ քայլերի ձեռնարկումը, կնպաստի ուսանողների և աշխատակիցների ակադեմիական շարժունության հնարավորությունների ընդլայնմանը, ինչպես նաև քոլեջի մասին տեղեկատվության տարածմանը և փորձի փոխանակմանը:

Փորձագիտական խումբը շեշտադրում է քոլեջում բենչմարքինգի իրականացման մշակույթի զարգացումը, ինչը կնպաստի ոչ միայն արտաքին կապերի հաստատմանը, այլև կապահովի քոլեջի զարգացումը տարբեր ուղղություններով:

**Եզրահանգում:** Հաշվի առնելով, որ ԱՊԲՔ-ն ակտիվ համագործակցում է տեղական կազմակերպությունների հետ, ինչը դրական է անդրադառնում կրթական ծրագրերի որակի, դրանց պրակտիկ բաղադրիչի զարգացման վրա, կարևորել է համագործակցային դաշտի ընդլայնումն ու միջազգայնացումը, և փորձում է այդ ուղղությամբ իրականացնել քայլեր՝ շեշտադրելով նաև օտար լեզուների դասավանդմանը, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊԲՔ-ն ինստիտուցիոնալ կարողությունները բավարարում են ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Արարատի պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

## X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:**

**Փաստեր:** Որակի ապահովման ներքին համակարգը քոլեջում ներդրվել է 2020 թվականից՝ ստորաբաժանման ձևավորմամբ, սակայն որպես ստորաբաժանում այն ներառված չէ քոլեջի կառուցվածքում: Քոլեջն ունեցել է որակի ապահովման պատասխանատու դեռևս 2020թ.-ից, սակայն պատասխանատուն պարբերաբար փոփոխվել է: Որակի ապահովման պատասխանատուն ունի պաշտոնի անձնագիր, որը հաստատվել է 2021թ. փետրվարի 2-ի թիվ 5 նիստում:

Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջն ունի որակի ներքին ապահովման կանոնակարգ՝ հաստատված 2021թ.: Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այն փաստացի Կրթության որակի պատասխանատուի կանոնակարգն է, որը սահմանում է ՈԱ կենտրոնի նպատակը և հիմնականում պատասխանատուի գործառույթներն ու իրավունքները: Չնայած, քոլեջն իր ՌԾ-ում որպես հիմնախնդիր նշել է կրթության որակի ապահովումը, իսկ կենտրոնի հիմնական նպատակն է համարում կրթության որակի գնահատման և որակի ապահովման համակարգի և դրան վերաբերող փաստաթղթերի մշակումն ու ներդրումը, սակայն դեռևս հստակ մշակված համակարգ և փաստաթղթավորում քոլեջում առկա չէ:

Քոլեջն ունի «Հարցումների անցկացման կանոնակարգ», որում սահմանել է հարցումը՝ որպես մշտադիտարկման մեխանիզմ, հարցումների անցկացման առարկան, հարցումների հիմնական պահանջները, հարցման թերթիկի մշակման, հարցման արդյունքների մշակման և վերլուծության պահանջները: Սակայն սահմանված առարկան, պահանջները, հարցումների

անցկացման պայմանները հիմնականում հստակ սահմանված չեն։ Օրինակ, որպես հարցումների հիմնական պահանջ սահմանված է՝ «Հարցման չափանիշների կիրառումը»՝ առանց նշելու այդ չափանիշները և այլն։ Հստակ նշված չէ, թե ովքեր ինչ նպատակներով պետք է հարցումներ անցկացնեն։

Միաժամանակ վերոնշյալ փաստաթղթերում առկա են «կանոնակարգ», «կանոնադրություն», «կարգ» եզրույթների կիրառման խնդիրներ։

Ինքնավերլուծությանը կից ներկայացված «Հարցումներ» փաթեթի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հարցումները կարիքներ վերհանող չեն (օրինակ՝ Ինչպե՞ս եք գնահատում ուսուցման այս ձևը։ Գո՞հ եք արդյոք Ձեր դասախոսի կատարած աշխատանքից և այլն), հարցումների նպատակները հստակ սահմանված չեն և դրանք ամբողջական չեն և չեն ներառում քոլեջի գործունեության բոլոր ոլորտները։ Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ քոլեջը մշակել և ներդրել է որոշակի հարցաթերթեր և 2023թ. անցում է կատարել էլեկտրոնային հարցումների անցկացման ձևաչափին («Google Forms» գործիքի միջոցով), որը ներառված էր դեռևս 2021թ. հաստատված «Հարցումների կանոնակարգում»։ Ինքնավերլուծությանը կից ներկայացված են նաև այլ փաստաթղթեր, որոնք տեղայնացված չեն։ Օրինակ՝ «դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգ»։ ՈԱ գործընթացները չեն բխում քոլեջի ռազմավարական առաջնահերթություններից։

Որակի ապահովման պատասխանատուի պաշտոնի նկարագրում սահմանված են մասնագիտական գիտելիքների և աշխատանքային փորձի նկատմամբ պահանջները, սակայն դրանց մի մասը ներկայացնում է այնպիսի կարգերի իմացություն, որը պետականորեն առկա չէ և քոլեջում նույնպես չկան, օրինակ՝ «կրթական ծրագրերի մշակման և իրականացման որակի հսկողության կարգ»։ Իսկ պարտականությունները և պատասխանատվության շրջանակը չի ներառում ՈԱ ապահովման ողջ գործընթացները։ Միաժամանակ, առկա է «կրթության որակի պատասխանատուի կանոնակարգ», որը գտնվում է գործածության մեջ։ Համաձայն ինքնավերլուծության, անհրաժեշտության դեպքում Կրթության որակի պատասխանատուն ձևավորում է անհրաժեշտ խմբեր, որտեղ գործունեություն են ծավալում թե՛ դասախոսները, թե՛ ուսանողները։ Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ դասախոսները իրազեկ չեն որակի ապահովման մեխանիզմներից, մասնավորապես՝ հարցումների արդյունքներից։

Որակի ներքին ապահովմանը միտված գործընթացների իրականացման համար քոլեջը տրամադրել է ֆինանսական ռեսուրսներ, սակայն տարեկան աշխատանքային պլաններում մարդկային ռեսուրսների ներգրավումից (պատասխանատու կատարողները) բացի այլ ռեսուրսներ նշված չեն։ Առկա տարեկան աշխատանքային պլանները 2021-2022թթ. և 2022-2023թթ. վերագրված են ՈԱ կենտրոնին, իսկ 2023-2024թթ.՝ կրթության որակի ապահովման կենտրոնի պատասխանատուին։ Որակի ապահովման պատասխանատուի պլաններում ներառված ակնկալվող արդյունքները չափելի չեն, աշխատանքների իրականացման ժամկետները՝ հստակ նշված չեն։ Օրինակ, որակի ապահովման ենթակառուցվածքի կատարելագործում, կրթության որակի բարելավում, արդյունավետ և կազմակերպված կրթական և աշխատանքային միջավայր, ՈՆԱ գործընթացների թափանցիկություն և այլն։ ՈԱ

պատասխանատուն ենթակա է տնօրենին: Առկա են տարեկան հաշվետվություններ, սակայն դրանք իրենց գործողություններով չեն համապատասխանում աշխատանքային պլաններին:

Որակի ապահովման պատասխանատուն մասնակցել է ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

Համաձայն ինքնավերլուծության՝ քոլեջը ներքին շահակից համարում է ուսանողներին, դասախոսական և վարչական կազմին, իսկ արտաքին շահակից՝ դիմորդներին, ծնողներին, շրջանավարտներին և գործատուներին, որոնց ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներին քոլեջը հիմնականում ապահովում է հարցումների միջոցով: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ չնայած առկա են ներքին և արտաքին շահակիցներին ուղղված մի շարք հարցաթերթեր, սակայն ոչ բոլորն են ներդրվել կամ փորձարկվել: Օրինակ, արտաքին շահակիցների (շրջանավարտ, ծնող) շրջանում հարցումների իրականացման համար առկա են միայն մշակված հարցաթերթեր: Մասնավորապես, իրականացվել են հարցումներ դասախոսների շրջանում՝ տնօրինության և ստորաբաժանումների աշխատանքներից դասախոսների բավարարվածության և տեղեկացվածության վերաբերյալ: Հարցմանը մասնակցել է 14 դասախոս:

Քոլեջում ուսանողների շրջանում իրականացված հարցումները բովանդակային առումով վերաբերում են՝ ուսումնառության, կրթադաստիարակչական, դասախոսների գնահատման, դասախոսի աշխատանքից ուսանողների բավարարվածության, դասախոսի վերաբերմունքի, դիդակտիկ նյութերի կիրառման, պրակտիկաների օգտակարության, քոլեջում առաջացած դժվարությունների և այլ հարցերի, վերաբերյալ: Առկա են քոլեջից ուսանողների բավարարվածությունը ստուգող մի շարք նույնաբովանդակ հարցաթերթեր, որոնք ևս վերլուծված չեն: Քոլեջում առանձին հարցում է իրականացվել նաև պրակտիկաների արդյունքների ուսումնասիրության վերաբերյալ, որին մասնակցել են 6 ուսանող: Հարցումներ է իրականացնում նաև կարիերայի կենտրոնի պատասխանատուն, մասնավորապես՝ շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ: Նշված հարցումներն իրականացվել են էլեկտրոնային ձևաչափով՝ «Google Forms» գործիքի միջոցով: Հարցումների ժամանակահատվածը պարզ չէ, առկա են միայն քանակական վերլուծություններ:

ՈԱ համակարգը քոլեջում ձևավորման և ներդրման փուլում է: Քոլեջը որակի ապահովման համակարգի համեմատական վերլուծություն չի իրականացրել: Չնայած համագործակցել է որոշ քոլեջների հետ, ուսումնասիրել տարբեր քոլեջների և բուհերի կայքերում հրապարակված փաստաթղթերը, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջը համեմատական վերլուծություն իրականացնելու հմտությունների զարգացման անհրաժեշտություն դեռևս ունի: Քոլեջի տարբեր գործընթացներ գտնվում են կամ պլանավորման կամ իրականացման փուլերում, որոնց միջև առկա են նաև խզումներ: Օրինակ՝ ՈԱ աշխատանքային պլանում ներառված գործողություններն ու հաշվետվությունները հիմնականում չեն համընկնում: Առկա չեն իրականացված գործընթացների արդյունավետության գնահատման հիմքեր: Քոլեջը պարբերաբար չի հավաքագրում իր հիմնական ոլորտներին վերաբերող լիարժեք տվյալներ՝ դրանք վերլուծելու համար: Չնայած այցի ընթացքում նշվեց հարցումների պարբերականության մասին, սակայն պարբերականությունն արտահայտող հիմքեր առկա չեն:

Քոլեջի ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատված աշխատանքային խմբով, որում ներգրավված են եղել վարչական և դասախոսական կազմի ներկայացուցիչներ: Ինքնավերլուծության ձևաչափին համապատասխան քոլեջը հավաքագրել է տեղեկատվություն, փաստաթղթեր, սակայն ինքնավերլուծությունը չունի վերլուծական բնույթ: Քոլեջն ինքնավերլուծություն կատարման փորձ չի ունեցել: Ելնելով ինքնավերլուծության ձևաչափից՝ ընթացքում վեր են հանել տարբեր խնդիրներ՝ գործընթացների իրականացման և ՈԱ ոլորտում քաղաքականության ու ընթացակարգերի առկայության վերաբերյալ: Փորձագիտական այցից պարզվեց, որ ձևաչափով պահանջվող մի շարք ցուցանիշներ վերլուծական հիմքեր չունեն: Փորձագիտական խումբը ուսումնասիրությունների համար անհրաժեշտություն է ունեցել մի շարք փաստաթղթերի, տվյալների և վերլուծությունների, որոնք դեռևս իրականացված չէ:

Քոլեջի կայքը չի գործում: Քոլեջն ունի սոցիալական ֆեյսբուքյան էջ, սակայն դրանում ՈԱ գործընթացների լուսաբանումներ իրականացված չեն:

**Դատողություններ:** Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը, կարևորելով որակի ապահովման գործընթացները, փորձել է ներդնել ՈԱ համակարգ, 2020 թվականից ունի որակի ապահովման պատասխանատուի հաստիք, մշակել և ներդրել է ՈԱ գործընթացները կանոնակարգող որոշակի փաստաթղթեր, սակայն այդուհանդերձ որակի ապահովման ամբողջական համակարգ քոլեջում դեռևս ձևավորված չէ: ՈԱ համակարգի ներդրման գործընթացն անհրաժեշտություն ունի բովանդակային և փաստաթղթային վերանայման, ինչն ավելի նպատակային ու արդյունավետ կդարձնի ՈԱ գործընթացների իրականացումը: Այս դիտանկյունից փորձագիտական խումբը կարևորում է նաև քոլեջի կողմից նմանատիպ այլ տեղական և միջազգային քոլեջների փորձի ուսումնասիրության, փորձի փոխանակման գործընթացների իրականացումը և դրանց հիման վրա ՈԱ գործուն մեխանիզմների մշակումն ու ներդրումը՝ ելնելով իր կարիքներից:

Փորձագիտական խումբը դրական է համարում որակի ապահովման պատասխանատուի ներգրավվածությունը ՈԱ բազմաբնույթ գործառույթներում, սակայն պաշտոնի նկարագրում գործառույթների հստակեցումը կարող է ՈԱ ուղղությամբ տարվող աշխատանքները դարձնել ավելի համակարգված:

Կարևոր է, որ քոլեջը կիրառում է հարցումները՝ որպես մշտադիտարկման և կարիքների վերհանման մեխանիզմ, սակայն միայն հարցումներով սահմանափակվելը չի կարող ապահովել որակի ապահովման մշակույթի ներդրումն ու զարգացումը: Միաժամանակ կարևոր է մեխանիզմների բազմազանեցումը, որոնք հնարավորություն կընձեռեն ներքին և արտաքին շահակիցներին ակտիվորեն ներգրավվել ՈԱ գործընթացներում: Կարևոր է, որ հարցումները լինեն խնդիրներ վերհանող: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը մեծ նշանակություն է տալիս նաև հարցարանների որակական բարելավմանը, հարցումների արդյունքների որակական և քանակական վերլուծություններին և դրանց հիման վրա ՈԱ գործընթացներում ՊԻԳԲ սկզբունքի պահպանմանը՝ աշխատանքների հստակ պլանավորման և դրանց համապատասխան հաշվետվությունների ներկայացման հենքով:

Չնայած հարցումների իրականացման առկայության՝ դրանց պարբերականությունը և արդյունավետության գնահատումը հնարավորություն կընձեռի գնահատման արդյունքների հիման վրա նպաստել քոլեջում բարելավման մշակույթի զարգացմանը:

Փորձագիտական խումբը գնահատում է նաև քոլեջի կատարած աշխատանքը ինքնավերլուծության իրականացման ուղղությամբ, սակայն միաժամանակ կարևորում է քոլեջի տարբեր գործընթացների վերաբերյալ տվյալների պարբերական հավաքագրման և վերլուծության գործիքակազմի ներդրման անհրաժեշտությունը քոլեջում: Կարևորվում է նաև վերլուծությունների արդյունքները տարբեր ձևաչափերով թիրախային խմբերին հասանելի դարձնելը, որոնք ՈԱ պատասխանատուի պաշտոնի նկարագրում ամրագրված չեն: Վերոնշյալը խոչընդոտում է քոլեջի գործընթացների վերաբերյալ օբյեկտիվ տեղեկատվության ապահովմանը արտաքին գնահատման գործընթացների համար: ՈԱ գործընթացների իրականացման տվյալների հավաքագրման և վերլուծության հստակ մեխանիզմների ներդնումը թույլ կտա ապահովել քոլեջի ՈԱ համակարգի կայացումը և ներքին շահակիցների շրջանում ձևավորել ՈԱ մշակույթ:

**Եզրահանգում**: Հաշվի առնելով, որ ԱԲՊՔ-ի որակի ներքին ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես նաև որակի ապահովման ներքին համակարգը դեռևս ամբողջապես ձևավորված և ներդրված չէ, հստակ սահմանված չեն որակի ապահովման կենտրոնի դերակատարումը և ՈԱ գործընթացը կանոնակարգող փաստաթղթերը, ներքին և արտաքին շահակիցների ներգրավման մեխանիզմները սակավ են, որով առկա է նրանց ոչ բավարար ներգրավվածություն որակի ապահովման գործընթացներում, առկա են տարբեր ոլորտների գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և վերլուծման արդյունավետ մեխանիզմների կիրառման և դրանց վերաբերյալ շահակիցների իրազեկվածության ապահովման, ՊԻԳԲ-ով առաջնորդման խնդիրներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱԲՊՔ-ն չի բավարարում չափանիշ 10-ի պահանջներին:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Արարատի պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

## ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

| ՉԱՓԱՆԻՇ | ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ |
|---|---|
| 1. Առաքելություն և նպատակներ | Բավարարում է |
| 2. Կառավարում ու վարչարարություն | Չի բավարարում |
| 3.Մասնագիտության կրթական ծրագրեր | Բավարարում է |
| 4. Ուսանողներ | Բավարարում է |
| 5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ | Բավարարում է |
| 6. Հետազոտություն և զարգացում | Չի բավարարում |
| 7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ | Բավարարում է |
| 8.Հասարակական պատասխանատվություն | Բավարարում է |
| 9. Արտաքին կապեր և միջազգայնացում | Բավարարում է |
| 10. Որակի ներքին ապահովման համակարգ | Չի բավարարում |

Ամսաթիվ՝ 09.02.2024

Փորձագիտական խմբի ղեկավարի ստորագրություն

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

## ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

1. **Ասյա Սիմոնյան՝** 2013թ-ին ավարտել է Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի «ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտության մագիստրոսական ծրագիրը: 2017թ.-ին ավարտել է ՇՊՀ «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (ֆիզիկական կուլտուրա)» մասնագիտության ասպիրանտուրան: Մանկավարժական գիտությունների թեկնածու է: 2005-2007թթ. աշխատել է «Գյումրու մարմնամարզիկ» ՓԲԸ-ում՝ որպես գեղարվեստական մարմնամարզության մարզիչ, 2007-ից աշխատում է Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոցում, որպես մարզիչ-մանկավարժ, 2013-ից մինչ օրս աշխատում է Շիրակի պետական համալսարանում՝ ներկայումս Սպորտի և արվեստի ամբիոնի ասիստենտ է: 2017 թվականից հանդիսանում է գեղարվեստական մարմնամարզության անհատական և խմբակային ձևերի միջազգային կարգի մրցավար: 2021թ-ից անդամակցում է ՀՀ մարմնամարզության ֆեդերացիայի գեղարվեստական մարմնամարզության մրցավարական խորհրդին: Հրատարակել է 13 գիտական հոդվածներ հանրապետական և միջազգային նշանակության պարբերականներում:

2004թ-ին ստացել է ՀՀ գեղարվեստական մարմնամարզության սպորտի վարպետի կոչում: Գեղարվեստական մարմնամարզության հանրապետական և միջազգային առաջնությունների բազմակի հաղթող և մրցանակակիր է: 2008թ. Աշխարհի գավաթի, 2010թ. Աշխարհի առաջնության և 2012թ. Աշխարհի ակումբային առաջնության մասնակից է: 2013թ-ին Մագիստրոսի կրթական ծրագրով ճանաչվել է հանրապետական «Լավագույն ուսանող» մրցույթի մրցանակակիր (սպորտի ոլորտում): 2015թ. ստացել է «Պատվոգիր» ՀԱՕԿ-ի կողմից՝ ֆիզկուլտուրայի և սպորտի բնագավառում ունեցած մեծ ավանդի, գեղարվեստական մարմնամարզությունը և օլիմպիական գաղափարախոսությունը մասսայականացնելու համար:

2. **Նարինե Միրականյան՝** 2006թ. ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի» բաժինը: 2016թ. շնորհվել է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ: 2006-2014թթ. աշխատել է որպես հանրային դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ (Վրաստան), 2014-2019թթ. աշխատել է ՀՀ ԿԳ նախարարության Կրթության ազգային ինստիտուտի Մանկավարժության գիտահետազոտական և բնագիտամաթեմատիկական առարկաների բաժիններում՝ որպես գլխավոր մասնագետ, 2019-2020թթ. աշխատել է Հյուսիսային համալսարանում՝ որպես Որակի ապահովման վարչության պետ: 2020-2022թթ. Սփյուռքի հանձնակատարի գրասենյակի «ԻԳործ» ծրագրի շրջանակում աշխատել է ՀՀ կրթության տեսչական մարմնում՝ ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչությունում, եղել է նաև ՌԳՍՊՎԳ վարչության փորձագետ: 2023թ.-ից ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Նորամուծության և

ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ում ծրագրերի ղեկավար է, 20 և ավելի գիտամանկավարժական հոդվածների հեղինակ:

3. **Կարինե Մնացականյան՝** 1989թ-ին ավարտել է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը: 1989-1990թթ-ին ավարտել է կլինիկական ինտերնատուրան: 1990-1993թթ. աշխատել է «Արաբկիր» մանկական կլինիկական հիվանդանոցում որպես բժիշկ: 2000թ-ին աշխատել է ԵՀԲՔ-ի հիգիենայի, մանրէաբանության, մաշկավեներական և վարակիչ հիվանդությունների ամբիոնում որպես դասախոս: 2003-2020թթ. աշխատել է ԵՀԲՔ-ի հիգիենայի, մանրէաբանության, մաշկավեներական և վարակիչ հիվանդությունների ամբիոնի վարիչ: 2020թ-ից աշխատել է ԵՀԲՔ-ի մեթոդիստ: Անցել է վերապատրաստումներ, արժանացել է մի շարք շնորհակալագրերի:

4. **Սյուզաննա Հակոբյան՝** Սովորել և ավարտել է Երևանի թիվ 197 հիմնական դպրոցը: 2021 թվականից սովորում է Երևանի հենակետային բժշկական քոլեջի Բուժքույրական գործ մասնագիտության 3-րդ կուրսում: 2023թ. մասնակցել է ՈԱԱԿ Ուսանողության ձայն նախագծի ուսանող-փորձագետների վերապատրաստման դասընթացին:

## ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

| | 31.10.2023թ. | Մեկնարկ | Ավարտ | Տևողություն |
|---|---|---|---|---|
| 1. | Հանդիպում քոլեջի տնօրենի հետ | 10:00 | 11:00 | 60 րոպե |
| 2. | Հանդիպում քոլեջի փոխտնօրենների հետ | 11:10 | 12:10 | 60 րոպե |
| 3. | Հանդիպում ինքնավերլուծություն կատարած խմբի հետ | 12:20 | 13:10 | 50 րոպե |
| 4. | Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ | 13:20 | 14:20 | 60 րոպե |
| 5. | Հանդիպում քոլեջի շրջանավարտների հետ | 14:30 | 15:30 | 60 րոպե |
| 6. | Հանդիպում քոլեջի կառավարման խորհրդի անդամներ հետ | 15:40 | 16:40 | 60 րոպե |
| 7. | Հանդիպում գործատուների հետ | 16:50 | 17:50 | 60 րոպե |
| 8. | Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում | 18:00 | 19:00 | 60 րոպե |

| | 01.11.2023թ. | Մեկնարկ | Ավարտ | Տևողություն |
|---|---|---|---|---|
| 1. | Հանդիպում ամբիոնների վարիչների, ներառյալ Հանրակրթական ծրագրերի բաժնի ղեկավարի հետ | 10:00 | 11:00 | 60 րոպե |
| 2. | Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (ներառյալ 3 ՄԿԾ-ները) | 11:10 | 12:10 | 60 րոպե |
| 3. | Դասալսումներ | 12:20 | 13:20 | 60 րոպե |
| 4. | Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ | 13:30 | 14:30 | 60 րոպե |
| 5. | Հանդիպում ուսանողների հետ (10-12 հոգի) | 14:40 | 15:40 | 60 րոպե |
| 6. | Հանդիպում հաստատության ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ (կարիերայի կենտրոնի պատասխանատուի, պրակտիկայի բաժնի վարիչ, գրադարանավար, հաշվապահ, կադրերի բաժնի վարիչ) | 16:50 | 17:50 | 60 րոպե |
| 7. | Փաստաթղթերի ուսումնասիրություն | 18:00 | 19:00 | 60 րոպե |

| | 02.11.2023թ. | | | Մեկնարկ | Ավարտ | Տևողություն |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Հանդիպում «Քույրական գործ» կրթական ծրագրի պատասխանատուի և դասախոսների հետ | Հանդիպում «Մանկաբարձական գործ» կրթական ծրագրի պատասխանատուի և դասախոսների հետ | Հանդիպում «Դեղագործու-թյուն» կրթական ծրագրի պատասխանատուի և դասախոսների | 10:00 | 11:20 | 80 րոպե |
| 2. | Հանդիպում «Քույրական գործ» կրթական ծրագրի ուսանողների հետ (10-12 հոգի) | Հանդիպում «Մանկաբարձական գործ» կրթական ծրագրի ուսանողների հետ (10-12 հոգի) | Հանդիպում «Դեղագործու-թյուն» կրթական ծրագրի ուսանողների հետ (10-12 հոգի) | 11:30 | 12:30 | 60 րոպե |
| 3. | Հանդիպում ՈՒԽ ներկայացուցիչների հետ | | | 12:40 | 13:20 | 40 րոպե |
| 4. | Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ | | | 13:30 | 14:30 | 60 րոպե |
| 5 | Այցելություն պրակտիկայի վայրեր | | | 14:40 | 15:40 | 60 րոպե |
| 6. | Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ | | | 15:50 | 16:30 | 40 րոպե |
| 7. | Փորձագիտական խմբի փակ հանդիպում | | | 16:40 | 19:00 | 140 րոպե |

| | 03.11.2023թ. | Մեկնարկ | Ավարտ | Տևողություն |
|---|---|---|---|---|
| 1. | Հանդիպում որակի ապահովման պատասխանատուի հետ | 10:00 | 11:00 | 60 րոպե |
| 2. | Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ | 11:10 | 12:00 | 50 րոպե |
| 3. | Փորձագիտական խմբի փակ հանդիպում | 12:10 | 13:00 | 50 րոպե |
| 4. | Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ | 13:10 | 14:10 | 60 րոպե |
| 5. | Փորձագիտական խմբի փակ հանդիպում | 14:20 | 17:30 | 190 րոպե |
| 6. | Հանդիպում ՄՈՒՀ-ի ղեկավար կազմի հետ | 17:40 | 18:00 | 20 րոպե |

## ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

| | Փաստաթղթի անվանումը | Չափանիշ |
|---|---|---|
| 1. | Նախկին Ռազմավարական ծրագրի /ՌԾ/ գնահատում: | 1 |
| 2. | ՌԾ-պլան ժամանակացույց, կատարողական 2018-2023թթ: | 1 |
| 3. | Քոլեջի կողմից իրականացված աշխատաշուկայի վերլուծություն: | 1 |
| 4. | ՈԱ հարցումների արդյունքների վերլուծություններ: | 1,10 |
| 5. | ՈԱ շահակիցների հետ հանդիպումների, քննարկումների արձանագրություններ: | 1 |
| 6. | Շրջանավարտների տվյալների բազա ըստ աշխատողների: | 1 |
| 7. | Պաշտոնների անձնագրերը/ նկարագրերը, բոլորը: | 2 |
| 8. | Վերջին 3 տարվա հաշվետվությունները / բոլոր ստորաբաժանումների, ղեկավարների: | 2 |
| 9. | Բոլոր խորհուրդների, հանձնաժողովների /տնօրինական խորհրդի արձանագրություններ: | 2 |
| 10. | Դիտարկվող 3 ՄԿԾ-ների առարկայական հանձնաժողովների աշխատանքային պլանները, նոր հաշվետվությունները 2022-2023թ.: | 2 |
| 11. | Լրացված հարցաթերթիկների օրինակներ /ՈԱ հարցումներից/: | 2 |
| 12. | Հասարակական կարծիքի վերլուծություն եթե առկա է: | 2 |
| 13. | Պետական ամփոփիչ որակավորող հանձնաժողովի արձանագրությունները: | 2 |
| 14. | Շահառուների հետ հանդիպումների, քննարկումների արձանագրություններ: | 2 |
| 15. | Փոփոխված մոդուլային ծրագիր, արձանագրություն: | 3 |
| 16. | Ընտրովի առարկաների ծրագրերը: | 3 |
| 17. | Վերջնարդյունքների գնահատման համար նախատեսված տոմսերի, թեստերի, հարցաշարերի, առաջադրանքների օրինակներ: | 3 |
| 18. | Ուսումնառության նյութի առաջադրանքների օրինակներ: | 3 |
| 19. | Հարցաթերթիկների օրինակներ դասավանդման և ուսումնառության ռեսուրսների, նյութերի արդյունավետության վերաբերյալ: | 3 |
| 20. | Պրակտիկայի օրագիր՝ մաքուր և լրացված | 3 |
| 21. | Դերային խաղերի և իրավիճակային խնդիրների օրինակներ: | 3 |
| 22. | Գնահատման թերթիկներ տարբեր առարկաներից: | 3 |
| 23. | Փոխադարձ դասալսումների ժամանակացույց: | 3 |
| 24. | Մասնագիտական կողմնորոշման Բուկլետների օրինակներ: | 4 |
| 25. | Ուսանողների կարիքների վեր հանման հարցումեր, վերլուծություններ, արդյունքների հրապարակումներ: | 4 |
| 26. | Կարիերայի կենտրոնի հարցումների վերլուծություններ: | 4 |
| 27. | Ուս խորհրդի նիստերի արձանագրություններ: | 4 |
| 28. | Վարչակազմին դիմելու Ժամանակացույց: | 4 |
| 29. | Հետազոտական աշխատանքներ Ֆարմակոգնոգիա և Դեղաձևերի տեխնոլոգիա մոդուլներից: | 4 |
| 30. | Հետազոտական աշխատանքների, անհատական աշխատանքների, ռեֆերատների օրինակներ յուրաքանչյուր մասնագիտությունից: | 4 |

| | | |
|---|---|---|
| **31.** | Առարկայական հանձնաժողովների նիստերի արձանագրություններ: | **5** |
| **32.** | Դասալսումների արձանագրություններ, վերլուծություններ, ժամանակացույց: | **5** |
| **33.** | Բաց դասերի ժամանակացույց: | **5** |
| **34.** | Վերապատրաստման փաստաթուղթ դասախոսների կազմը, թեմաները, ժամանակացույցը: | **5** |
| **35.** | Ստորաբաժանումների պլաններ-հաշվետվություններ: | **5** |
| **36.** | Վարչական և ուսումնաօժանդակ կազմի հարցումների արդյունքները: | **5** |
| **37.** | Հետազոտական աշխատանքների օրինակներ բոլոր ՄԿԾ-ների համար: | **6** |
| **38.** | Հետազոտական աշխատանք <<Դեղագործություն>> մասնագիտությամբ 301 խմբի ուսանողների կողմից իրականացված աշխատանքները: Թեման՝ <<Հակաբիոտիկներ>>, պատրաստելը. հարցաթերթիկներ, հարցաթերթիկներ, վերլուծություններ | **6** |
| **39.** | Պայմանագիր «Արարատ քաղաքի ավագ դպրոց»-ի հետ՝ քիմիայի, ֆիզիկայի լաբորատորիաների օգտագործման համար: | **7** |
| **40.** | Պայմանագիր «Արարատ քաղաքի մարզադպրոց»-ի հետ՝ «ֆիզկուլտուրա» առարկայի պարապմունքի համար: | |
| **41.** | Նավահաշիվ-ֆին- հաշվետվություններ 2023-2024, 2022-2023, 2021-2022թթ.: | **7** |
| **42.** | Ստորաբաժանումների կողմից ներկայացված վերջին պահանջագիր ռեսուրսների վերաբերյալ: | **7** |
| **43.** | Հարցումների օրինակներ/դատարկ և լրացված/,վերլուծություն: | **7** |
| **44.** | Քոլեջի նյութատեխնիկական բազան շարունակաբար վերազինելու և համալրելու հիմքեր, գնումների ակտեր: | **7** |
| **45.** | Ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման հարցումներ, վերլուծություններ: | **7** |
| **46.** | ԱՊԲՔ կանոնադրությամբ բոլոր ոլորտների պատասխանատուները հաշվետվություններ առնվազն 3 ուսումնական տարվա կտրվածքով: | **8** |
| **47.** | Դպրոցներ այցելության վերաբերյալ վերլուծություններ: | **8** |
| **48.** | Քոլեջի գործունեությունը լուսաբանվում է «Գործընթաց» տեղեկատվական անկախ թերթի օրինակներ: | **8** |
| **49.** | Տեսանկարահանված դասընթացներ: | **8** |
| **50.** | Կարիերայի պատասխանատուն համագործակցում է ԱՁ տնօրենների, դեղատնային ցանցերի, ախտորոշիչ կենտրոնների, ատամնաբուժական կլինիկաների հետ, պայմանագրեր, հանդիպումների արձանագրություններ: | **9** |
| **51.** | Ներքին և արտաքին գնահատման կարգ: | **9** |
| **52.** | Բանավոր հարցման միջոցով, կարիերայի ուղղորդման պատասխանատուի կողմից պարբերաբար իրականացված հարցումների վերլուծություններ: | **10** |

## ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Ուսումնական մասնաշենք
2. Լսարաններ
3. Առարկայական լաբորատոր լսարաններ
4. Մարզահրապարակ /քոլեջի բակում/
5. Գրադարան
6. Բուժկետ
7. Պահակակետ
8. Արարատ ԲԿ
9. Արարատի հիվանդանոց» բժշկական կենտրոն պոլիկլինիկա

## ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



## ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

1. **ԱՊԲՔ** Արարատի պետական բժշկական քոլեջ
2. **ՊՈԱԿ** Պետական ոչ առևտրային կազմակերպություն
3. **ՀՀ ԿԳՄՄՆ** Հայաստանի հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
4. **ՈԱԱԿ** Որակի ապահովման ազգային կենտրոն
5. **ՄՈՒՀ** Մասնագիտական ուսումնական հաստատություն
6. **ՈԱՇ** Որակավորումների ազգային շրջանակ
7. **ՊԿՉ** Պետական կրթական չափորոշիչ
8. **ՄԿՈՒԶԱԿ** Մասնագիտական կրթության զարգացման ազգային կենտրոն
9. **ԻՎ** Ինքնավերլուծություն
10. **ՄԿԾ** Մասնագիտական կրթական ծրագիր
11. **ԿԾ** Կրթական ծրագրեր
12. **ՌԶԾ** Ռազմավարական զարգացման ծրագիր
13. **ՌԾ** Ռազմավարական ծրագիր
14. **ԶԾ** Զարգացման ծրագիր
15. **ՈՆԱԿ** Որակի ներքին ապահովման կենտրոն
16. **ԳԱՑ** Գնահատման առանցքային ցուցանիշներ
17. **ԿԽ** Կառավարման խորհուրդ
18. **ՈՒԽ** Ուսանողական խորհուրդ
19. **ՄԽ** Մանկավարժական խորհուրդ
20. **ՊԴԿ** Պրոֆեսորադասախոսական կազմ
21. **ՈՒԱ** Ուսումնական արդյունք